



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

Ֆելիքս Բախչինյան

ՀԱՅ ԴԱՏԻ  
ՀԵՆԱՍՅՈՒՆԸ



ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 910.2  
ՊՄԴ 26.89  
Բ 216

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՈՒԽ ԱՆՄԵՂ  
ԶՈՒՆԵՐԻ ԼՈՒՄԵ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Գրքի տպագրությունը հովանավորել է Սլավոնական Պետական համալսարանի ռեկտր պարոն Արմեն Ռազմիկի Դարբինյանը:

ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ԳՈՐԾԸ  
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՍԱՐԴԿԱՅԻՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է  
ԳԱՐԵԳԻՆ Ա  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

**ԲԱՆԶԻՆՅԱՆ ՖԵԼԻՔՍ ԲԱՐՂՈՒԴԻՄԵՈՍԻ**

Բ 216 Հայ դատի հենասյունը  
Եր.: «ԳԱՄՊՐԻՆՏ» հրատ. 2006 թ. - 112 էջ:

Հեղինակն անդրադարձել է նորվեգացի գիտնական, բևեռախույզ Ֆրիտյոֆ Նանսենի կերպարին իբրև կատարյալ մարդ անհատի, փորձել է վեր հանել նրա մարդասիրության ազդակները և միջազգային գործունեությունը այդ ասպարեզում, որից էլ բխում է նրա անկողմնակալությունն իբրև հայ դատի հենասյուն: Գիրքը պարզորոշ կանգ է առնում Ֆր. Նանսենի այն մտքի վրա, որ հայ դատը շանս է՝ մարդկության մաքրագործման համար:

ՊՄԴ 26.89

**ՍԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԴՐՈՇԱԿԱԿԻՐԸ**

Սկսած իր կազմավորման շրջանից՝ առաջին հազարամյակի վերջից, նորվեգ ժողովուրդն ապրել է արդարության ու ազատության ձգտող սրտի տրոփյունով: Նրա արժանավոր զավակի՝ Ֆրիտյոֆ Նանսենի հոգում իբրև մի անտեսանելի տիրապետող ուժ, թագավորում էր հին սկանդինավյան բանահյուսությունից սերող սագաների ներքին զորությունը՝ ուղղված ազատությանն ու կապանքազերծ երջանկության փնտրտուքին:

«Ամեն գիշեր երազումս տեսնում եմ, որ ես գտնվում եմ տանը, իսկ լույսը բացվելիս սագայի հերոս Հելգեի նման նորից պետք է սպիտակ մժույզին մատած սլանամ վառ կարմիր արշալույսով ողողված ճանապարհով, բայց ոչ դեպի Վալխալայի խնդությունը, այլ սառույցների հավերժական թագավորությունը:

Հանուն քեզ, Սիգրու՛ն,  
Դուստր բարձր լեռների,  
Նավարկում է քո Հելգը  
Դեպ երկիրը վշտերի»:

Ֆ. Նանսեն «Ֆրամ»-ը Բևեռային ծովում»

ISBN 99941-42-22-4 © Ֆելիքս Բարդուղիմեոսի Բախչինյան, 2006 թ.

Սառույցների հավիտենական քազավորության մեջ փորձարկելով մարդկային մտքի հնարավորությունները՝ մխրճվելու համար Տիեզերական Գոյի խորքը, ուր ադամանդի պես շողում է մարդ լինելու երջանկությունը, Նանսենն, այնուամենայնիվ, չնայած շշմեցուցիչ հաջողություններին, թողեց նավարկությունը: Նա ոտք դրեց ցամաքին, և որքան առաջացավ «դեպի երկիրը վշտերի», այնքան ահով նկատեց, թե կապանքների ինչ զագրելի հնարներ է հայտնաբերել մարդկային միտքը, կաշկանդելու համար ինքն իրեն՝ որով էլ փակել է դեպի մարդ լինելու երջանկությունը տանող ճանապարհը: Նանսենը կանգ չառավ, այլ ճեղքելով այն պատը, որ բարձրացել էր տառապյալ ժողովուրդների ու նրանց փրկության միջև, առաջացավ, գոհալուծությունների գնով բարձր պահելով մարդկային արժանապատվության գաղափարը:

«... Եթե մի հայացք գցենք նրա աշխատանքին, ապա մեր միտքը փակուղու մեջ է ընկնում: Մենք չենք պատկերացնում այդ տեսարանը, մեր առջև միայն մերկ թվեր են: Բարեգործության սեղմ շրջանակում, ավելի խոշոր մասշտաբի բարերարությունը, դա հասկանալի է: Բայց աշխատել, նպատակ ունենալով սովից փրկել մի ամբողջ աշխարհամասի բնակչություն, միլիոնավոր մարդկանց, այստեղ արդեն այնքան ահեղի չափեր են, այնքան տարաբնույթ դետալներ, որ մեր միտքն անգոր է դա ընկալել:

...Հիշենք նրա դահուկային արշավը Գրենլանդիայի միջով, որն իրազարժեց, երբ դեռ պատանի էր, գրեթե մանչուկ: Նա որոշեց, որ այնտեղ, ինտավոր հյուսիսում, ուր կործանվում էին թանկարժեք էքսպեդիցիաները՝ հանդերձավորված հզոր տերությունների կողմից, այնտեղ օգնության կարող էր հասնել միայն նորվեգացի սպորտսմենը, որ սովոր էր ձյուններին ու սառույցներին: Եվ նա ապացուցեց իր ճշմարտարացիությունը, ճեղքեց սառույցները և այդ արշավը ուղեկիչ հանդիսացավ արկտիկ հետազոտությունների մեջ:

Հիշում ենք նրան արդեն հասուն տղամարդ, որն ստեղծեց հոսանքի գոյության գիտական թեորեան, որն անցնում էր Հյուսիսային բևեռի միջով, արևելքից՝ արևմուտք: Գրեթե բոլոր հետազոտողները գտնում էին, որ նա սխալվում է: Բայց նա վտանգի էր ենթարկում իր կյանքը՝ թեորեանի հաղթանակի համար: Նա սառցափակվելով դրեյֆեց հոսանքի ուղղությամբ, Հյուսիսային բևեռի միջով դեպի արևմուտք ... Եվ հոսանքը նրան դուրս բերեց այնտեղ, ուր պետք էր:

Մի՞թե այդ նույնը չենք տեսնում նաև վերջին շրջանում: Հոսանքի գոյությունը, որին քչերն էին հավատում, Նանսենին կրկին դուրս բերին հարկավոր վայրում: Դա մարդասիրության խոր հոսանքն էր հաստ սառցաշերտի ներքո, ուր սառցակալել էին ամբողջ պետություններ և առան-

ձին անհատներ իրենց առօրյա պայքարով և կյանքային ճախորդություններով: Նա հավատաց այդ հոսանքի ուժին, որն էլ օգնեց իրեն հաղթահարելու շատ դժվարություններ»: Ներկայացնելով Նորբյուսյան կոմիտեի ներկայացուցիչ Ֆ. Ստանգի այս ելույթը Խաղաղության Նորբյուսյան մրցանակը Նանսենին հանձնելուց առաջ, մուրալի վրա մարդասիրությունը քաղաքականություն դարձրած մեծ մարդու դուստր Լիվ Նանսեն Հեյերը հոր մասին հուշագրությունում ավելացնում է նաև Ստանգի ամփոփիչ նախադասությունը՝ «Թող այսուհետև մարդասիրության խոր հոսանքը առաջնորդի մեզ»:

Մարդասիրության հոսանքով Ֆրիտյոֆ Նանսենը փորձում էր խաղաղությունը տեղափոխել բարության նավով:

«Ինքնագոհության համառ ներկայացուցիչ քաղաքագետները մեզ երազողներ, բարերարներ, սենտիմենտալ իդեալիստներ են համարում միայն նրա համար, որ բարուն ենք հավատում: Թող որ մենք դյուրահավատ ենք, բայց ըստ իս, դա այնքան էլ վտանգավոր չէ: Բայց նրանք, ովքեր համառորեն ամփոփվում են իրենց քաղաքական ծրագրերով և դրանցով պատնեշվում տառապյալ մարդկանցից, միլիոնավոր սովյալներից, մահացող մարդկանցից՝ ահա թե ով է կործանում Եվրոպան:

...Մենք քայլում ենք բարբարոսության տանող ճանապարհով... Հասել ենք արդեն նրան, որ միանգամայն հանգստությամբ կարող ենք խոսել ողջ ժողովուրդների կործանման մասին: Փրկության միջոց գտնելը հեշտ չէ, բայց Ազգերի լիգան հուսադրում է մեզ: Եթե դա էլ կողմ լինի, ուրեմն ամեն բան կորած է»: (Лив Хансен Хейер “Книга об отце” 1971)

Ազգերի լիգայի հանդեպ վստահության կոչը Նանսենի նորբյուսյան ելույթի հիմնական գաղափարն էր, որը քիչ տարիներ հետո արդեն փոխեց իր բնույթը, ստիպելով մեծ մարդասերին ուժերի տասնապատիկ լարումով փրկության այլ միջոցներ գտնելու տառապող մարդկության համար:

Որտեղի՞ց են միջազգային մարդասիրական ոլորտում Ֆր. Նանսենի թափած ջանքերի ազդակները: Հետագայում այս խնդիրն է շոշափում նաև Նանսենի հայրենակից Բյորն Էզգը, 1994 թ. հոկտեմբերի 10-ին Նորվեգիայի Գիտությունների և գրականության ակադեմիայում Նանսենի հիշատակին կարդացած դասախոսության մեջ:

Բյորն Էզգ - Ծնվել է 1918 թ.: Ակտիվորեն մասնակցել է Նորվեգիայի հասարակական կյանքին և՛ ռազմական, և՛ մարդասիրական աշխատանքների ոլորտում: Ինչպես Նանսենը, նա ևս մեծ ներդրում ունի ազգերի միջև խաղաղության հաստատման գործում:

Բյորն Էզգը ձեռքակալվել է 1942 թ. նացիզմի դեմ պայքարելու ժամանակ և մինչև 1945 թ. անցկացրել գերության մեջ, ծայրահեղ դաժան պայմաններում: Պատերազմի ավարտից և փրկվելուց հետո ծառայել է Նոր-



վեգիայում, ՆԱՍՕ-ի շտաբում, Փարիզում: 1961 թ. դեկավարել է Ազգերի Միության միսիան Կոնգո՝ որպես ռազմական հետախույզության պետ: Եղել է Նորվեգիայի դեսպանության ռազմական կցորդը Մոսկվայում, ՆԱՍՕ-ի Պաշտպանության ակադեմիայի պետի տեղակալը Հոնոմում:

Բյորն Էզգի ռազմական գործունեությունն ուղեկցվել է աշխարհի վրա մարդասիրության ու խաղաղության պահպանմանն ուղղված ջանքերով: Այդ առումով եղել է Նորվեգական Կարմիր Խաչի նախագահ, աշխատել նաև ԺճԼԻ Կարմիր Խաչի ինստիտուտի վարչությունում: Նա Փարիզում Վետերանների համաշխարհային ֆեդերացիայի նախագահն էր, որը գործում էր աշխարհի 74 երկրներում: Հիշատակելի է Ֆեդերացիայի միսիան 1992 թ. հանուն նախկին Հարավսլավիայի հաշտեցման: Ստացել է մի շարք նորվեգական և միջազգային պարգևներ:

Ըստ Բյորն Էզգեի «Ֆրիտյոֆ Նանսեն» աշխատության

Միջազգային խաղաղության հաստատման գործում մեծ ներդրումներ ունեցող Բյորն Էզգը խոստովանում է. «Ֆրիտյոֆ Նանսենն ինձ համար հանդիսացել է ոգեշնչման աղբյուր ողջ կյանքիս ընթացքում՝ թե՛ պատերազմում, թե՛ խաղաղության ժամանակ»: Այնուհետև Բյորն Էզգը կանգ է առնում այն կարևոր գաղափարի վրա, ըստ որի Նանսենն առաջինն էր մեր ժամանակներում, որ չքավորին օգնության ապահովումը կարեկցանքի աստիճանից հասցրեց գործնական քաղաքականության, իսկ սովորական անձնական բարեգործությունը՝ պետական ակտի մակարդակի:

«Ես ցնցված եմ մարդկային կյանքի նկատմամբ Ֆրիտյոֆ Նանսենի վերաբերմունքի և Կարմիր Խաչի շարժման նպատակների մնացորդներից, - ասում է Բյորն Էզգը, - և սա է պատճառը, որ պատմական աղբյուրների ուսումնասիրությունն ինձ տարավ ԺճԼ»:

Այստեղ՝ ԺճԼում էին Կարմիր Խաչի և Ազգերի լիգայի արխիվները, որոնց ուսումնասիրությունից հետո Բ. Էզգը Նանսենի մարդասիրական նվաճումները բաժանեց երեք հիմնական խմբի.

1. 1917-18 թ. թ. ԱՄՆ-ից սննդի պաշարներ Նորվեգիա առաքելու միսիան:

Անցնելով դաշնակից ուժերի կողմը և մտնելով պատերազմի մեջ, ԱՄՆ-ը սկսեց ճնշում գործադրել չեզոք երկրների վրա՝ արգելելով նրանց սնունդ մատակարարել Գերմանիային: Հացահատիկի ստացումն Ամերիկայից դադարելուց 6 ամիս հետո Նորվեգիան սովի կմատնվեց: ԱՄՆ-ում 10 ամսվա ծանր բանակցություններից հետո Նանսենին հաջողվեց հասնել համաձայնագրի, ըստ որի Նորվեգիան ապահովվում էր սննդի պաշարներով:

2. Ռազմագերիներին, սովյալներին ու Առաջին համաշխարհային պատերազմի փախստականներին ցուցաբերած աջակցությունը: 1918 թ. նոյեմբերին, երբ պատերազմն ավարտվեց, Ռուսաստանում կես միլիոն ռազմագերիներ կային, որոնք սովի և տիֆի ճիրաններում էին: Նանսենն, իբրև Ազգերի լիգայի հանձնակատար, օգտագործելով իր հսկայական բարոյական հեղինակությունը, գտավ փակուղուց դուրս գալու ելքը: Փայլուն կատարված առաջադրանքի արդյունքում մինչև 1922 թ. փրկվեցին 26 երկրների 427000 գերիներ: Այս ընթացքում ծագել էր նոր դժվարություն՝ երաշտն ու սովը Ռուսաստանում: Մաքսիմ Գորկին օգնություն խնդրեց, և Ազգերի լիգան մերժեց օգնել Ռուսաստանին: Վերջինս խուսափում էր իր հանձնակատարի «կարմիր» դառնալու վտանգից: Ստանալով Մաքսիմ Գորկու անձնական խնդրանքը, Նանսենը, որ ռազմագերիների փոխանակումից հետո մտադիր էր իրագործել Կենտրոնական Ասիա ճանապարհորդելու նախագիծը, խորհրդակցում է նորվեգացի նշանավոր նկարիչ Էրիկ Վերենշելդի հետ: Վերջինս ասում է. «Որքան ես քեզ զիտեմ, դու երբեք քեզ չես ների, եթե հրաժարվես դրանից»: (Տալանով Ա. Նանսեն, 2004): Նանսենի «այո»-ն թոշում է ԺճԼ, ուր Կարմիր Խաչի միջազգային ու ազգային կազմակերպությունների կոնֆերանսը ստեղծում է սովյալներին փրկող հանձնաժողով՝ Ֆր. Նանսենի գլխավորությամբ: «Ես նորից ու նորից հայտարարում եմ, որ օգնության իմ գործում ես քաղաքագետ չեմ, ոչ բոլշևիկ եմ և ոչ էլ հակաբոլշևիկ: Ես միայն ձգտում եմ փրկել մարդկանց կյանքը...»: (Նանսենի արխիվից, Արզումանյան Մ. «Նանսենը և Հայաստանը» գրքում, 1977, էջ 70):

Կառավարությունները դեմ էին պետական մակարդակի օգնություններին: Նանսենը հույսը դնում է միայն սեփական նախաձեռնություններին, խնդրագրերի, մասնավոր մարդկանց պատրաստակամությունների վրա: Խանգարում էին կեղծ մամուլը, ռուսական ազդեցիկ էմիգրանտները: Ֆրանսիայում, Բրիտանիայում, Ֆինլանդիայում և այլ երկրներում ռուսական արտագաղթային կենտրոնները Նանսենին մեղադրում են բոլշևիկ և Լենինի գործակալ լինելու մեջ, պահանջելով հեռացնել Գերագույն հանձնակատարի պաշտոնից: Նանսենի դեմ ուղղված շատ փաստեր է գտել Բյորն Էզգը, որը ներկայացնում է նաև ռուս գիտնական Ա. Շանիլովի հայտնաբերած փաստաթուղթը հետևյալի մասին Լենինը 1921 թ. օգոստոսին Վոլգայի ավազանի սովյալներին օգնելու Նանսենի աշխատանքը մեկնաբանել է որպես հակահեղափոխական գործունեություն, պահանջելով, որ լուծարվի օգնության կոմիտեն: Կոմիտեի ռուս անդամները ձերբակալվում և ուղարկվում են Գուլագ Արշիպելագի ճամբարները:

Այնուամենայնիվ, իր ճանապարհն է խիզախորեն շարունակում

հարթել «Մերձավորի նկատմամբ սիրո վերածնունդը» խորագրով Նանսենյան ակնարկ-կոչը, որը հրատարակվել էր Գերմանիայում: Կոմիտեն պաշտոնապես լուծարվում է 1922 թ. ամռանը, որից հետո էլ գործունեությունը շարունակվում է «Նանսենյան օգնության» անվան տակ: Նանսենը 7 մլն մարդկային կյանք է փրկել սովից Վուգայի ավազանում:

Բյորն Էզգն, այնուհետև, իր դասախոսության մեջ շարադրում է Նանսենի մյուս կարևոր հանձնարարության՝ փախստականների օգնություն կազմակերպելու խնդրի մասին: Փախստականների հարցով հանձնակատար Ֆրիտյոֆ Նանսենի ծրագիրն այդ աշխատանքն իրագործելու համար օգտագործեց անձը հաստատող նոր վկայականների բաշխումը, որը կոչվեց «Նանսենի անձնագիր» և ճանաչվեց 52 երկրների կողմից:

Բյորն Էզգն անդրադառնում է նաև հայ փախստականների հետ տարվող նանսենյան աշխատանքներին, որն սկսում է «Հայ ժողովրդի աղբերգությունը չափվում է դարերով» խոսքերով:

Ֆր. Նանսենի մարդասիրական նվաճումների երբորդ խումբն, ըստ Բ. Էզգի, վերաբերում է Ազգերի լիգայի նկատմամբ նրա ունեցած բանավոր ու գրավոր աջակցություններին: Մարդու իրավունքներին և արժանապատվությանը վերաբերող հասկացություններն այն ժամանակ այնքան պարզ չէին սահմանված, ինչպս այժմ, երբ գործում են Միացյալ Ազգերի Կազմակերպությունը կամ Եվրոպական Միությունն ու նրա բարձրագույն խորհուրդը, բայց Նանսենը գործում էր ելնելով դրանց բովանդակության էությունից: Ազգերի լիգայում Նանսենն օժանդակեց ընդունելու այնպիսի գաղափարներ, որոնք որպես միջազգային կանոն ընդունվեցին ՄԱԿ-ի 1945 թ. Սան-Ֆրանցիսկոյում ստորագրված պայմանագրում: Եթե ուշադիր կարդանք Կարմիր Խաչի խաղաղության սահմանումը, որը ընդունվեց 1997 թ. Բելգրադում միջազգային Կարմիր Խաչի կոնֆերանսում, - շարունակում է Բյորն Էզգը, - կարող ենք համոզվել, որ այն ճիշտ նման է Ֆրիտյոֆ Նանսենի կողմից խաղաղության հիմնական սահմանմանը. «Կարմիր Խաչը տեսնում է խաղաղությունը ոչ միայն որպես պատերազմի բացակայություն, այլև որպես բոլոր ժողովուրդների ու պետությունների միջև համագործակցության պրոցես, համագործակցություն, որը հիմնված է ազատության, անկախության, հավասարության վրա, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, ռեսուրսների ու կարիքների արդար բաժանման վրա»:

Ահա այս գործունեությունը և դրա իրագործման համար Ֆր. Նանսենի կողմից գերմարդկային ճիզերի դրսևարումը ստիպեցին Բյորն Էզգեին, փնտրել այդ ամենի ազդակները, որոնք մարդ անհատին մղեցին դառնալու զբասրտության ռահվիրա:

Որտեղի՞ց են առաջացել ազդակները

Գուցե համարձակ, բայց նաև խիստ հետաքրքիր է Ֆրիտյոֆ Նանսենի կերպարանափոխությանը հետևել սկսած երիտասարդության շրջանի կոպիտ սոցիալ դարվինիստից մինչև մեղմ, մարդասեր բարեգործն ու մարդու իրավունքների պաշտպանը՝ կյանքի վերջին տարիներին: Սկսելով հասարակության մեջ «բնական ընտրության» փաստի հաստատումից, Նանսենը դարձավ այն անձնավորությունը, որ թերևս ամենաշատն էր աջակցել թույլերին ու տկարներին, քան իր ժամանակակիցներից որևէ մեկը:

Ինչպե՞ս դա պատահեց: Առանց փորձելու հաստատել, թե որն է ժառանգականության և որը՝ շրջակա միջավայրի ազդեցությունը, կարող ենք մեր խորհրդածություններում հիմնվել Նանսենի կատարած հայտարարությունների ու գրավոր աշխատանքների, ինչպես նաև նրա կենսագրության վրա: Աստվածաբանության պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Նիլս Բլոկ-Հոյելը տվել է Նանսենի զարգացման մեկնաբանությունը՝ սկսած մանկության շրջանի քրիստոնեական հավատից, երիտասարդության շրջանի սոցիալական դարվինիզմից մինչև կրոնի նկատմամբ չեզոք վերաբերմունքը՝ քրիստոնեական բարեխոսության դրական իմաստով: Նանսենը ինքը Վիլիելմ Ֆիրման Կորեն Հոլդտին 1922 թ. գրած իր նամակում նշել է, որ իր կյանքի լավագույն տպավորությունները ստացել է ձևավորման տարիներին: 1880 թ. սկզբին, երբ նա երիտասարդ գիտնական էր ու ապրում էր Բերգենում, Պաստոր Հոլդտի և նրա կնոջ հետ, հաճախ էր հետևում պաստորին՝ հիվանդներին ու աղքատներին կատարած այցելությունների ժամանակ: Այս ժամանակ էր, որ նա հասկացավ, թե քրիստոնեությունը հոգևորականի առջև սիրո և զոհողության ինչպիսի պահանջներ է դնում, դա նրա սիրտը հարգանքի խորը զգացումով լցրեց:

Դ-ր Արմադեր Հանսենը, որ հայտնագործել էր բորոտության վիրուսը, Նանսենի գործընկերն էր Բերգենի քանգարանում: Նա Նանսենին տեղեկացրեց էվոլյուցիայի տեսության մասին և նրա ուշադրությունը սկսեց սոցիալ-դարվինիզմի վրա, մի հետաքրքրություն, որը հետագայում ավելի ուժեղացավ 1886 թ. պրոֆեսոր Էրնստ Հեբելին հանդիպելու շնորհիվ:

Իր «Էսկիմոսների կյանքը» գրքում Նանսենը նկարագրել է, թե ինչպես ինքն առաջին անգամ հանդիպեց թույլ և վտանգի սպառնալիքի ներքո գտնվող մի ժողովրդի, որն արդարացիորեն տառապում էր: Դա ուժեղ ազդեցություն ունեցավ Նանսենի վրա: Անօգնական ժողովրդի ապագա պաշտպանը դարձավ զիջող և կազմակերպված: Նրա զգայունությունը վերածեց կարեկցանքի և ցավակցության՝ ազաի վաճառա-

կանների կողմից մարդու հիմնական իրավունքների խախտման հետևանքով տառապող այնպիսի ժողովուրդների նկատմամբ, ինչպիսիք էին օրինակ, Գլենլանդիայի էսկիմոսները: Նանսենը նշել է Հենրիկ Իբսենի՝ իր վրա ունեցած մեծ ազդեցության մասին: 1898 թ. Իբսենի 70-ամյակին նվիրված իր ողջույնի խոսքում նա ասել է. «Այն մարդուն, որը ազդել է իմ վրա երիտասարդության տարիներին, կանխորոշել է իմ զարգացումը, նշել է իմ կոչումն ու կամքիս ազնվությունը»: Մասնավորապես նա նկատի ուներ Բրանդի կերպարը՝ Իբսենի համանուն պիեսում:

Նանսենը կիսում էր Բյորնսոյերն Բյորնսոնի խմբակի անդամների հակակրանքը պատերազմի և ուժի քաղաքականության հանդեպ: Դարեվերջին Ֆրիտյոֆ Նասենը չէր հանդիմանում դոգմատիկ դարվիճիզմը և նրա սոցիալ-քաղաքական հետևանքները: Նանսենը այժմ պնդում էր, որ հասարակության մեջ մեծ ռեսուրսներ ունեցող մարդիկ իրավունք չունեն օգտագործել թույլերին: Մարդը ունի մարդասիրական պարտականություն՝ օգնել դժվարության մեջ գտնվողին: Նա մտահոգությամբ շեշտում էր, որ հունական կրոնի, քրիստոնեության և բուդդիզմի հիմքը կազմող ընդհանուր էթնիկական միջուկը եղբայրական սերն է:

Կնոջ Եվայի մահը 1907 թ. անջնջելի հետք թողեց Նանսենի կյանքում: 6 տարի անց կյանքից հեռացավ նրա որդին՝ Ասմունդը: 1913 թ. իր վիշտը մեղմացնելու և միջավայրը փոխելու նպատակով նա ընդունեց Սիբիր մեկնելու հրավերը: Ռուսաստանում Նանսենը ջերմ հյուրընկալության արժանացավ, և դա ցնցող տպավորություն գործեց նրա վրա: Հավանաբար, այստեղից էլ սկիզբ առավ նրա ուժեղ համակրանքը Ռուսաստանի և ռուս ժողովրդի հանդեպ, որն ակնհայտ էր նրա կողմից կատարվող օգնության աշխատանքներում Առաջին համաշխարհային պատերազմից հետո:

1917-1918 թ. թ. ԱՄՆ-ում Նորվեգիայի համար սննդի պաշարների ձեռք բերման աշխատանքների ժամանակ նա հանդիպեց Հերբերտ Հուվերին, որը հետագայում դարձավ ԱՄՆ-ի պրեզիդենտ: Այդ ժամանակ Հուվերը պատասխանատու էր Եվրոպայում Ամերիկայի կողմից կատարվող օգնության աշխատանքների համար: Նանսենը Հուվերին նորից հանդիպեց 1919 թ. Վերսալում կայացած Խաղաղության կոնֆերանսին, որտեղ նա Նանսենին երաշխավորեց Ռուսաստանի սովյակներին աջակցման աշխատանքների ղեկավարի պաշտոնի համար: Նանսենին օգնական նշանակվեց Բրիտանացի դիվանագետ ու քվակեր Ֆիլիպ Նոյել Բեյքերը, որը ևս նպաստեց հետագայում նրա մարդասիրական գործունեության ընդլայնմանը:

Գրականության մեջ բերվող փաստերի համաձայն Նանսենի վրա դրական ազդեցություն են թողել նաև Ժնևի Կարմիր Խաչի ղեկավարնե-

րը, որոնց, առանց ծածուկ շարժառիթների, հոգատարությունը զոհերի նկատմամբ ակնհայտ էր: Կարմիր Խաչի շարժմանը բնորոշ անկեղծ կանեկցանքը խոր հետք թողեց նրա գործունեության վրա:

Որտեղի՞ց են այնուամենայնիվ, սառցային կամքի և ճանաչողության ձգտման հետ ներաշխարհային, հոգևոր խոլությունների զուգորդման աղբյուրները: Այս մասին մենք խոսել ենք նաև մեր մի ուրիշ՝ «Գթասրտության ռահվիրան» (2003թ) աշխատության «Ճշմարիտ եվրոպացին» բաժնում, ուր համադրումների համար մեջ են բերված Դենի դը Ռուժմոնի մտքերը: «Երկու տարբերված կարողությունների՝ Ռգու և Կամքի երջանիկ խառնուրդն է մարդու մեջ, - ասում է նա, - որ, հավանաբար պատճառ է դարձել եվրոպական միասնության: Այս բոլորն ակնհայտորեն չափազանց հարաբերական են և չափազանց ընդարձակ և պետք չէ կարծել թե մյուս մայրցամաքներում ծնվածները գուրկ են այս պարզևից: Մենք պարզապես հաստատում ենք, թե Եվրոպայի արարքների բնորոշ էական որակը հատկապես Ռգու և Կամքի համերաշխ զարգացումն է: Եվրոպական կյանքի մասնահատուկ ռիթմի մեջ Կամքը սկզբում գերազանցում է Ռգուն և ազատագրված, գերանհատականացված, շիտակորեն զնում է դեպի նպատակը: Այնուհետև գալիս է երկրորդ փուլը, երբ Ռգին գերազանցելով Կամքին, փորձում է կարգ ու կանոն սահմանել ստեղծված քառսի մեջ: Վերջապես գալիս է երրորդ փուլը, Ռգու ու Կամքի հավասարակշռությամբ ու հասցնում է համադրության: Այս եռաստիճան ռիթմը եվրոպական կյանքի տեսակի քննարկվիչն է, որքան զիտության, նույնքան էլ քաղաքականության ասպարեզում...»: («Եվրոպայի 28 դարերը», էջ 349)

«Այս եռաստիճան ռիթմը» իբրև եվրոպական կյանքի տեսակը բացահայտող գործոն, այնքան շատ է համադրելի Ֆրիտյոֆ Նանսենի կյանքի ու գործունեության հետ:

Այնուամենայնիվ, որն էր նանսենյան զաղափարախոսության հիմքը և ինչն էր ստիպում Ֆրիտյոֆ Նանսենին, ուժերի լարմամբ հասել մարդասիրության հոսանքը կաշկանդող սառցե հաստ շերտը, ինչու՞ էր փորձում բարության նավով շրջանցել խոր խաթերն ու սուրբակի տարբեր վայրերում իջեցնել մարդասիրության ու խաղաղության դրոշը: Որն էր նրա տրամաքի նպատակը: Պատասխանը գուցե թե փնտրենք նրա այն ելույթում, որ նա ունեցել էր Լոնդոնում, երիտասարդության առջև, «Գիտության և բարոյախոսության» թեմայով:

«Նպատակ հասկացությունն, ինքնին, էական է միայն օրգանական աշխարհի համար, - ասում է նա: - Հենց այն է գլխավորում գոյության պայքարը և «survival of the fittest» (առավել հարմար գոյություն) օրենքով: Ամեն մի օրգանի գոյությունը պետք է նպատակ ունենա, և կենսա-

բանը, որ կենդանու մեջ նոր օրգան է հայտնաբերում առաջին հերթին պետք է բացահայտի այդ օրգանի նշանակությունը:

Բայց այդ մեթոդը անկիրառելի է էներգիայի առումով, իսկ կյանքը էներգիայի ձևն է: Հայրցնել, թե ի՞նչն է կյանքի, կամ օրգանական աշխարհի նպատակը, մտավորապես նույնն է, թե հարցնես, ո՞րն է երկրի պտույտի նպատակը»:

1929 թ. դեկտեմբերին ամերիկյան «Ֆորում» թերթում, նրա խմբագիր, Նանսենի ընկեր շենրի Հոդդարդ Լիչը սկսում է տպագրել «Կյանքի փիլիսոփայություն» հոդվածաշարը:

Ահա մի հատված Նանսենի՝ նույն թերթում տպագրված հոդվածից, մեջ բերված նրա դատեր հիշողությունների գրքում, որը լույս է սփռում նանսենյան մտածողության վրա՝ ուղղված մարդկային արժանապատվության գաղափարին: Ահա Նանսենի կողմից մարդկության բարոյական գաղափարները փիլիսոփայության մեջ կատարած դիտարկումները: Չափազանց կարևոր ու հետաքրքիր են նաև ճանաչված գիտնական, բենտախույզ Ֆրիտյոֆ Նանսենի իմաստասիրական մտղորմները.

«Մենք չենք կարող ո՛չ ապացուցել ճշմարտության գոյությունը, ո՛չ էլ ժխտել այն: Բայց քանի դեռ մեզ մտածելու կարողություն է տրված, մենք պետք է օգտվենք նրանից այն հարցերի լուծման համար, որոնք հսկայական նշանակություն ունեն կյանքում, ըստ որում մեր միտքը պետք է ղեկավարվի նրանով, ինչը ճշմարտացի է մեր ժամանակների համար: Ենթադրել, որ ոմն մեկը՝ «աստծո մարգարեն» է ուստի ղեկավարում է մեր հավատը, աշխարհայացքը՝ հրամանների և կարգադրությունների միջոցով, լինեն դրանք տրամաբանական, թե անտրամաբանական բնույթի, անհամատեղելի է բարոյականության և բարության հետ: «Հավատա» հրամանը բարոյազանց է: Եթե մենք մեզ ստիպում ենք լսել այդ հրամանը, ապա այդպես ենք անում ոչ նրա համար, որ վախենում ենք չգոհացնել աստվածային իշխանությանը և պատժի ենթարկել մեզ: Դա բարոյականության հետ ոչ մի կապ չունի, ուստի ենթարկվում ենք բռնակալությանը, ձգտելով նման ձևով շահի հասնել: Նման պատգամները՝ այն ժամանակների մնացորդներն են, երբ մարդկությունը հավատում էր պատերազմի աստվածներին և նրանց, ովքեր անիծում և պարզկատում էին, ինչպես օրինակ Եհովան: Մեր ժամանակներում հարկ է անցնել այդ նախապաշարումները»:

Չևսվորելով սեփական հայացքը կենցաղային և աշխարհիկ կարգի վրա, մենք կարող ենք հիմնավորվել միայն սեփական դիտարկումների վրա, շարունակում է նա, այսինքն, մեր գիտական հետազոտությունների և տրամաբանական մտածողության վրա: Իսկ դա հանգեցնում է մեզ այն ենթադրության, որ ամբողջ տիեզերքը՝ ինչպես կենդանի, այնպես էլ ան-

կենդան աշխարհը, ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր ոլորտը, ենթարկված է նրան, ինչ մենք բնության օրենք ենք անվանում: Օրգանական ողջ աշխարհը ենթարկված է այն օրենքներին, որոնց ենթարկվում են էլեկտրոնները և երկնային մարմինները:

Մենք չգիտենք թե ինչպես է կյանքն իսկապես ստեղծվել մեր երկրագնդի վրա, բայց դա չի նշանակում, որ մենք երբեք դա չենք իմանա: Մենք գիտենք, որ այն մի ժամանակ սկսվել է և մի ժամանակ էլ ավարտվելու է, երբ արևը կառնի այնքան, որ Երկրի վրա ջերմաստիճանը կիջնի մինչև որոշակի սահման: Դա անխուսափելի պրոցես է տիեզերքի հավերժ շրջապտույտում:

Բնության օրենքները թույլ չեն տալիս ենթադրել, որ մարդը տիրապետում է հոգու, որը կարող է ապրել առանց մարմնի: Այնպես, ինչպես չկա կենդանի ձև առանց հոգու, այնպես էլ չենք կարող պատկերացնել հոգին առանց կենդանի ձևի: Կարելի է առանձնացնել գիտակից և անգիտակից հոգին, բայց մենք չենք կարող մատնանշել այն սահմանը, որ ուրոշակի աստիճանում օրգանական ձևերի զարգացումը ցածրագույն բույսերից մինչև մարդը, հայտնվում է անհատական հոգին, որ գիտակից է:

Շատերի համար երևի, սփոփիչ է մտածել, որ հոգին անմահ է, որ կա մի այլ կյանք, որ պարզևատրվում են կյանքում կրած գրկանքների համար: Բայց ավելի առողջ և նվազ եսասեր է այն, որ մեր կյանքն անցնում է այստեղ և հիմա, որ մենք ժամանակավոր օղակ ենք անցյալից ներկա ձգվող շղթայում և եթե մենք շարունակում ենք ապրել մեր սերունդների մեջ, ապա միայն մեր մտքերի ուժով և արարքներով, ուստի պարտական ենք ավելի լավ և շատ արարքներ կատարելու այս կյանքում: Նման հավատը մեր մեջ ուժեղացնում է նաև պարտքի զգացողությունը:

Քանզի ամեն բան ենթարկված է բնության օրենքներին, իսկ կարողությունները, բնավորությունը և մարդկային հատկությունները որոշվում են ժառանգականությամբ և հարմարվողականությամբ, ինտրկե, խոսք անգամ լինել չի կարող պատասխանատվության և ազատ կամքի մասին: Կամքը որոշվում է նաև գոյություն ունեցող պատճառներից: Կողառնա՞ արդյոք մարդը լավը, կամ վատը, բարոյական, կամ բարոյազուրկ, կախված է ժառանգականությունից և միջավայրի դաստիարակության ազդեցությունից: Բայց մեր հոգևոր հատկություններին է վերաբերվում նաև ազատ ընտրության իրավունքը, իսկ դրա արդյունքում՝ ընտրության պատասխանատվության զգացումը: Ամենաեռանդուն դետերմինիստն անգամ գործում է ղեկավարվելով այն իլյուզիայով, որ վերջնական որոշումը կախված է իր կամքից: Ակնհայտ է, որ այդ գաղափարը անհրաժեշտ է հասարակության գոյության համար, որի մասն է այն հանդիսանում:

Դետեարիզմի այս ուսուցման հետ է կապված նախնական նպատակահարմարության վաղեմի հարցը: Բնության օրենքները չեն թույլատրում նախնական նպատակի գոյությունը: Ոմանք կարծում են, որ եթե նպատակ չլինի, գոյությունն աննպատակ կլինե: Բայց դա ոչինչ չի ապացուցում: Ո՞վ կարող է համոզել, որ տիեզերքն ինչ-որ միտք պետք է ունենա: Հավերժ օրենքները գործում են, նրանք չեն կարող վանել պատճառները, չվանելով իրենք իրենց:

«Երբ մեր հայացքը կանգ է առնում գիշերային աստղազարդ երկնքին, անցնում անսահման տարածության ճանապարհներով և մենք հիանում ենք տիեզերքի ահռելիությամբ, նրա բարձր փառահեղությամբ, զգում ենք, որ այդ ամենը միշտ եղել է, միշտ պետք է լինի, և նպատակի ու մտքի պահանջն ինքն իրեն վերանում է, դառնալով աննշան մանրուք: Մի ժամանակ, շատ ժամանակ առաջ, այս փոքրիկ մոլորակի վրա սկզբնավորվեց և զարգացում ապրեց օրգանական կյանքը, և կգա ժամանակը ու այն կվերանա: Չափազանց չ՞ արդյոք պահանջել, որ այն նաև այլ միտք ունենա, բացի իր սեփական փոփոխականությունից»:

Բայց, այնուամենայնիվ, մենք պրակտիկայում վարվում ենք այնպես, ասես մեր կյանքը նպատակ ունի: Այս գաղափարը, այնպես, ինչպես ազատ կամքի գաղափարը, խորապես արմատավորված է մարդկային բնության մեջ, քանի որ առանձնանում է վերը նշված պատճառներով:

Ակնհայտ է, որ այսպես կոչված մատերիալիստական աշխարհայացքը շատ մարդկանց մոտ ցնցում է նրանց փիլիսոփայական և կրոնական համոզմունքների հիմքերը: Բայց ամենից վատն այն է, որ բարոյական գաղափարները մինչև հիմա միշտ կապված էին կրոնի հետ, որ համընդհանուր բարոյականության օրենքները մշտապես հիմնվում էին սնոտիապաշտության վրա: Գտնելով սեփական սխալները և թողնելով նախկին համոզմունքները, մարդիկ վտանգի են ենթարկում էթիկական հիմքերը, չգտնելով նոր փոխարինող: Այնժամ նրանք կորցնում են հավասարակշռությունը, և նրանց բարոյական և սոցիալական հայացքները դառնում են ժամանակի զոհը:

Բայց չնայած այդ ամենին, մենք երազում ենք մարդկային նոր դարի մասին, հավերժ խաղաղության, եղբայրության և ազգամիջյան բարի հարաբերությունների, վստահության և միմյանց օգնության ժամանակաշրջանի մասին:

... Հարկավոր է ստեղծել նոր, առողջ բարոյական օրենսգիրք, որ համապատասխանում է ժամանակի պահանջներին: Եվ հարկավոր է իմանալ, որ բարոյականության օրենքները չպետք է վախից կատարվող ազդեցություն դառնան, այլ կատարվեն, քանի որ տանում են երջան-

կության, միաժամանակ ծառայելով անհատի և հասարակության շահերին:

Որպեսզի լավագույն ապագայի նկատմամբ հույս առաջանա, հարկավոր է առաջին հերթին հաղթահարել վախը: Մենք պետք է դեն նետենք հին հագուստները, որոնք արդեն ապրել են իրենցը և պետք չեն նոր սերնդին, մենք պետք է աշխատենք հանգիստ և համոզված, որպեսզի հիմնենք հասարակության բարոյական կյանքի հիմքը: Առաջին հերթին մենք չպետք է թույլատրենք, որ պահպանվի վախի վրա հիմնված քշնամոթյունն ազգությունների միջև:

Շատ ցավալի է, որ միջազգային քաղաքականության մեջ բացարձակ բացակայում են բարոյական հիմքերը: Անհնար է միջազգային հակասությունները պատերազմով որոշել: Պատերազմը ժխտում է, և վաղ թե ուշ կործանման կտանի, իսկ բարեկամությունը, օգնությունը դրական երևույթներ են և հիմք են ստեղծում լավագույն ապագայի համար: Բայց այդ հարցերի լուծման համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ժողովուրդ պատրաստակամ լինի զոհողության դիմելու:

«Անհրաժեշտ է, որ դիմացիների նկատմամբ սիրո և ազնվության զգացումը համակի բոլոր մտքերն ու արարքները: Եվ մենք միշտ պետք է հիշենք, որ սերն ու համբերությունը անտառի ամենագեղեցիկ ծառերն են»:

Իր բարձրակարգ բնավորությամբ, Ֆրիտյոֆ Նանսենն, այնուամենայնիվ, հանգում է քրիստոնեական սիրո գաղափարին: Դա 1929 թ. էր, մահվանից մեկ տարի առաջ: Իսկ ահա, թե դրանից 20 տարի առաջ ճիշտ ապրելու մասին ինչ դասախոսություն էր կարդում նա երիտասարդության համար, որի մասին պատմում է Լիվ Նանսեն Հեյերը:

«Ըստ Նանսենի պնդման, ամենակարևորը, հնարավորինս ամբողջապես իրեն տրված կյանքի օգտագործումն է: Յուրաքանչյուր քաղաքացու մեջ պետք է դաստիարակվի այն գիտակցությունը, որ սեփական անձի նկատմամբ ունեցած իր միակ պարտքը կայանում է բնության պարզևած կարողությունների զարգացման և երջանիկ լինելու մեջ: Այսպիսով նրանք կնպաստեն նաև մյուսների երջանկությանը: Թող մինչև վերջ պարզ լինի, որ մելամաղձությունն ու հոռետեսությունը, անգամ եթե դրանք գրավիչ են՝ արատ են, քանի որ անգործության են մատնում, իսկ դա մյուսներից պակաս արատ չէ: Դրանից խույս տալով հարկավոր է ինքնատիրապետման կարողություն մշակել: Կյանքն ինքնին հարուստ է, գեղեցիկ, լի հնարավորություններով և հարկ է, որ երիտասարդը սովորի տեսնել այդ ամենը և ձգտի անհնարին: Նրան հարկավոր է բացատրել խոր ճշմարտությունը, որն ամփոփված է թագավոր Ալֆրեդի խոսքում.

Բարեսիրտ մարդը իմաստուն է,  
Իսկ իմաստունը՝ բարի,  
Եվ բարին ինքը՝ երջանկություն է»:

### Լիվ Նանսեն Հեյեր

Մարդկային բարձրագույն հոգիներն են մատնանշել բարությանը երջանկություն տանող ճանապարհը: Այդպիսի բարձրագույն հոգի էր Ֆրիտյոֆ Նանսենը: Եվ որքան բարձրագույն է մարդկային հոգին, այնքան այն իր ետևից տանում է ցածում եղողներին:

Ինչու՞ են սրբերը ընդօրինակողներ ունենում, և ազնվագույն մարդիկ իրենց ետևից տանում բազմություններ: Այս խնդիրը քննարկելով, նշանավոր փիլիսոփա Անրի Բերգսոնը (1859-1941) գտնում է, որ մինչև բնական պարտականությունը ճնշում կամ խթանում է, կատարյալ բարոյականության մեջ իշխում է իր ետևից տանելու կոչը: Կատարյալ բարոյականությունը մարմնավորում է նաև Ֆրիտյոֆ Նանսենը, որի բարձրագույն աստիճանը գնալով այնքան է մեծանում, որքան մուրալի վրա զթասրտության կարիք է զգացվում: Նրա աստիճանը գնալով մեծանում է մեզ՝ ցածում մնացողներին համար: Իսկ իր համար զթասրտությամբ նվաճված բարոյակունությունը կատարյալ է հավերժի մեջ, անգամ եթե չլինենք նաև մենք: Այս մտքին հանգում ենք փիլիսոփա Անրի Բերգսոնի տեսության լույսի ներքո. «Գթասրտությունը կպահպանվի նրա մեջ, ով ունի այն. նույնիսկ երբ աշխարհում չի լինի կենդանի որևէ այլ էակ»: (Ա. Բերգսոն «Բարոյականության և կրոնի երկու աղբյուրները», 2001, էջ 34):

Մարդկային բարձրագույն հոգի ունեն և այժմ իր ոգեղեն բարձրության վրա է Ֆրիտյոֆ Նանսենը: Ոչ իբրև դափնե-պսակավոր՝ ցածում մնացողների համար: Բարձրի և ցածրի միջև տարածության կրճատումն ի հաշիվ ցածրի, տիեզերական երջանիկ հավերժությանը տանող ճանապարհն է: Այդ ճանապարհի վրա մարդասիրության հոսանքի դեմ ելած խութերն էր հաղթահարում Ֆրիտյոֆ Նանսենը:

Ըստ Անրի Բերգսոնի, որքան շատ է հոգին բարձրագույն, այնքան մեծանում է մյուսների և իր միջև ընկած տարածությունը՝ վիհը: Սակայն սա Նիցշեի գերմարդը չէ, քանզի չի ուզում վերից նայել ստորիններին, այլ փորձում է շանսեր տալ մաքրվելու և իր օրինակով վեր բարձրանալու համար: Ըստ Բերգսոնի, ցածրին օրինակ տվող բարձրը հենց այդ՝ իր օրինակ լինելու պատճառով էլ առավել է բարձրանում և դրանից ոչ թե փոքրանում է վիհը, այլ առավել բարձրագույնի է հասնում վերին Կատարելությունը: Այս մտածումով Ֆրիտյոֆ Նանսենը տիեզերական կատարելության կոչողն ու ազդարարն է նաև այսօր, քանի որ Հայոց դատի իրողության մեջ ունեցած իր պատվելի ներկայությամբ իր ետևից կարող է վեր տանել նրանց, ովքեր կխոստովանեն մարդկության խայտառակությունը:

Այո, Հայ դատը մարդկության մաքրագործման միջոց է, և Ֆրիտյոֆ Նանսենն, ինչպես 90 տարի առաջ, այսօր էլ մարդկային արժանապատվության դիրքերում է, ի շահ տիեզերական Գոյի կատարելության:

Հայ ժողովրդի նկատմամբ իր մեծագույն բարեկամի ունեցած կեցվածքը խոսում է նրա՝ Ֆր. Նանսենի բարձրակարգ բանականության մասին, որը բաց է ընկալելու հավերժի իմաստությունը:

«Ո՞վ չի տեսնում, որ սոցիալական միասնությունը մեծ մասամբ պարտական է անհրաժեշտությանը, որպեսզի մի հասարակությունը պաշտպանվի մյուս հասարակությունից, և նախ պաշտպանի բոլոր մյուս մարդկանցից նրանց, ում սիրում է, ում հետ ապրում է: Այսպիսին է նախնադարյան բնագոյը: Եվ այն դեռ պահպանվում է՝ հաջողությամբ թաքնվելով քաղաքակրթության նվաճումների տակ, սակայն այսօր էլ մենք բնական կերպով և ուղղակի սիրում ենք մեր ծնողներին ու համաքաղաքացիներին, մինչդեռ սերն առ մարդկությունը անուղղակի է ու ձեռքբերովի: Դեպի առաջինները մենք գնում ենք շփի-շփտակ, վերջինիս միշտ մոտենում ենք շրջանցումով, քանզի միայն Աստուծո մեջ է կրոնը կոչ անում մարդուն սիրել մարդկային ցեղը, ինչպես նաև միայն բանականության միջոցով, բանականության մեջ են, որով հաղորդակցվում ենք բոլորս, փիլիսոփաները մեզ քննել տալիս մարդկությունը՝ ցույց տալու համար մարդ անհատի վիթխարի արժանավորությունը, հարգանք վայելելու ամենքի իրավունքը»: (Ա. Բերգսոն «Բարոյականության և կրոնի երկու աղբյուրները», 2001, էջ 29):

Ֆրիտյոֆ Նանսենի ոգին ու բանականությունը մեկ միասնության մեջ, դա մարդու ֆենոմենն է, որը մեր աչքի առջև դառնում է տիեզերքն աշխատեցնող վիթխարի պտուտակը:

Ֆրիտյոֆ Նանսենի ոգին ու բանականությունը մեկ միասնության մեջ, դա մարդու ֆենոմենն է, որը մեր աչքի առջև դառնում է տիեզերքն աշխատեցնող վիթխարի պտուտակը:

## Ինչպես և ինչու էին հակազդում հայերի ջարդերին

Արդեն իսկ ապացուցված փաստ է, որ հայոց ցեղասպանությունը կանխամտածված ծրագիր էր, իսկ պատերազմն աշխարհի աչքից ծածկում էր այն, թե ինչպես է գործադրվում այդ հրեշավոր ծրագիրը:

Դեռևս 1915-ի սկզբին հուսադրող էր դաշնակից պետությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դիրքորոշումը իբրև հակազդեցություն՝ ջարդին: Նրանք հեռագրեցին թուրք կառավարությանը. «Մեկ ամսից ավելի է, Հայաստանի քուրդ և թուրք ազգաբնակչությունը, հաճախ օսմանյան պաշտոնյաների օգնությամբ իրագործում են հայերին կոտորելու ոճիրը: Կոտորածները տեղի են ունեցել Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բաղեղում, Մաշում, Մասունում, Ջեյթունում և ողջ Կիլիկիայում: Վանի շրջանի մոտավորապես հարյուր գյուղերի բնակիչները ամբողջովին կոտորված են: Վան քաղաքի մեջ հայկական թաղը պաշարված է քրդերի կողմից: Միաժամանակ, օսմանյան կառավարությունը Պոլսի մեջ ևս խիստ հալածանք է սկսել խաղաղ հայ ազգաբնակչության դեմ: Նկատի ունենալով Թուրքիայի այս նոր ոճիրները մարդկության և քաղաքակրթության դեմ, Դաշնակից կառավարությունները հրապարակորեն հայտնում են բաց Դռանը, որ իրենք ոճիրների համար պատասխանատու են համարում օսմանյան կայսրության բոլոր անդամներին, ինչպես նաև այն պաշտոնյաներին, որոնք մասնակցում են նման կոտորածների»:

Իհարկե, ոճրագործները պատասխանատվության չկանչվեցին, միայն հայի ձեռքն էր, որ պատժեց նրանց այս ու այնտեղ, փորձելով մեկ անգամ ևս աշխարհի ուշադրությունը հրավիրել խնդրի վրա: Տարբեր երկրների և նրանց ներկայացուցիչների կողմից ջարդերին հակազդելու դիրքորոշումները մեկ անգամ ևս փաստենք, մեջ բերելով Ռ. Փիրույանի «Հայ Դատ», Լոս Անջելես, 1994 թ. գրքի համապատասխան բաժնի համառոտագրությունը.

**Անգլիա.** Առաջին անգամ Անգլիոյ մեջ հայերու կոտորածներու մասին պաշտօնական յայտարարութիւն կատարեց Վայքաունթ Ելէյմզ Պրայսը (Viscount James Bryce), 1915-ի Հոկտեմբեր 6ին եւ զանոնք իբրեւ կանխամտածուած ծրագրի մը գործադրումը ներկայացուց: Պրայսի խնդրանքով էր, որ Անգլիացի պատմաբան՝ Արնոլտ Թոյնպի (Arnold Toynbee), Անգլիոյ պետական արխիւները քննելով եւ մեծ թիւով փաստաթուղթեր եւ վկայութիւններ հաւաքելով, հայ ժողովուրդի կոտորածներու պատմութիւնը գրեց: Թոյնպիի այդ գործը պատմական մեծ արժէք ունի հայոց ցեղասպանութիւնը փաստող: Տակաւին, ի տես հայ ժողովուր-

դի կրած տառապանքներուն, Անգլիոյ վարչապետ՝ Տէյլիտ Լոյտ Ծորճ (David Lloyd George) կը խոստանար, որ հայերը ալ երբեք պիտի չենթարկուին թուրքի սարսափելի բռնարարքներուն: Անգլիոյ պաշտօնական կեցուածքը արտայայտելով, ան կ'եզրակացնէր. «Պատերազմի առաջին վայրկեանէն չկար անգլիացի քաղաքագէտ մը, որ համոզուած չըլլար, թէ այս տմարդի կայսրութիւնը պարտութեան մատնելու պարագային, պիտի պարտադրենք հաշտութեան մէկ կարևոր պայման՝ հայկական հողերու վերջնական ազատագրումը թուրքի արիւնոտ ճիրաններէն»:

Անգլիոյ Արտաքին Գործերու Գրասենեակի արխիւներուն մէջ, յատուկ մասնաբաժանումով (թիւ 44), պահուած են հազարաւոր պաշտօնագրեր Օսմանեան Կայսրութեան մեջ 1915-1920-ին հայերու կոտորածներուն և տեղահանութիւններուն մասին՝ անգլիացի պաշտօնատարներու կողմէ կառավարութեան յղուած:

**Ֆրանսիա.** 1916-ի Նոյեմբերին, Ֆրանսիայի վարչապետ Արիսթիտ Պրիան (Aristide Briand) կը յայտարարէր. «Երբ գայ ժամը օրինական հատուցման, Ֆրանսիա պիտի չնոռանայ հայերու դատը եւ, իր դաշնակիցներու համաձայնութեամբ, ան պիտի ապահովէ Հայաստանի համար խաղաղութիւն և յառաջադիմութիւն»: Դեռ պատերազմի ընթացքին, նոյն վարչապետը կը վստահեցնէր, թէ «Թուրքի բարբարոս բռնապետութեան տակ տառապող ժողովուրդներու ազատագրումը պատերազմի նպատակներէն մէկն է»: 1916-ին Ռենէ Փինօն (Rene Pinon) կը գրէր օսմանեան բանակի հայ զինուորներու տաժանակիր աշխատանքներուն և սպանութեան մասին: 1918-ի Յոիլիս 14-ին, վարչապետ Ժորժ Էլեմանսօ (Georges Clemenceau) կը յայտարարէր, թէ Ֆրանսա Հայաստանը պիտի ներառնէ բռնադատուած ազգերու ազատագրման իր ծրագրին մէջ: Շատ են հայանպաստ նման յայտարարութիւններ՝ ֆրանսացի պաշտօնական անձերու կողմէ կատարուած, որոնք սակայն խօսքի սահմաններու մեջ մնացին: Յամենայնդէպս, հայոց ցեղասպանութեան փաստագրութեան տեսակէտէն, հետաքրքրական աղբիւրներ են Ֆրանսայի զինուորական արխիւներուն մէջ պահուած Կիլիկիոյ հայկական լեզուներու (զօրագունդ) մասին փաստաթղթերը:

**Գերմանիա.** Ժամանակին, ամերիկացի դեսպան Մորկըքաու կասկած յայտնած է, թէ գերմանական կառավարութիւնը կը հովանաւորէ հայերը բնաջնջելու Թուրքիոյ ծրագիրը: Այդ կասկածը շարունակուած է, մանաւանդ երբ բազմաթիւ դիմումներ գերմանական կառավարութեան, իբրեւ Թուրքիոյ դաշնակից՝ միջամտելու և հայերու ջարդին ու տեղահանութեան վերջ տալու, անուշադրութեան մատնուած են: Այսօր, երբ Գերմանիոյ արխիւները բաց են մեր առջեւ, կ'իմանանք, թէ արդեն 1915-ի

Մայիսին, հակառակ որ գերմանական հիւպատոսները Էրզրումէն եւ Հալէպէն կը զրուցէին կոտորածներուն մասին, Գերմանիոյ դեսպան Վանկէնհայմ (Vangenheim) խորհուրդ կու տար իր կառավարութեան՝ Պերլին, չմիջամտել Էնվերի ծրագրի գործադրումին: Նոյն Վանկէնհայմը ամիս մը ետք կը թուեր փոխած ըլլալ իր տպաւորութիւնը: Ան կը զեկուցէր, թէ հայերու տեղահանումը զինուորական նպատակներ չի հետապնդեր եւ թէ Թաթար ինք յայտնած է, որ կառավարութիւնը կ'օգտագործէ համաշխարհային պատերազմը՝ ոչնչացնելու համար թուրքերու ներքին թշնամիները՝ քրիստոնէաները, նախքան արտաքին ուժերու միջամտութիւնը: Վանկէնհայմ Թալէաթին դիմելով կ'փորձէ միջամտել եւ միւս կողմէ ալ իրավունք կու տայ Հայ - Գերմանական Ընկերութեան նախագահ՝ մեծ հայասեր տոքթ. Եոհաննէս Լեփսիուսին (Johannes Lepsius) Պոլիս այցելելու եւ հայերու իրավիճակը քննելու: 1915-ի Հոկտեմբերին, Լեփսիուս կը կազմակերպէ մեծ թիւով գերմանացի հոգևորականներ եւ անոնց անունով կը դիմէ Բարձր Դրան, կեցնելու համար հայերու սպանդն ու տեղահանութիւնը: Վանկէնհայմի մահուընէ ետք, նոր դեսպանները եւս նման դիմումներ կ'ընեն թուրք կառավարութեան, որ վերջապէս 1915-ի Դեկտեմբերին կը յայտարարէ, թէ Գերմանիա պետք չէ որ Թուրքիոյ ներքին խնդիրներուն միջամտէ: Այդպէս, վերջ կը գտնէ գերմանական պաշտօնական միջամտութիւնը:

Հակառակ այս բոլորին, Լեփսիուս շարունակեց իր աշխատանքը, որ սակայն արդիւնքի չհասավ այդ օրերուն հայերու ջարդը կեցնելու իմաստով: Լեփսիուսի կարեւոր մէկ հատորը՝ «Չեկոյց հայերու իրավիճակի մասին Թուրքիոյ մէջ», անժխտելիօրէն արժէքաւոր փաստագրութիւն մըն է:

Փաստը մնում է փաստ, որ մոլորակի վրա դեռևս մեռած չէր մարդկային խիղճն, այլ առկայծում էր իբրև զուտ տվյալ պահի հրեշավորության արձագանքը, դառնալով հետագայի համար Հայ Դատի պաշտպանության արժեքավոր փաստագրությունը: Նրանց հուշագրությունները ևս, ինչպես Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թ. թ.», Մորգենթաուի «Ամերիկյան դեսպանի հուշերը» 1918 թ., վեր են հանում արևմտահայության ողբերգությունը, դառնալով Հայ Դատը վեր պահող հուշակոթողներ:

Բացի այն, որ խիղճն, ազնվությունն ու առողջ դատողությունն էր հակազդում հայոց ջարդին, կար նաև հակազդող մի ուրիշ գործոն՝ առանձին նվիրյալների մեջ հնչող Աստծո կանչը:

## Մարդասիրություն՝ Աստծո կանչով

«... Միայն Աստծո մեջ է կրոնը մարդուն կոչ անում սիրել մարդկային ցեղը, ինչպես նաև միայն բանականության ...»

Անրի Բերգսոն

Մինչ սև ջարդի տարիներին առկայծում էր ազնվաբար մարդկանց, քաղաքական գործիչների խիղճն ու առողջ դատողությունը, մինչ նանսենյան բարձրակարգ բանականությունը Եվրոպայում ու Ամերիկայում տքնում էր իբրև մաշոկային արժանապատվության դրոշակակիր, սառնաշունչ երկրներից քրիստոնեության մարդասիրության կրակն էին տանում ջերմացնելու մոլորակի մարդկությանը՝ նրբակազմ օրիորդ - միսիոներուհիները:

Մարիա Յակոբսոն: Մարդասիրաբար ինքնագոհողության կոչող Աստծո ձայնի բրթիորդ: Եվ մի՞թե Աստծուն էլ ուրիշ բան չի մնում անել, քան լաց լինել, ինչի մասին խոսում է նա մարգարեի բերանով. «Եթե գլխիս արցունքի աղբյուր լինեիր, պիտի լաց լինեի իմ ժողովրդի դատերի վրա»: Իր վավերագիր - օրագրությունում այս խոսքերի մտաբերումով Մարիա Յակոբսոնն, արդյո՞ք իրեն է համարում Աստծո ժողովրդի դուստրը, թե՞ նրանց, ովքեր դողում էին սարսափից, եթե միայն դեռ կենդանի էին մնացել: Երկու դեպքում էլ նույնն է, քանզի դանիուհի օրիորդը Խարբերդում, Էրզրումում ու այլուր մեռնում էր յուրաքանչյուր մեռնողի հետ, հագիվ հասցնելով տարածել Տիրոջ ճամփաների մեջ հաստատուն մնալու խնդրանքները: «Ես չեմ կարող բառեր գտնել նկարագրելու այս ժողովրդի ցավը, տառապանքներն ու սարսափը», - գրում է Մարիա Յակոբսոնը, թվագրելով՝ 10 հունիսի, 1915 թ.:

Մյնուամենայնիվ, գտնվում են նաև բառերը՝ սովից կմախքացած երեխաների, ծեծվող ու չարչրկվող կանանց, երիտասարդների՝ մանվիչների մեջ դրված ձեռքերից ու ոտքերից հոսող արյան, ոսկորներով լեցուն գերեզմանոցների, գլխատված մարմինների թփրտոցի մասին. . .

«8 հունիսի, 1915 թ. - . . . Ես շատ եմ մտահոգված օրագրիս համար, որի մեջ գրել եմ թուրքերի վատ արարքների մասին և գիտեմ՝ եթե ընկնի նրանց ձեռքը, ինչ հետևանք կունենա: Այրել չեմ ուզում, որովհետև ամեն ինչ կկորչի: Պահել չեմ համարձակվում, որովհետև ստուգվում են նույնիսկ ամենից չկասկածվող տեղերը: Նրանք հանում են պատերի աղյուսներն անգամ, փորում են գետինը. . .



... Հետո հարցրի հյուսիսատոսին՝ չէի՞ր ցանկանա արդյոք պահել ձեռագիրս: Նա խոստացավ»:

... 26 հունիսի, 1915 թ. – Հայերը միայն չորս օր ժամանակ ունեին ունեցվածքը ծախելու...

9 փետրվարի, 1915 թ. - Այս երկրում մարդն արժեք չունի...

27 հունվարի, 1917 թ. – Թուրք բժիշկները մարդուն չեն գնահատում. եթե ապրելու է՝ կապրեն, եթե մեռնելու է՝ կմեռնեն: Այդպես էլ չեն գնահատում ժողովրդին: Ներքին տուրքում է:

6 հուլիսի, 1915 թ. - Ամեն կողմ նույն անլուծելի հարցերն էին.

-Ի՞նչ ենք անելու հիվանդներին, կոշիկ չունենք, գրաստ չունենք ... Մենք մեռնելու ենք գնում: Երանի մեզ այստեղ սպանեին, մեր տան մեջ, մե՞ղք է թույն խմելը:

Թուրքերը պատասխանում էին.

-Մենք չենք հանցավորը: Այս բոլորը կատարվում է Վիլհելմ-Վայսեր հրամանով:

Վատահ էինք, թե թուրքերը սուտ պատմություններ էին հորինել հայերի ապստամբության շուրջը:

21 հուլիսի, 1915 թ. – Թուրքերը լավ գիտեին, որ Եվրոպայում կատաղի պատերազմ էր մղվում, քրիստոնյա ազգերը շատ են զբաղված և չեն կարող օգնել հայերին, ուրեմն առիթը կարող էին օգտագործել ...

29 նոյեմբերի, 1915 թ. – Ընդհանրապես եմ դանիացի բարեկամներից, որոնց շնորհիվ կարող եմ օրը 300 հոգու ապուր տալ...

21 դեկտեմբերի, 1915 թ. – ...Դաշտն ամբողջովին ծածկված էր մերկ, անթաղ դիակներով ... Մայրը բավական փնտրելուց հետո գտնում է իր վեց տարեկան աղջկան, որ մի քարի վրա մերկ նստած լալիս էր ... Պատկերացնել թե ինչ վախի ու չարչարանքի միջով է անցել նա...

... Դուք Դանիայի մայրեր, մտածեք, եթե սրանք ձեր երեխաները լինեին ... դուք, որ չեք խնայում նրանց աշխարհի բարիքները...

Մարիա Յակոբսոնի օրագրությունը ավարտվում է «բայց...» բառով:

Բայց մի՞թե նույնն է լինելու մարդկության ընթացքը մոլորակի վրա: Մի՞թե Հայոց Դատը չի լինելու մարդկության մաքրագործման աղբյուրը: Եվ մի՞թե դանիացի միսիոներուհու անունը Հայոց դատի հենասյուներից փաթաթված մի գեղեցիկ ծաղկեպսակ չէ, որի արմատները քրիստոնեության պարարտ հողում են:

Այո, մարդկային ցեղը սիրելու համար պետք է լինել խղճմտանքի և ազնվության բարձրակետում, ինչպես ջարդերին հակազդող օտարերկրյա գործիչները: Պետք է սիրել Աստծուն, ինչպես Մարիա Յակոբսոնը: Պետք է հետևել Ֆրիտյոֆ Նանսենի՝ բարոյականության կոչող բարձրակարգ բանականության կանչին:

## Մինչև պատերազմը

Ֆ. Նանսենի մարդասիրությունը գործնական էր և վերաբերվում էր ոչ միայն աղետոյալին ձեռք մեկնելու փութաջանությամբ: Եռանդուն հասարակական գործիչն իր մարդասիրական գործունեության ընթացքում մշտապես ձգտել է գիտական աշխատանքների գնով ապրելու ուղիներ հարթել: Իբրև մարդ բաց ճակատով՝ տիեզերական հավերժության դեմ դիմաց: Եվ մի՞թե դրա ապացույցը չէր եռամյա դժվարին նավարկությունը դեպի բևեռ՝ «Ֆրամ» նավով, երբ դեռ երիտասարդ էր ու տանն էր թողել հազիվ թոթովող դստերն ու սիրելի կնոջը՝ Եվային: Նրա հարազատները, բարեկամները գնահատում և ամեն կերպ օժանդակում էին Նանսենին՝ գնալու համար ոչ միայն գիտական, այլև մարդկային արժանապատվությունը բարձր պահող հենարաններ հայտնագործելու ճանապարհով: Նրա դուստրը՝ Լիվ Նանսենը, որ հետագայում անմահացրեց հոր կերպարն իր «Գիրք հորս մասին» աշխատության մեջ, այն գրելու համար տքնաջան կերպով ուսումնասիրում էր Նանսենի թողած օրագրությունները: 1909 թ. Նանսենը կորցնում է սիրելի կնոջը: Մի պահ թվում է, թե կյանքը կանգ է առնում նրա համար հենց այնտեղ, որտեղ արդեն ավարտված էին օվկիանոսագիտական կարևոր արշավանքները, նոր խոսքեր էին գրանցվել Քրիստիանիայի համալսարանում՝ կենսաբանության բնագավառում, Նորվեգիայի համար ներդրումներով էին հանձնվել դիվանագիտական աշխատանքները Լոնդոնում. . .

«Մայրիկի մահից հետո օրագիրն ավելի անձնական էր դարձել և արտացոլում էր հայրիկի տրամադրությունը:

... Հայրիկը միշտ, բոլոր պայմաններում կարողանում էր պահպանել ինքնատիրապետումը, որին դեռ սովորել էր մանկուց՝ Ֆրյոյենում, և այդ հատկությունն ուղեկցեց նրան ողջ կյանքում: Նրանց ողջ ցեղն այդպիսին էր: Նա երբեք անգործ չէր լինում, և, հատկապես, այս որակներն էին, որ փրկեցին նրան մեկամաղձությունից և հոռետեսությունից, որն իր լոնդոնյան ելույթում նա անվանեց «ոչ պակաս արատ, քան մյուսներն են»: Նրան թվում էր, թե ապագան կորցրել է իր նշանակությունը, որ արժեքների կշռադատման ժամանակն է: Օրագիրն այնպիսի տպավորություն է թողնում, որ ասես զրված է հույսը կորցրած, ակնապիչ հայացքով անցյալին նայող, ինքնամփոփ ու մտախտի մի մարդու կողմից: Նրա մտնման ճնշվածություն էր առաջացել միայն «Ֆրամով» նավարկությունից հետո: Աշխարհից կտրված այդ երեք տարիները նրան վերածել էին արմատներ չունեցող մարդու և նրա համար հեշտ չէր կրկին իր տեղը գտնել: Բայց այն ժամանակ նրա կողքին էր սիրելի կինը, որին հաջողվեց հանել նրան մտն ինքնամփոփումից:

Ֆրիտյոֆ Նանսենի խորհուրդները՝ պատվի ու պարտքի զգացողությունը դեռ ուժի մեջ էին, բայց այս դեպքում դա բավական չէր: Նա անտարբեր էր ամեն բանի նկատմամբ, նրանում ապրում էր միայն վիշտը Եվայի համար: Հայրիկը պայքարում էր իր մտայլ խոհերի դեմ, փորձում նոր հենարան, հավատ, նոր գործ գտնել, որը կյանքի կկոչի իրեն և կկապի մարդկանց հետ:

...Կարծում եմ, որ անորոշության ու տրտմության այս տարիները նրան հանգեցրին այն մարդասիրական գաղափարին, որի մասին և խոսում է քիչ ավելի ուշ»:

(Лив Хансен Хейер “Книга об отце”)

Աստիճանաբար հաղթահարելով կսկիծն ու տրտմությունը, Նանսենը նախապատրաստում էր իրեն: Գիտենալով, թե նրա մոտ որքան մեծ էր պատասխանատվության զգացումը, կարելի է պատկերացնել, թե որքան խորն էր նա ապրում իր սեփական անկումը:

Այնուամենայնիվ, հաղթեց մարդկային առողջ բանականությունը, մարդ լինելու կոչումը, մարդկության համար ուժերն օգտագործելու պատասխանատվության զգացումը:

«1910 թ. Նորվեգիայում մեծ թափով սկսեցին անցկացվել ծովային դիտարկումներ, - շարունակում է Լիվը: Նանսենն ուշադիր հետևում և օգնում էր դրանց կազմակերպմանը: 1910-ի ամռանը նա Յոհան Յորտի, Հելլանդ Հանսենի և անգլիացի գիտնականների հետ միասին զբաղված էր Ատլանտիկ օվկիանոսի հետազոտությանը՝ «Միքայել Սարս» նավի վրա: Հյուսիսում՝ Նորվեգական ծովի սահմանի մոտ «Ֆրամ»-ի վրա աշխատում էր Ռուալ Ամունդսենը, իսկ Նորվեգական ծովը բաժին էր ընկել Նանսենին: Նա «Ֆրիտյոֆ» հրետանավով լողում էր Գրենլանդիայի ու Իսլանդիայի ափերի մոտ: Այդ տարիներին մեր երկիրն առաջնակարգ տեղ էր գրավում հետազոտական ուսումնասիրության մեջ, որի արդյունքներն արժեքավոր տեղ են գրավում նավագնացության, ձկնորսության, ինչպես նաև եղանակագիտության ծառայության համար:

Հայրիկին ամենից շատ զբաղեցնում էին հետազոտական մեթոդների կատարելագործման և գործիքների հարցը: Ծովերի հետազոտման միջազգային լաբորատորիայի ղեկավար լինելով հանդերձ, նա անդադար աշխատում էր սարքերի և հետազոտական մեթոդների կատարելագործման համար, որով էլ մեծ ազդեցություն թողեց համաշխարհային օվկիանոսագիտության զարգացման վրա:

Միևնույն ժամանակ հայրիկը զբաղվում էր պատմական ճշգրտումներով իր «Հյուսիսի սառույցների և մառախուղների մեջ» գրքի համար,

որի վրա աշխատել սկսել էր դեռ 1906 թ. -ից Լոնդոնում: . . . Միայն 1911 թվին, երբ գիրքը լույս տեսավ մեկ առանձին հատորով, այնժամ ես զգացի, թե որքան հսկայական աշխատանք է ներդրվել նրանում:

Այնուհետև, Նանսենի կյանքի տարեգրությունը հուշում է, որ նա 1912 թ.-ից մինչև 1914 թվը օվկիանոսագիտական արշավ է ձեռնարկել դեպի Շպիցբերգեն՝ «Վեալեն» զբոսանավի վրա, «Կորրեկտ» շոգենավով նավարկել է դեպի Ենիսեյի գետաբերան և ուղևորություն ձեռնարկել Միքիբով ու Հեոավոր Արևելքով: Միքիբյան ճանապարհորդության մասին հրատարակվել է «Դեպի ապագայի երկիր» գիրքը: Փառքն ինքնին ընդառաջ էր գալիս նրան, երբ նա չէր էլ մտածում դրա մասին: (Ֆր. Նանսենի «Շպիցբերգեն» և «Դեպի ապագայի երկիր» գիրքը, ուր ընդհանրացված է հեղինակի կերպարն իբրև մարդ ու գիտնական, այսօր արդեն հայ ընթերցողի սեղանին են հայերեն լեզվով: Նրանց թարգմանությունն իրականացրել է Հայաստանում «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամը՝ Նորվեգական NORLA կազմակերպության միջոցներով):

1914 թ. ամռանը Հելլանդ Հանսենի հետ Նանսենը «Արմատեր» նավի վրա նոր օվկիանոսագիտական արշավ էր ձեռնարկել Քրիստիանիա-Լիսսաբոն-Մադեյրա-Ազորի կղզիներ երթուղում: Յուրաքանչյուր նավահանգստում նա շտապում էր նորություններ իմանալ Եվրոպայում ծավալվող իրադարձությունների շուրջը: Նախազգուշացումը չխաբեց նրան. պատերազմն սկսվեց: Տուն վերադառնալով, նա կոչ է անում նորվեգ ժողովրդին, պատրաստ լինել իր երկիրը պաշտպանելու:

Այդ օրերին Նանսենն ապրեց հաջորդ մեծ վիշտը: Վախճանվեց նրա մտերիմ ու բարեկամ Մոլտկե Մուն:

«Երկրի համար դա մեծ, իսկ ընկերների համար անդարձ կորուստ էր, - գրում է Լիվը: - Մեր գրականության պատմության մեջ վաղուց էր ընդունվել նրա նշանակալի դերը ժողովրդական հեքիաթների և ավանդությունների հետազոտման մեջ. . . Երջելով երկրով մեկ, նա գրի էր առնում առակներն ու երգերը: Եվ 1912 թ. -ի աշնանը հրատարակեց «Միջնադարյան նորվեգական ժողովրդական երգեր»-ի գիրքը:

Մոլտկեյի հիվանդությունն ու մահը ծանր տպավորություն թողեցին հայրիկի վրա, սակայն երկրում կատարվող իրադարձությունները շեղեցին նրա ուշադրությունը: Պատերազմի սպառնալիքն ավելի էր մտնում: Անհնար էր հավատալ դրան, և միայն նորվեգացիների համար չէր դժվար նայել փաստերի երեսին: Պատերազմ մեր օրերում, ո՛չ, չի կարող պատահել:

Սակայն Նորվեգիայում, իսկ ավելի ճիշտ Լյուսակերում մի այնպիսի թերահավատ մարդ գտնվեց, որը ի մի էր բերում փաստերը և աճող

անհանգստությամբ էր հետևում իրերի ընթացքին: Այժմ էլ նա չէր կասկածում, որ ամեն վայրկյան հնարավոր է «անսպասելի»: 1913 թ.-ի մայիսի 20-ի ամրոցի առջև գտնվող հրապարակում տեղի ունեցած մեծ միտինգի ժամանակ, որը նվիրված էր ժողովրդական պաշտպանությանը, Նանսենը հանդես եկավ շուրջ երեսուն հազար նորվեգացիների առաջ, ասելով, որ անհրաժեշտության դեպքում պետք է զենքը ձեռքներիս, ծովում թե ցամաքում՝ պաշտպանենք մեր չեզոքությունը: Ամեն բան խոսում է այն մասին, որ նոր սկսվող պատերազմը խաղարկվելու է մեր ավերի մոտ: Պատերազմներում հաճախ այնպես է լինում, որ մեծ ազդեցությունները փոքրերի կարիքն են ունենում: Հետագայում այլևս ոչ մի խոսք այն մասին, որ ուզում ենք պահպանել Նորվեգիայի չեզոքությունը, մեզ օգուտ չի տա: Չեն օգնի ո՛չ ընկերական, ո՛չ էլ խաղաղասիրական համոզմունքները: Մեր ժամանակներում իրադարձություններն նպատակասլաց են զարգանում և հնարավոր է, որ վրա կհասնեն ավելի շուտ, քան ենթադրում ենք:

Նանսենը դատապարտում է պատերազմը «Դեպի ապագայի երկիր» գրքի ներածության մեջ, որ լույս տեսավ 1914 թ.: «Ինչ անհեթեթություն է համաշխարհային հրդեհի պատկերը, - գրում է նա, - որը գնալով ավելի է բողբոջվում Եվրոպայում: Ինչո՞վ կավարտվի այս համաշխարհային ծեծկոտուքը, դեռ ոչ որի հայտնի չէ: Այն կստիպի գնահատելու կյանքի արժեքները, «սակայն ինչպե՞ս...»: Նույն պատերազմի մասին է Նանսենը գրել «Բաց երկնքի տակ» գրքում: «Դրան, - գրում է նա, - խառնվում է ամեն ինչից զրկված միլիոնավոր կանանց ողբը... Ես տեսնում եմ իրենց որդիներին փնտրող մայրերի հուսահատությունը... Գերմակած, վշտից կռացած հայրերին... Խենթության մղձավանջ... Եվրոպայի «մշակույթի կրողները» ոտնահարում են մշակույթը, Եվրոպան վերածում ավերակներին» («На волнѣмъ вѣздухе», Л., 1939):

«Զաղաքական առաջադեմները», ինչպես հավաստում է Լիվ Նանսենը, դժգոհ էին իրենց հանգիստը խաթարողներից: Բայց, այնուամենայնիվ, «պաշտպանության գործը բազմաթիվ կողմնակիցներ գտավ: Նրանցից շատերը լինում էին Պուլիյոգոյայում և գործողության ծրագրեր մշակում շատ զիջերներ...»

Ես ներկա եմ եղել հայրիկի շատ ելույթների պատերազմից առաջ, և հետո: Տեսել եմ և՛ ունկնդիրների բուռն հիացումները, և՛ վրդովմունքը: Մի անգամ նույնիսկ քար շարտեցին նրա վրա ...

Գունմար Կնուդսենը, որը 1913 թ. -ին երկրորդ անգամ պրենիեր-մինիստր դարձավ, 1914 թ. -ի փետրվարին հանդես եկավ իր հանրաճանաչ համոզմունքով, որ «քաղաքական երկինքն անամպ է»: Նանսենը սարսափեց կարդալով թերթում հաշվետվությունները, և մի քանի օր հետո

Կալմենյեր փողոցի վրա գտնվող դեսպանատանն իր ելույթում արտահայտեց իր հակադրությունը պրենիեր – մինիստրին, պնդելով, որ այդ հայտարարությունը, հավանական է, այնքան էլ լավ մտածված չէ:

«Ես ինքս որոշակի առընչություն եմ ունեցել ներքին քաղաքական հարցերի հետ, և պնդում եմ, որ եթե անամպ երկնքի ներքո եվրոպական ժողովուրդները այդպես ամուր զինվում են, ուրեմն նրանք ուղղակի խելագարներ են: Նույնիսկ Լյուդ-Ջորջն է խոնարհվում անհրաժեշտության առաջ, նույնիսկ նա է փոփոխել իր քաղաքականությունը: Արդյոք դա նրանից չէ՞, որ Լյուդ-Ջորջն իրեն անամպ է համարում: Ռ-ազմածովային նավատորմին Գերմանիայի միջոցների հատկացումը, ինչպես նաև Ռուսաստանի արագ զինումը, խոսում են մեկ այլ բանի մասին: Մենք կանգնած ենք հրաբխի ծայրին, որը թույլ է առ թույլ պատրաստ է ժայթքելու: Վայ նրան, ում դա կշփոթեցնի: Իսկ մենք պետք է պատրաստ լինենք: Ես կանխորոշում եմ գալիք ժամանակները, երբ սկանդինավյան երեք ցեղերը համախմբված կդիմավորեն ցանկացած թշնամու»:

«Մի քանի օր անց, Նանսենը հանդես գալով Ուսանողական ընկերությունում, կոչ արեց ուսանողներին միավորվելու երկրի պաշտպանության համար, և առանց երկմտելու, հաշտվել բանակում զինվորական ծառայության հետ: Հոկտեմբերի վերջին, համալսարանի դահլիճում նա զեկուցում կարդաց «Փոքր ազգությունների իրավունքի» մասին: Նա ասում էր, որ պատմությունն ապացուցում է, որ փոքրիկ ազգությունները մարդկությանը հսկայական արժեքներ են տալիս: Բայց երբ խոշոր ազգությունները պնդում են իրենց իրավունքը փոքրերի բռնատիրության համար, նրանց հետաքրքրում է ոչ թե որակը, այլ քանակը:

«Կա մի բան, որն առավել ևս արժեքավոր է, քան կյանքը, դա մշակութային ժառանգությունն է, որը պարտավոր ենք հասցնել գալիք սերունդներին: Այն փոքր ազգություններին ապրելու իրավունք է տալիս: Սև կլիմի այն օրը, երբ Երկրի երեսից վերանան փոքր ազգությունները: Բայց որտեղ իրավունքն է, այնտեղ էլ՝ պարտականությունը: Յուրաքանչյուր փոքր պետություն պարտավոր է պահպանել իր մշակույթը և փոխանցել այն հետագա սերունդներին»:

Նանսենի ելույթներն ու հողվածները հաջորդում էին մեկը մյուսին, և Լիվ Նանսենի աշխատությունը գրված նրա օրագրությունների հիման վրա, լավագույնս են պատկերացում տալիս թե ժամանակի, և թե ժողովրդի ապագայով մտահոգ նրա զավակի մասին:

«...Նորվեգիայի ապագան մտայլ էր: Ռժեղացավ ստորջրյա պատերազմը, նավերն ավելի հաճախակի էին հարձակման ենթարկվում, և գոհվում էին մեր մավաստիները: Գերմանական սպառնալիքով հասավ առևտրային պայմանագրերի կնքմանը, և Անգլիայի համար ավելի էր

բարդանուն մեզ համար ածուխ ուղարկելը: Մեր քաղաքական գործիչները համոզում էին, որ հոգում են մատակարարման մասին, որ մենք բավականաչափ հաց ունենք և անհրաժեշտություն չկա անցնելու հացի կտրոններին»:

Այնուամենայնիվ, սովմ սպառնաց Նորվեգիային: 1917 թ. ապրիլին անցնելով դաշնակից ուժերի կողմը, ԱՄՆ-ը մտավ պատերազմի մեջ և սկսեց ճնշում գործադրել չեզոք երկրների վրա, արգելելով նրանց սնունդ մատակարարել Գերմանիային: Ամերիկայից հացահատիկ չստանալու դեպքում վեց ամիսն էլ բավական էր, որպեսզի Նորվեգիայում սկսվեր սովը: Եվ միայն Ամերիկայում տաս ամիս տևած ծանր բանակցություններից հետո Նանսենին հաջողվեց հասնել նորվեգ ժողովրդի համար փրկարար համաձայնագրի ստորագրմանը:

1918 թ. մայիսին «Բերգենսֆյորդ» շոգենավով Նանսենը վերադարձավ Նորվեգիա: Աշնանը պատերազմն ավարտվեց Եվրոպայում: Նանսենը հույս ուներ, թե շուտով կկարողանա զբաղվել գիտական աշխատանքով: Բայց նրան հանձնարարվեց Ազգերի լիգայում ներկայացնել Նորվեգիան:

## Նանսենը Ազգերի լիգայում

Գիտնական ու բևեռախույզ Ֆրիտյոֆ Նանսենի կյանքի մեծագույն իրողությունն, իսկապես, ընկած էր նրա կյանքի վերջին՝ 10-15 տարվա շրջանում, երբ նա ետպատերազմյան ծանր տարիներին դարձավ մարդկության բարի հանճարը: Մեր միջազգային իրավունքի և իրավասության հիմքում, ոչ թե ուժ: Ահա թե ինչին էր ուղղված նրա վերջին տարիների գործունեությունը: 10 տարի շարունակ նա մնաց Ժնևում որպես Նորվեգիայի ներկայացուցիչ և աշխատեց հնարավորինս ամրապնդել լիգայի գործունեությունը, մշակել առավել պարզորոշ, ոչ երկիմաստ ծրագրեր: Նրան շարունակ մտահոգում էր, թե որքան վտանգավոր է փոքր երկրների դրությունը մեծ տերությունների միջև, միևնույն ժամանակ առաջ է քաշում համաշխարհային կարգուկանոնի վերականգնման հարցում չեզոք երկրների ունեցած նշանակությունը:

Մինչև լիգայում Նորվեգիայի ներկայացուցիչ դառնալը, Նանսենը խոր երկմտանքի մեջ էր, քանի որ վերջին տարիներին դիվանագիտական, քաղաքական ասպարեզների հետ իր շփումները ցույց էին տվել, որ նրանց շրջանակում իր՝ 60-ն անց մարդու ջանքերը համառ էին լինելու:

1918 թ. –ին միտինգի ժամանակ հիմնադրվում է Ազգերի լիգայի հետ համագործակցող նորվեգական կազմակերպությունը, որի նախագահ ընտրվելով, Նանսենը կանխորոշեց ոչ միայն իր, այլև այլ ժողովուրդների պատկանող միլիոնավոր մարդկանց ճակատագիրը: 1920 թ. –ին գտնվելով Ժնևում, որպես պատվիրակ Ազգերի լիգայի առաջին նիստի բացմանը, Նանսենը կյանքի կոչեց դեռ 1914 թ.-ին իր կողմից ձևավորված գաղափարը: Այն վերաբերվում էր փոքր երկրներին: Նա վաղ էր մտորել այն պրոբլեմների շուրջը, որոնք այժմ ծառայել էին ողջ հասակով: Նա գտնում էր, որ չեզոք երկրները ոչ միայն Լիգայի անդամներ դառնան, այլև ունենան հավասարազոր իրավունքներ մեծ պետությունների հետ: Նա պնդում էր, որ Լիգայում ընդգրկվեն բոլոր երկրները, չբացառելով պարտվածները: Նորվեգիայից Լոնդոն, Լոնդոնից Փարիզ, այս անհանգիստ մարդը աշխատում էր ֆիզիկական ու մտավոր ուժերի ողջ լարումով:

Շտապելով Փարիզ, ուր մտադիր էր հանդիպել մարդկանց, որոնք պետք է որոշում ընդունեին Լիգայի Կանոնադրության մասին, Նանսենը պարզեց, որ Կանոնադրությունն արդեն մշակված է, ըստ որի որոշված էր ստեղծել հաղթած տերությունների միություն: Ռուսաստանը չէր ընդգրկվում միության մեջ, քանի որ Գերմանիայի հետ հաշտություն էր կնքել այն ժամանակ, երբ մյուս երկրները դեռ շարունակում էին պատերազմը, և, մահ՝ նրա նոր կառավարման ձևը չէր ընդլայնվում: Գերմանիայի մասին խոսք չկար, իսկ չեզոք երկրներն ընդհանրապես մոռացված էին: Այդ ժամանակ, ահա, Նանսենը կենտրոնացնում է իր ողջ ուժերը և երկար բանակցություններից, ուղևորություններից ու համառ ջանքերից հետո սկսեց իրագործել սեփական նախաձեռնությունները, որով բարձրացնում էր նաև Ազգերի լիգայի վարկանիշը: Եթե վերջինս բարի կամքի մարմնացում էր, ուրեմն պետք է մասնակցեք Ռուսաստանում սովի և հիվանդության դեմ պայքարին: Նանսենը փորձեց ապացուցել, որ հումանիստական ու մեծահոգի օգնությունը առանց որևէ քաղաքական հայացքների ավելի շուտ կարող է Ռուսաստանին ընդգրկել եվրոպական ժողովուրդների ընտանիքի մեջ:

«Ռուսաստանը և խաղաղությունը» (1923թ. ) գրքում Նանսենը պատմում է սննդի և դեղորայքի՝ Ռուսաստան առաքման , տեղերում դրանց բաշխման, մոլորակի մի հսկա հատվածի վրա մարդասիրական այն ակցիան իրագործելու մասին, որի համար դիմեց հաղթանակ տարած պետությունների բարձրագույն խորհրդին՝ հատուկ հանձնաժողով ստեղծելու մասին: Վիլսոնը, Կլեմանսոն, Լլոյդ Ջորջը, Օրլանդոն համաձայնեցին մարդասիրական գաղափարի հետ այն պայմանով, որ վերջ դրվի Ռուսաստանի ներքին երկպառակությանը: Դա նշանակում էր քաղաքա-

կան ինտերվենցիայի կիրառում և Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Չիչերինը մերժեց այն: Երկու կողմն էլ շնորհակալություն հայտնեց Նանսենին, բայց՝ մերժելով: Միայն երկու տարի հետո Ֆր. Նանսենը սկսեց Ռուսաստանում իրականացնել սեփական մախազիծը, որպես Կարմիր խաչի լիազոր ներկայացուցիչ:

Կոտրելով Ազգերի լիգայի և շատ քաղաքացիների դիմադրությունը, Նանսենը մեծ աշխատանքներ տարավ փախստականների, գաղթականների, սովի ու հիվանդության ճիրաններում փրկություն որոնողներին օգնելու ուղղությամբ: Նա անձնական, նյութական ու ֆիզիկական զոհողությունների գնով ապացուցում էր, որ հնարավոր է ջարդել այն պատմեշները, որ քաղաքական այրերն անվանում էին «ռեալ» քաղաքականություն: Ֆրիտյոֆ Նանսենը սինթեզեց կրոնական ուսմունքն ու քաղաքականությունը, ապացուցելով, որ մարդու նկատմամբ սերն ու բարեգործությունը միակ ռեալ քաղաքականությունն է:

«Ազգերի լիգայում Անգլիայի ներկայացուցիչ վիկոնտ Ռոբերտ Սեսիլը սովորաբար կիսում էր հրատապ հարցերին վերաբերվող Նանսենի հայացքները: Մեկ անգամ չէ, որ նրանք միասին կարևոր հարցեր էին քննարկել և դարձել էին մտերիմ ընկերներ: Սեր Ռոբերտ Սեսիլը բազմիցս արտահայտվել է այն մասին, թե որքան վեհ էր Նանսենի պահվածքը Ժնևում: Երբ հարցը գնում էր խաղաղության և լիգայի բարոյական կողմի մասին, Նանսենը երբեք մախտույ չէր տեղեկանում, թե ինչպես են տվյալ հարցին նայում հզոր տերությունները:

«Եթե տվյալ դեպքում մենք պնդենք մերը, ապա խիզախում ենք տրամադրելու մեր դեմ Ֆրանսիային ու Անգլիային, - ասաց մի անգամ լորդ Սեսիլը: «Անշուշտ, - պատասխանեց Նանսենը, - իսկ ի՞նչ կա որ»:

“Лив Хансен Хейер Книга об отце”

Ազգերի լիգան դարձնել աշխարհի խաղաղության հաստատման գրավականը: Ահա թե ինչն էր ուժ տալիս Նանսենին այն պայքարում, որ նա վարում էր Լիգայում բոլոր ազգերի միության համար: Գերմանիայի կլորայան խնդրով նա բազմիցս բանակցություններ է վարում կոմս Բերնսդորֆի հետ, որը հետո դարձավ Գերմանիայի պատվիրակը: Լոկարնոյի պայմանագրով 1926 թ. Գերմանիան ընդգրկվեց Լիգայի կազմում:

Նոբելյան խաղաղության մրցանակակիր, ֆրանսիացի Արիստիդ Բրիանը սքանչելի խոսքերով ողջունեց Գերմանիայի մուտքը Լիգա. «Այլևս ոչ մի պատերազմ: Այնպես, ինչպես անհատ քաղաքացիներն են գնում դատարանում որոշելու իրենց խնդիրները, այնպես էլ մենք պետք է որոշենք բոլոր խնդիրները՝ խաղաղ ճանապարհով: Կորչի գեները: Բացենք ճանապարհը միջնորդության, միջնորդական դատարանի և խա-

ղաղության համար»: Այնուհետև, Լիվ Նանսենը իր գրքում շարունակում է խաղաղության մարտիկ հոր խոսքերը այն մասին, որ պատերազմը տարերային ուժերի ծնունդ չէ: Այն մարդկային կամքի ծնունդ է, որը մարդկային ցեղի ամոթն ու խայտառակությունն է:

1923-ին Նանսենը լիգայում հանդես եկավ Մուստոլինիի ազդեցիկի դեմ, գիտակցելով, որ լիգան կկորցնի իր հեղինակությունը, եթե մտնների արանքով մայի դրան: (Սահմանային պատահարում Գերմանիայի և Իտալիայի միջև սպանվել էին մի քանի իտալացիներ: Մուստոլինին իտալական նավատորմին հրաման էր տվել գրավել Կորֆու կղզին, որի փոքրիկ կայազորը ի գորու չէր դիմադրել: Հունաստանը բողոքել էր Լիգային և Մուստոլինիի դեմ սանկցիաների իրավունք խնդրել):

Իտալիան լիգայի հիմնադիր անդամներից էր, և նրա հետ կոնֆլիկտն անցանկալի էր: Բայց Նանսենը պնդում էր, որ մեծ տերություններին ևս փոքրերը կարող են համարձակ դեմ կանգնել: Իր ելույթում նա մեղադրեց Իտալիային ինքնակառավարման մեջ, Իտալիայի պատվիրակներն աղմուկ բարձրացրին, մախազահը Նանսենից լռել պահանջեց: Հետո վերջինիս նորվեզացի ընկերները պատմում են, թե այս իրողությունից խիստ ազդված Նանսենն ինչպես է կատակի միջոցով հասնում ինքնատիրապետման: Երբ ռեստորանում բերում են կերակրացանկը, և Նանսենը նկատում է «ռիզոտո», «սպագետտի» բառերը, վրա է բերում. «Իտալական կերակուրների մասին խոսք անգամ չի կարող լինել: Մենք այս պահին տնտեսական սանկցիա ենք ներկայացնում Իտալիային»: Ապա ընտրում են մի չեզոք կերակրատեսակ՝ տապակած ճուտ: Այս անգամ Նանսենը հարցնում է, թե ինչով են համոզված, որ ճուտն իտալական ձվից չէ դուրս եկել: Միայն, երբ կատակին ներկա մատուցողը հավաստացնում է, որ ճուտը շվեցարական ձվից է դուրս եկել, հանգիստ ճաշում են:

Հանգստությունն, իհարկե, Ֆրիտյոֆ Նանսենի համար չէ: Այդ վկայում է նաև նրա սիրած այն արտահայտությունը, որը նա կրկնել է թե իր երեխաների, թե ուսանողության շրջապատում՝ «Հանգստանալ, նշանակում է զբաղվել այլ գործով»:

Լիգայի հետ համագործակցման նորվեզական ծրագիրը, որի հիմքում մանսենյան մտահղացումներն էին, պահանջում էր, որպեսզի բոլոր տիպի կոնֆլիկտները լուծվեն խաղաղ ճանապարհով: Այն ներառում էր նաև զինվորական ծառայություն, զինամթերքի արտադրություն և միջազգային հսկողության սահմանում առանձին պետությունների ռազմականացման վրա: Պահանջները դեմոկրատական էին: Նանսենը, որին «երազող» անվանումն էին տալիս, պարզ գիտակցում էր, թե փոխզիջումային ինչ մթնոլորտը կարող էր հանգեցնել Լիգայի փլուզմանը և 2-րդ

համաշխարհային պատերազմի սանձազերծմանը: Լիգայի հետ մեծ հույսեր կապող անհատը գիտեր, որ նոր աղետն անխուսափելի կլինի, երբ լիգան զրկվի վստահությունից ու հեղինակությունից, և ամեն կերպ փորձում էր կանխել այն: Կանխագալով այդ վտանգը, մեծ հումանիստը ցավով է նկատում, թե ինչ հետևանքներ կունենա նոր պատերազմը, և ինչպես կծառայի գիտությունն այդ աղետին: Որքան խոր էր մտածված գիտնականի այն խոսքը, թե անհրաժեշտ է բնությունը ենթարկել իրեն, ոչ թե՛ իր նմանին:

Իսկապես, Ժնևում Նանսենին շատ բաներում անփոխարինելի էին համարում ՉԷ՞ որ նա քայլ առ քայլ ապացուցում էր, որ ինքն, իրավամբ, ազգամիջյան խաղաղության և արդարության գաղափարի մարմնացում է: Իսկ 30-ական թվականներին, երբ նա արդեն չկար, իրողություն են դառնում նրա նախագագումները: Երբում են Լիգայի դիրքերը:

### **Առնչությունները հայոց հետ**

Ֆրիտյոֆ Նանսենը որպես գիտակ և կրթված անձնավորություն, վաղուց գիտեր մոլորակի վրա հայ ժողովրդի գոյության ու նրա մշակույթի մասին: Բայց նրա անձնական ծանոթությունները հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ կայանում են նրա գիտական ու հասարակական գործունեության տարիներին: Երկկողմ նշանակության և բավականին հաճելի է եղել Ֆր. Նանսեն – Լորիս Մելիքով բարեկամությունը:

1913 թ. ռուս – նորվեգական սիբիրյան բաժնետիրական ընկերության նախաձեռնությամբ կազմվում է մի արշավախումբ, որն ուսումնասիրելու էր Կարայի ծովով հնարավոր հաղորդակցության ուղիները Կենտրոնական Սիբիրի հետ: Արշավախումբն իր առաքելությունն իրականացնում է «Կորրեկտ» ապրանքատար նավով, մոտորանավակներով, ձիերով, գնացքով: Ենիսեյսկ – Կրասնոյարսկ – Վլադիվոստոկ, Պետերբուրգ, ապա ցամաքով՝ կրկին դեպի ետ: Իբրև բազմակողմանիորեն զարգացած մարդ, արշավանքին մասնակցում էր ռուսական պետական ծառայության մեջ գտնվող, Նորվեգիայում ռուսական դեսպանության քարտուղար, ծնունդով Թիֆլիսից, հայազգի Լորիս Մելիքովը: Գերմանական համալսարանում կրթություն ստացած այս անձնավորությունը, ռուսերենից ու գերմաներենից բացի տիրապետում էր նաև նորվեգերենին, ֆրանսերենին ու անգլերենին: Բացի ի պաշտոնն ունեցած շահագրգռությունից՝ Նորվեգիայից դեպի Ռուսաստանի արևելյան ծայրամասը

նոր առևտրական ճանապարհի բացման հնարավորությունից, Լորիս Մելիքովի խնդիրն էր ուսումնասիրել սիբիրյան հին ու նոր ժողովուրդների լեզուները, բարբառների կապն ու առանձնահատկությունները, որի առումով նրա գիտական գործունեությանն իր խորհուրդներով մշտապես օգտակար էր լինում Ֆր. Նանսենը: Վերջինս, իր հերթին, «Դեպի ապագայի երկիր» գրքում հաճախ է հիշատակում նրա անունը, շնորհակալություն հայտնելով «բազմապիսի աջակցության ու արժեքավոր հարողումների համար»:

«Մենք նրա շնորհիվ հնարավորություն ունեինք ճանապարհին հաճույք ստանալ միշտ նույն սիրալիր, պատրաստական և անթերի հագնված ջենտլմենից, անփոխարինելի հետաքրքիր գրուցակցից, որը հավասարաչափ պատրաստ է և ինքը սրախոսել, և ըստ արժանավույն գնահատել ուրիշի սրախոսությունը», - գրում է Նանսենը: («В стране будучего», 1969, стр. 107):

Լորիս Մելիքովը 1914 թ. –ին ստանալով գրքի նորվեգերեն հրատարակությունը և Նանսենի լուսանկարը, նամակ է գրում նրան, երանությամբ հիշում համատեղ անցկացրած ճամփորդության մասին և հայտնում գիրքը ռուսերեն հրատարակելու իր հնարավորությունների մասին: Այն իրականացավ 1915 թ.: Մույն գրքի հայերեն թարգմանությունն իբրև մեծ հայասերի նկատմամբ հավերժական սիրո մի փոքրիկ արտահայտություն, իրականացավ 2004 թ. –ին: Բայց չէ՞ որ Նանսեն-գիտնական-բևեռախույզի գործունեության դեռ առաջին տարիներին էր հայ ժողովուրդն անդրադարձել նրա գործունեության նշանակությանը: Այդ գործունեությունից 100 տարի առաջ էր, երբ, 1906 թ. Չմյունխայում հայերեն թարգմանությամբ տպագրվեց գիտնականի «Դեպի բևեռ» աշխատությունը: Թարգմանությունը ֆրանսերենից կատարել էր Մեսրոպ Նուպարյանը:

Հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ Նանսենյան առընչություններն, իհարկե, վերաբերում են այն տարիներին, երբ նա խորապես ծավալել էր իր հայանապաստ գործունեությունը:

### **Արշակ Սաֆրաստյան**

1920 թ. Ազգերի լիգայում Նանսենը ծանոթացավ հայազգի պատվիրակ Արշակ Սաֆրաստյանի հետ, որը Նանսենին հանգամանալից ձևով ներկայացնում էր հայ ժողովրդի անցած ուղին, պատմական ճակատագիրը: 1921 թ. նա անգլիական բարեգործական ընկերության կազմում (Հայ գաղթականների կամ լորդ-մերի (քաղաքագլխի) բարեգործական ընկերությունը հիմնվել է 1916 թ. և իր մասնաճյուղերն ուներ տարբեր երկրներում: Նրանց միջոցները հայթհայթվում էին հասարակական կարգով ու մասնավոր մարդկանց միջոցներով և տրամադրվում գաղթա-

կաններին) լինում է Կովկասում ու Հայաստանում, և, վերադարձից հետո, Նանսենի խնդրանքով գրում մի գեկուցագիր հայերի վիճակի մասին: Ներկայացնելով որբերի ու գաղթականների խնդիրը, մթերքի պակասությունը, օգնությունների բաշխման կարգը, Սաֆրաստյանը նկարագրում է թուրքական ավերածությունների դժոխսային պատկերը: Լիզայից հայերի համար պարտք խնդրող Նանսենը, երբ հասկացավ, որ ամեն ինչ գլխիվայր է շրջված, երկար ժամանակ չէր կարողանում գտնել իր տեղը հուզմունքից: Բայց նա չէր կորցնում հավատը, և մշտապես հուսադրողի դերում է եղել հենց իրեն՝ հային:

«Մի քանի օր հետո Նանսենը միայնակ քայլում էր Ժնևյան լճի մոտակայքում: Այստեղ նա պատահաբար հանդիպում է Ազգերի լիգայում հայկական ներկայացուցիչ Արշակ Սաֆրաստյանին: Նրանք երկուսն էլ մտայն մտքերի մեջ էին, և բացատրություններ հարկավոր չէին:

-Կարծես արևմտյան տերությունների կառավարությունները որոշել են մոռանալ Հայաստանի խնդրով համաձայնագրի մասին և կմերժեն փախստականների օգնությունը, - ասաց Նանսենը: Մի օր ճակատագիրը նրանց կհատուցի: Իսկ ձեր ժողովուրդը կվերածնվի և կհասնի իր ազգային իրավունքներին»:

Այս իրողությունը շարադրող Լիվ Նանսեն-Հեյերը հետագայում շարունակեց այն բարի հարաբերությունները, որ ունեին այդ երկու ազնիվ անձնավորությունները: Ա. Սաֆրաստյանը կարևոր տեղեկություններ է տալիս Նանսենի դստերն իր հոր մասին գիրքը շարադրելու ընթացքում, որի համար ստանում է վերջինիս շնորհակալական նամակը: Նա այսպես է գրում. «Թանկագին միտք Արշակ Սաֆրաստյան»:

«Դուք՝ հայերդ եղել եք հորս «սրտի զավակները», ինչպես ասում են մեզ մոտ: Ողբերգական ճակատագիրն այդ խիզախ ժողովրդի՝ նրա հնագույն մշակույթով, արվեստով, ճարտարապետությամբ, երաժշտությամբ այդ սքանչելի երկիրը հիացրել է նրան մինչև կյանքի վերջը...»: Ըստ Մ. Արզումանյանի, 1955 թ. Օսլոյից Սաֆրաստյանին գրված նամակներն անգլերեն են, որոնց հայերեն թարգմանությունները հրատարակվել են պետական արխիվի գիտաշխատող Էմմա Մալխասյանի կողմից, «Բանբեր Հայաստանի արխիվների» 1970, N 2-ում:

Միմոն Փիրումով – (Փիրումյան) Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանության քարտուղարն ու Անդրֆեդերացիայի ներկայացուցիչը: Մտերիմ հարաբերությունների մեջ է եղել նանսենի հետ, հանդիսացել նրա մարդասիրական գործունեության աջակիցը: Խորհրդային կառավարությունը նրան էր տվել Ազգերի լիգայում հայկական փոխառության և նանսենյան ծրագրի պաշտպանության համար Հայաստանի կառավարության ներկայացուցչի իրավունքները: Եվ դա այն բանից հետո, երբ Նանսենը

հեռագրել էր ՀՍԽՀ կառավարությանը «կատարյալ ինֆորմացիայով» շտապ Փարիզ ներկայացուցիչ ուղարկելու մասին: 15 հոկտեմբերի 1925 թվագրված հեռագրում մասնավորապես ասվում է. «...Մտադրություն կա ժողովը գումարել հոկտեմբերի 19-ին, բայց կարելի կլինի մի քանի օր հետաձգել, եթե Չեր ներկայացուցիչը կարող է հասնել...»: (Ըստ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1996, N 1-ում հրապարակված փաստաթղթերի):

Լևոն Բաշալյան (1886-1945) - գրող: 1920 թ. հաստատվել է Փարիզում: Մերտ կապերի մեջ է եղել Նանսենի հետ: Նա Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ գործող ՀԲԸՄ-ի պատասխանատուներից էր:

**Լ. Բաշալյանը Ազգերի լիգայում հայ գաղթականներին Խորհրդային Հայաստանում տեղավորելու համար Նանսենի ծրագրի և Ազգերի լիգայի վերաբերմունքի մասին**

**/ըստ Ֆ. 113, ց. 3, գ. 604, քթ. 45-47 Նյուքի, հրապարակված «Քաներ Հայաստանի արխիվների» 1996, N – 1-ում/**

20 հունիս 1927  
Փարիզ

Նանսենեան ծրագիրը Ազգերու Ընկերութեան Խորհրդին հունիսի 16-ի նիստին մեջ քննուեցավ, ի ներկայութեան Տր. Նանսենի, որ հրավիրուեցավ Խորհրդին սեղան:

Տեղեկաբերը, Չիլիի պատուիրակ պ. Ծիլլէկաս, հարցին պատմականը ընէլէ հետո, խնդրեց Տր. Նանսենէ որ պարզէ, թէ ինչ վիճակի մէջ կը գտնուի այն այսօր:

Տր. Նանսենի տեղեկատուութենն կը տեսնուի, թէ հայ գաղթականներու տեղավորման համար միջազգային փոխառություն մը, ազգերու ընկերութեան հովանավորութեան ներքև, այնպես ինչպես եղավ Աւստրիո, Հունգարիո, Յունաստանի և Պոկարիո համար, պետք է վերջնականապես մէկդի բողոյ, ծանոթ քաղաքական պատճառներու հետևանքով: Մյուս կողմէ, Տր. Նանսենի ջրած ձեռնարկները Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ և այլուր, մասնավոր աղբյուրներն դրամ գտնելու համար, ապարդյուն մնացած են:

Նոր իրողություն մը սակայն հարցին կերպարանքը փոխած է: Հայաստանի կառավարությանը այժմ ի վիճակի կթուի իր իսկ միջոցներով իրագործելու Հայաստանի ոռոգման և չորացման աշխատությունները: Բայց ասիկա վերջնականապես չի լուծէր հարցը, և Տր. Նանսեն միևնույն եզրակացության հանգած է, ինչպես Հայոց Բարեգործական ընդհանուր Միությունը, այսինքն թե Հայաստանի մէջ արժեքուած հողերուն վրայ

պետք է տակավին փոխադրել գաղթականները, տեղավորել և ինքնաբավ դառնալու միջոցները հայթհայթել անոնց: Տր. Նանսէն կը հաշուէ, թէ 300.000 անգլ. ոսկիի գումար մը անհրաժեշտ է այս գործողութեանց համար:

Տր. Նանսէն յարաբերութեան մտած է Երևանի կառավարության հետ և խնդրած է ճշտել իրենց գործի պլանը և հավաստիքներ տալ ոռոգման ու չորացման աշխատութեանց գործադրութեան համար: Տր. Նանսէն պատասխան մը խնդրած է Խորհրդին գումարման թուականէն առաջ (13 յունիս), և հայկական կառավարությունը խոստացած էր պատուփրակ մը որկել Նորվեկիա այդ նպատակով: Բայց Ժրնն գալու համար, Նորվեկիաէն մեկնած ատէնը, Տր. Նանսէն դեռ որևէ հաղորդագրություն չէր ստացած Երևանէն:

Բուն տեղավորման համար անհրաժեշտ 300.000 անգլ. ոսկիէն, Տր. Նանսէն յոյս ունի, որ գաղութներու հայերը պիտի կրնան մեկ երրորդը տալ: Մնացեալ 200.000 ոսկիին համար կոչում կ'են Խորհրդին, և մասնավորապէս մեծ պետութեանց:

Տր. Նանսէն այդ կոչը ուղղեց շատ յուզիչ կերպով: Յիշեցուց հայկական ողբերգությունը, Դաշնակիցներուն տված հանդիսավոր խոստումները, և եզրակացուց ըսելով, որ Ազգերու ընկերութեան արժանապատվությունը կ'պահանջէ, որ գոնէ այս եղանակով օգնություն ընձեռէ հայ գաղթականներուն: Շատ ազդու վերջաբանով մը, Տր. Նանսէն ըսավ, թէ այս յուսահատական կոչը ուղղելուն նպատակն այն է, որ կուզէ փարատել Ազգերու ընկերութեան ցոյց տուած անգործութեան գէշ տպավորությունը:

Այս խոսքերուն յաջորդող տաժանելի լուծումը խզեց Գերմանիա պատուիրակ Տր. Շքրեզէման, որ ըսավ, թէ գերմանական կառավարությունը, որ աջակցած էր Տր. Նանսէնի ջանքերուն՝ ամեն կողմ ցրուած հայ գաղթականներուն համար «նոր օջախ մը գտնելու», մեծ գոհունակութեամբ կը հաստատէ թէ Տր. Նանսէն, յաջող ելք մը գտնելու համար իր հանդիպած բոլոր դժվարութեանց հակառակ, արդիւնքի մը հասնելու յոյսը չ'է կորսնցուցած: Իր մասին խոսելով, սիրալոյսով պիտի խնդրէ իր կառավարութենէն, թէ ինչ միջոցներով և ինչ չափով կրնայ նպաստել այս գործին վերջնական կարգադրութեան: Ինք անկեղծօրէն կը յուսայ, որ Տր. Նանսէնի ուղղած նոր կոչը յաջողութեամբ պատկուի:

Անգլիոյ պատուիրակ Սըր Օսթին Չէմպլէյն, խոսք առնելով, ըսավ թէ ավելորդ է յիշատակել այն դժվարությունները, որոնք մինչև ցարդ ապարդյուն դարձուցին Մեծ պետութեանց և Ազգերու ընկերութեան ջանքերը՝ օգնութեան հասնելու տարաբախտ հայ ժողովրդին: Հայկական ողբերգությունը բոլոր ժողովուրդներուն հոգին և խիղճը յուզած է: Ինք սա-

կայն չի կրնար իր կառավարութեան կողմէ որոշ և անմիջական պատասխան մը տալ Տր. Նանսէնին, որ իրեն համար անակնկալ էր: Այսուհանդերձ, իր կառավարութեան պիտի փոխանցէ զայն, և վստահ է, որ լրջօրէն նկատողության պիտի առնուի:

Ուրիշ որևէ պատուիրակ խոսք չառավ, և որոշումը հետաձգուեցաւ յաջորդ նիստին:

Յաջորդ օրը ժողովը որոշեց, որ առաջին օրուան նիստին առենազրությունը և Տր. Նանսէնի հարկավոր դատած բոլոր պաշտոնագրերը Ազգերու ընկերութեան անդամ բոլոր պետութեանց որկուին, և հարցը Խորհրդին յառաջիկայ սեպտեմբերի նստաշրջանին օրակարգը անցուի: Խորհրդին բոլոր անդամները յանձն կառնեն բարեհաճ ուշադրութեամբ քննելու Տր. Նանսէնի աջակցությունները: Մյուս կողմէ Տր. Նանսէն ևս պետք է հարկ եղած տեղեկությունները ձեռք բերէ ոռոգման և չորացման ծրագրին արդի վիճակի մասին:

Տր. Նանսէն, որուն հետ նորէն յետոյ ալ տեսակցեցայ, ինձմէ չժածկեց իր դառն յուսախաբությունը Ազգերու ընկերութեան բռնած դիրքէն: Ինձ ըսավ, թէ մեծապէս շահագրգռված էր հայերուն կատարելիք հանգանակութեամբ ի նպաստ գաղթականներու փոխադրութեան և տեղավորման գործին, և թէ շատ կը փափաքէր այդ մասին տեսակցություն մը ունենալ Նուպար փաշայի հետ:

Տր. Նանսէն այս միջոցիս գիրք մը կը պատրաստէ հայոց և հայկական հայրցի մասին, որ մէկ քանի լեզուներով պիտի հրատարակուի:

Լ. Բաշալեան

### «Խաբված ժողովուրդ»

Ահա թէ որ գրքի մասին է Լևոն Բաշալեանի խոսքը: Գիրք, որը ծնվեց կոտորածից մազապարծ հայ գաղթականներին կյանքի կոչելու նանսէնյան ճիգերի ճանապարհին: Այն հրատարակվեց 1927 թ.-ին Նորվեգիայում՝ «Հայաստանում» վերնագրով: Այնուհետև նույնը՝ Հոլանդիայում: Հաջորդ տարին անգլերեն թարգմանությամբ այն հրատարակվում է Լոնդոնում և Նյու-Յորքում, ֆրանսերեն՝ Փարիզում: 1928 թվին նույն գրքի գերմաներեն հրատարակությունը՝ Լայպցիգում, արդեն «Խաբված ժողովուրդ» վերնագրով:

Մինչև այսօր հայ ժողովուրդը չունի իր դատի պաշտպանությանը զինվորագրված նորվեգացի մարդասերի այս գրքի հայերեն հրատար-



րակությունը, որից թարգմանաբար միայն հատվածներն էին տպագրվել հայաստանյան մամուլում 90-ական թվականներին:

Այսօր արդեն Երևանի Պետական համալսարանի հրատարակությանը մեր սեղանին է գրքի հայերեն տարբերակը Էվելինա Մակարյանի թարգմանությամբ, որպես մուտք ունենալով հեղինակի՝ Ֆրիտյոֆ Նանսենի գերմաներեն մակագրության արտատպությունը:

1928 թվի հունիսին իր համաչափ, հաստատուն ու գեղեցիկ ձեռագրով մակագրելով գերմաներեն հրատարակության վրա, հեղինակն այն նվիրում է համալսարանին: Այս մակագրությունը խոսում է այն մասին, որ Նանսենը քաջ գիտակցում էր, թե հայ ժողովուրդը չէր կարող պատկանել այն ժողովուրդների թվին, ում տեղը դարեր հետո անարգել սուլում է քամին, կամ խորշակն ստվերոտ տեղ չի կարողանում գտնել: Նա գիտեր, որ գիտական կաճառին պահ է տալիս այն գիրքը, որին ժամանակներ հետո գնահատանքով են մոտենալու նրանք, ում մեջ նստած է ազգի ոգին, ում համար թանկ է հայ դատը:

«Հայ դատի հենասյուներից մեկը»: Միանգամայն իրավացիորեն այսպես է որակել «Խաբված ժողովուրդ» գիրքը նրա թարգմանչուհին: Վերջինս օրինակներ բերելով դարասկզբին գործող պանթուրքիզմի համաթուրքական կայսրություն ստեղծելու մեր օրերյան գառնացանքների մասին, կարևորում է մարդկության մեծագույն զավակների այս հարցում ու անցած դիրքորոշումների դերը, որոնցից մեկն էլ նվիրյալ Նանսենն էր: Եվ, եթե «Թյուրքիե»-ն մեր օրերում կարող է գրել. «Կովկասի մեջ հայերի թիվը, ինչպես այսօր Անատոլիայի մեջ, թանգարանային պիտի լինի»/ «Երկիր» 1998, 24 մայիսի/, ապա չենք կարող չհամոզվել, որ իսկապես հայ դատի պաշտպանության զինվորագրյալի «Խաբված ժողովուրդը» յուրաքանչյուր հայի առջև դրված հայելին պետք է լինի:

Ժամանակների հերթագայության մեջ ոչինչ այնքան գեղեցիկ ու խոսուն չէ, որքան ճիշտ իր տեղն ու պահը գտած իրադարձությունը: Մեծ, թե փոքր:

Մե՞ծ, թե փոքր իրադարձություն է «Խաբված ժողովուրդ» գրքի հայերեն հրատարակությունը հարցին կարող ենք պատասխանել, այն անցյալի ու ներկայի լայնամասշտաբ խաչուղիների ենթատեքստում ընթերցելուց հետո:

Ահավոր սպանդից փախած ժողովուրդը հայացքն ուղղել էր Ժճն, ազգերի ընկերակցության խորհրդին տրամադրելով մի ծրագիր, ըստ որի հնարավոր էր 50 000 մարդու համար կենսապայմանների ստեղծումը Սարդարապատում, որի համար անհրաժեշտ էր ձեռք բերել 20 մլն մարկ գումար: Ընկերության գլխավոր հանձնակատարը պայծառափշտակ Նանսենն էր, որն էլ գիտակցելով պատասխանատվության ծանրությունը,

այնուամենայնիվ, համաձայնեց զբաղվել դրանով, հույսը դնելով աշխատանքային միջազգային կառույցների հետ համագործակցության վրա:

Ինչէ: Կազմվեց հանձնախումբ, որն ուղևորվեց Հայաստան, սկսեց իր աշխատանքները, տեղում կատարված ուսումնասիրություններն ու առաջարկությունները մանրամասն հաղորդագրություններով ուղարկելով Ժճն: Այսօր Հայաստանի պետական արխիվում ևս պահվող նանսենյան փաստաթղթեր կան, որոնք ետ են տանում վարագույրը անցած անհանգիստ օրերի վրայից: Դրանք ՀՄԽՀ Ժողովմխորհին կից գաղթականական և Ֆրիտյոֆ Նանսենի հանձնաժողովների միացյալ նիստերի արձանագրություններն են: Ստորև մեջ են բերվում հատվածներ N 5 արձանագրությունից, ըստ «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրի 1996, N 1 համարում ներկայացված փաստաթղթերի:

1 հուլիսի 1925

«Նախագահում է ընկ. Ս. Համբարձումյանը:

Ներկա են ընկ. Ա. Մոսվյան, դոկտոր Նանսեն, հանձնաժողովի մյուս անդամները և թարգմանիչ, ճարտարապետ Գ. Գուրգենյանը: Զարտուղարում է Ա. Խանլարյանը:

. . . Դոկ. Նանսեն – Ինչպես ես անցյալ օրը ասացի ընկ. Երզնկյանին, արտասահմանում գտնված հայ գաղթականությունը Հայաստան տեղափոխելու նպատակով անհրաժեշտ դրամական միջոցներ գտնելու համար կա երեք միջոց.

1. Հանգանակություն բարեգործական ընկերությունների միջոցով:
2. Խտանալ այդ միջոցները եվրոպական պետություններից վարկի ձևով կամ իբրև նպաստ:
3. Իբրև փոխառություն վերցնել եվրոպական բանկերից»:

Այնուհետև Նանսենը կետ առ կետ մանրամասնում է դրանց իրագործման հնարավորությունները, որոնցում ինքը արդեն եկել է որոշ եզրահանգումների Լիզայում նախօրոք այդ խնդիրները քննարկելուց հետո:

«Որպես մասնավոր կարծիք, - ասված է Նանսենի խոսքում, - հույս ունենք գաղթականության տեղափոխության վրա օգտագործել այն գումարները, որոնք թողնված են եվրոպական բանկերում հայերի կողմից՝ Անատոլիայից գաղթելուց հետո . . . Այդ գումարի չափը ինձ հայտնի չէ, սակայն պետք է ենթադրել, որ չափազանց մեծ է և եվրոպական բանկերը չեն շտապում այդ գումարները վերադարձնելու, քանի որ նրանք ոչ մի տոկոս չեն վճարում դրա համար»:

Սարդարապատի դաշտի ոռոգման ծրագիրը, գաղթականությանն

այնտեղ տեղավորելու հնարավորություններ ստեղծելու համար, մինչ այդ անցել էր առանձին մասնավոր քննարկումների, հանձնարարությունների, ուսումնասիրությունների ճանապարհով: Այժմ Ֆր. Նանսենը նիստի մասնակիցների ուշադրությանն է հրավիրում թվային չափորոշիչների վրա, որ վերաբերվում է հողերի, գումարների, մարդկային ու տեխնիկական ռեսուրսների օգտագործմանը: Սարդարապատի ծրագիրը համարելով թանկարժեք ու դուրս հնարավորության սահմաններից, Նանսենը նպատակահարմար է գտնում սկսել հետևյալից.

«ա/ Աբուհայթի ջրանցքի ծրագիրը, որը պահանջում է 200 000 /երկու միլիոն/ ռուբլի և ռոռզում է 19 000 դես.:

բ/ Կարասուի ճահիճների չորացումն ու դաշտի ռոռզումը, որը պահանջում է 1.500.000 ռուբլի և տալիս է 10 000 դես, հող:

գ/ Չանգիբասարի հողամասի չորացումն ու ռոռզումը, որը պահանջում է 600 000 ռուբլի: Բացի այդ, իբրև պահեստի գումար, պետք է ունենալ նաև 900 000 ռուբլի: Այսպիսով, ուրեմն, 33 000 դես. հող կարգի բերելու համար մոտավորապես անհրաժեշտ է 5 000 000 ռուբլի: Ես կարծում եմ, որ այդ հողերի վրա կարելի է տեղավորել մոտավորապես 25-30 000 գաղթականներ»:

Նիստի խնդիրն, այնուհետև, վերաբերվում է այն հարցին, թե որտեղի գաղթականները և ինչպես պետք է տեղավորվեն: Առաջին հերթին կտեղավորվեն 15000 գաղթականներ, որից 5 000 Պոլսից և 10 000 Հուսստանից»:

Հայոց դատի ձայնը բարձրացնող այս փաստաթղթերը պարտավորեցնում են մեզ ոչ միայն աննեղ զոհերի հիշատակի առաջ, այլև դոկտոր Նանսենի, որ բազմաչարչար աշխատանքն տարավ Ազգերի լիգայում, հաշվարկված 5 մլն ռուբլին ստանալու համար: Նրա վերջին միջոցը ըստ իր հաշվարկների, լայնեզր գլխարկն էր, որը կծառայեր արտասահմանում գթասրտության դասախոսություններից հետո հայ որբերի համար դրան հավաքելուն:

Ահա նրա լուսանկարը Լենինականում, ամերիկյան Նպաստամատույցի օգնությամբ ճաշող հայ որբերի շրջապատում: «Իմ կյանքի երջանիկ օրերից մեկն էր, երբ ես կերա որբերի հաց ու ապուրից ու համոգվեցի, որ դա ռեալ է»:

Ահա և Շիրակի ջրանցքի բացման արարողության նկարագրությունը «Խաբված ժողովուրդ» գրքում, ուր իր համար երջանիկ պահ համարող Նանսենը լայնեզր գլխարկը նետում է ջրի ալիքների մեջ:

Վերը խոսելով նաև Նանսենի այն գործունեության հետ կապված որոշ փաստաթղթերի մասին, որոնց շուրջը հյուսված է «Խաբված ժողովուրդ» աշխատության մի հատվածը, այժմ անցնենք նույն գրքում լուսա-

բանված այն խնդիրն. թե ինչ աղբյուրներ ուներ Նանսենը, հայ ժողովրդի հալածանքները ներկայացնող ճշգրիտ թվերի մասին:

«Պատերազմի ժամանակ Փոքր Ասիայում, Սիրիայում և Միջագետքում թուրքերի կողմից հայերին հալածելու և բնաջնջելու մասին ունենք շատ ակնմատեսների հաղորդումներ: Նրանք Ամերիկայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Դանիայի տարբեր ներկայացուցչությունների ու կազմակերպությունների անդամներ են, որոնք այդ երկրներում ունեին իրենց բաժանմունքները: Այդ հաղորդումներն ու փաստաթղթերը հավաքել է հայ ժողովրդի նշանավոր բարեկամ, գերմանացի դոկտոր Յոհանես Լեփսիուսը և Պոնդամում հրատարակել «Գերմանիան և Հայաստանը 1914-18 թ. թ. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու» խորագրով»: Ըստ Լեփսիուսից Նանսենի մեջբերման, «Այդ տարիներին թուրքերին հաջողվեց բնաջնջել հայ ժողովրդի մեկ երրորդին: Մոտ 200 000-ը, մեծ մասամբ կանայք, աղջիկներ ու երեխաներ, բռնի դավանափոխ էին եղել և վաճառվել, 250 հազարը փախել էին Անդրկովկաս և Եգիպտոս, իսկ 200 000-ը, անհույս ու սովյալ մուրացկաններ, դեռևս Սիրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում էին»:

Յ. Լեփսիուսի թվերից զատ Ֆր. Նանսենը հայոց ջարդն իրականացնողների դեմ ուներ իր փաստերը, որոնք վերաբերվում էին բռնադատիչներից մազապուրծ գաղթականության չափերը ճշգրտելու փորձերին, որ սփռված էր աշխարհով մեկ:

## **Նանսենյան անձնագիրը**

### **Կյանքի ուղեգիր**

Աշխարհացրիվ հայ գաղթականներին մի տեղ կենտրոնացնելու դժվարին գործում Ֆր. Նանսենը դեմ առավ մեծ տերությունների շահադիտական նպատակներին, հաճախ շրջանցեց դրանք դիվանագիտական խոր հմտությունների, անձնական միջոցների, առողջության գնով: 1928 թ. Ազգերի լիգայում նա գայրույթով հայտարարեց, որ արևմտյան տերությունների հանցանքով ձախողվեց հայ գաղթականներին տրամադրվելիք փոխառությունը: Նա մտահոգ էր այն խնդրով, թե այլևս չի մնա ժողովուրդ, որ վայելի իր հայրենիքը: Նրա գործունեության պսակը շողաց 1922 թ. Ժնևում հրավիրված հատուկ կոնֆերանսում, որին մասնակցեցին այն երկրների ներկայացուցիչները, ուր կային հայ գաղթականներ: Այստեղ Նանսենն առաջ քաշեց այն վկայականի հարցը, որ հե-

տո պատմության մեջ մտավ «Նանսենյան անձնագիր» անունով: Այս փաստաթղթում այս կամ այն երկրի գերբի փոխարեն, փակցված էր Նանսենի նկարով դրոշմանիշ: Տրվում էր երկու լեզվով՝ այն երկրի, որտեղ ապրում էր ստացողը, և ֆրանսերեն՝ որպես միջազգային լեզու: Մշակվում է հատուկ ծրագիր այն ստացողների պարտավորությունների մասին, որի արդյունքում ստացող անհատների մուծած չնչին գումարներից հավաքված խոշոր գումարները ևս պետք է ծառայեին նրանց աշխատանքի տեղավորման խնդիրներին:

Այնուամենայնիվ, այս հարցում էլ սկսվում է քաշքշուկը:

«Այս ժողովրդի Եվրոպայում տեղավորելը կաշկանդված է լրջորեն՝ այնտեղ տիրող անգործության ճգնաժամի պատճառով: Անցագիրը և ավելին՝ այս երկրներից մի քանիսը դրել են կարևոր պահանջներ աշխատավարձի պրոֆեսիոնալ կարողության և բարոյականության վերաբերմամբ» (Սեպտեմբեր 1925 թ. Լիզայի նիստին հրապարակված ելույթներից): Դիսկուսիայի ընթացքում քննարկվեցին որպես գործին խանգարիչ հանգամանքներ իրենց երկրներում գոյություն ունեցող գործազուրկների քանակը, միջոցներ չունեցող գաղթականների տեղավորությունների, աշխատանքային գրասենյակների համար գումարների հայթհայթման և այլ խնդիրներ:

Այնուամենայնիվ, հարցը լուծվում է, մանավանդ, որ արևմտյան տերությունները, որ չէին կատարել իրենց հայանպաստ խոստումները, այժմ նրանց կարող էին օգտագործել և որպես էժան աշխատանքային ուժ, և դրանով մխիթարել «փոքր դաշնակցին»:

Այնուամենայնիվ այն կյանքի անձնագիր էր և 320000 հայեր ստացան ապրելու իրավունք սովող «հնքնության թղթեր»:

### Անկարելին կարելի է՝ համոզված է Նանսենը

«... Հայերը ապրել են թշվառության, խոշտանգումի, տառապանքի և խժոժությունների այնպիսի մի վիճվում, որ լսելն անգամ կարող է մեր արյունը սառեցնել: Ես չեմ ցանկանում տակնուվրա անել ձեր զգացումները, բայց ես ուզում եմ հարց տալ, թե արդյոք, պարտավորված չե՞նք նրանց հանդեպ: Մեզանից նրանք, ովքեր քրիստոնյա են, պետք է հիանա՞ն մի ազգով, որի մեծագույն հանցանքը եղել է այն, որ նրանք փարել են իրենց հայրերի հավատքին: (Հայն) . . . առաջներդ և ոգևորող ունի մի մարդ՝ դոկտոր Նանսենի մտային կարողությամբ, որովհետև նա տեմպերամենտ ունի, որ չի սահում դժվարությունների վրայով, դիմագրավում է

նրանց և զլուխ է բերում այն, ինչ ուրիշները կարծում են անկարելի...»:  
/Տիկին Ռ. Ռ. Ս. Մակկինոյի /Ավստրալիա/ ելույթից Լիզայի 1925 թ. 18-րդ նիստի արձանագրությունից: Ըստ «Բանբեր Հայաստանի արխիվների» 1996, N 1-ի հրատարակած փաստաթղթերի/

1930 թվականի մայիսին դադարեց բաբախել Ֆրիտյոֆ Նանսենի սիրտը: Իջեցված էին բոլոր դրոշները Նորվեգիայում: Խոր վիշտ էր ապրում նաև հայ ժողովուրդը: Հետո դրոշները կրկին բարձրացան և այժմ էլ շարունակում են միասնաբար ծածանվել միջազգային նշանակության այն շենքի մոտ, որտեղ քննարկվում են աշխարհի վրա խաղաղության պահպանման հարցերը: Հայ ժողովուրդը, որի դրոշն այսօր այդ միասնության մեջ է, չի կարող մոռանալ լայնեզր գլխարկով բարձրահասակ նորվեգացուն, որ իր դատի պաշտպանն էր այն օրերին, երբ աշխարհի վրա նոր-նոր էր ձևավորվում խաղաղության պաշտպանության միությունների գոյությունը: Ֆր. Նանսենի գործունեությունը մնաց նրանց սկզբունքների հիմնարար անկյունաքարերից ամուրն ու գեղեցիկը:

## ԳԹԱՍՐՏՈՒԹՅԱՆ ՈԱՀՎԻՐԱՆ

Այսօր, երբ հողագնդի վրա ահեղ դորդյունով դեռևս բացվում են Հարի ծաղիկները, գենքից ճառագող կրակե միջուկով և մահվան շունչ փչող ծխածածկ թերթիկներով, առավել քան երբևէ փնտրելի է դառնում մարդու այն տեսակը, որն անմնացորդ մվիրումով պատվար է կանգնում իր նման հազարավորների կողքին՝ փակելով նվաստացումի ու ոչնչացումի ճանապարհը: Փնտրելի մարդ, որի մասին հիշողություններն առավել պայծառ են դառնում հախուռն ընթացող ժամանակների այն հատվածներում, երբ մոլորակի քաղաքական խարդավանքների ու նյութապաշտության հրապարակի վրա սավառնում են գիշատիչ թռչունները՝ սպասելով անուժ ու անզոր ընկնողներին: Չեն խամրում հիշողությունները ընկածին օգնելու շտապող վեհագույն հոգիների մասին, այլ գնալով պայծառանում և դեպի իր նմանի սիրտը տանող լուսե կամուրջ են դառնում տասնյակ, հարյուր և հազարավոր մարդկանց համար:

Նանսենյան հիշողությունների լուսե կամրջով շողկապվելով՝ այս պահին չենք կարող չզգալ նրա վեհագույն ներկայությունը, չենք կարող չխոստովանել ինքներս մեզ, թե ինչպես, ասես, աներևույթ մի ձեռք մեր ներսում ցանում է մարդ արարածի նկատմամբ պատասխանատվություն ունենալու ծիլերը:

«Մերձավորին սիրելը միակ ռեալ հնարավոր քաղաքականությունն է»,— պնդում էր, հորդորում, համոզում Ֆրիտյոֆ Նանսենն իր մարդասիրական ողջ առաքելության ընթացքում: Որտե՞ղ էր այդ զգացողության ակունքը և սառցաբեկորներում աշխարհաճանաչողություն փնտրող գիտնականի կրծքավանդակում ինչպես էր այդքան ջերմորեն բոցկլտում զարկվածի ու զրկվածի նկատմամբ ունեցած նրա սերը, դժվար է ասել, բայց ազդակները նրա հետ գուցե թե գործել էին սկսած նրա ծննդյան օրվանից, որը հոկտեմբերի 10–ն էր 1861 թվականի:

Ազնվական ծագումով բավարար կարողության տեր տիկինը, որ Ֆրիտյոֆի մայրն էր, Նորվեգիայի ձյունաճերմակ լեռնալանջերին, ազատության մեջ հրճվանքի ապրումներ էր ունենում դահուկավազքով իր նվաճած յուրաքանչյուր նոր տարածության համար՝ ուշք չդարձնելով այն կարծիքներին, թե «դահուկավոր կինն առնվազն անպարկեշտության տիպար է»: Կարևորն ազատության մեջ մաքուր ճանապարհների նվաճելով առաջ ընթանալու զգացողությունն էր:

Հայրական ազարակը շրջապատող անտառները, լեռներն ու գետը պատանու մոտ բարձրացրին մոլորակն իր անդորրության, անկաշկանդության մեջ ճանաչելու և վայելելու գնահատականը:

Լավագույն հարաբերությունները փաստաբան հոր հետ սովորեցրին պատասխանատվության, կարգ ու կանոնի, մարդկանց նկատմամբ հարգանքի զգացումները ներդաշնակորեն զուգակցել ազատատենչ ոգու հետ: Մարդ անհատին իր բարձրության վրա տեսնելու համար Նանսենը պատրաստ էր նեցուկ դառնալ նրան գոնե բարոյապես՝ իր համար այրելով ետդարձի շատ կամուրջներ:

Հազիվ 20–ամյա երիտասարդ գիտնականը հաճախ էր հետևում հիվանդներին ու աղքատներին այցելող հոգևոր հովվին՝ ինքն էլ չհասկանալով, թե այդ ժամանակ սիրո և զոհողության զգացողության ինչպիսի պաշարներ էր հավաքում մոլորակի վրա տառապող մարդկությանը հետազայում բաժանելու համար: Գուցե թե հենց այդ օրերից էլ նանսենյան գթասրտությունը վեր բարձրացավ խղճուկ խղճահարության շրջանակներից՝ դառնալով հետագայում իր վարած քաղաքականության հիմքը:

Աշխարհն ու մարդուն զգալու նրբագույն թրթիռներով էր լցված Նանսեն անհատի կյանքը: Աշխարհն զգալու թրթիռը նրա երակներում սկսել էր հորձանք տալ այն պահից ի վեր, երբ նոր բացված աչքերն սկսել էին զանազանել առարկաները, նոր–նոր քայլ զցող ոտքերը նրան ազարակից տարել դեպի խորհրդավոր սոճուտն ու ձկնառատ գետակը: Իսկ բառերն իրարից հազիվ զանազանող շուրթերն իրար ետևից ինչուների շարքեր են արտաբերել՝ հաճախ էլ չսպասելով դրանց պատասխաններին: Նանսենն ինքը գնաց փնտրելու և գտնելու աշխարհագրական ու կենսաբանական շատ հարցերի պատասխաններ այնտեղ, որտեղ դեռևս մարդու ոտք չէր դիպել: Տեսնել մարդուն գիտական ու բարոյական բարձրակետում: Ահա Ֆրիտյոֆ Նանսենի երիտասարդական ավյունի ուղղվածությունը: Իսկ երբ աշխարհի և մարդու զգացողության հետ խաչաձևվեց նաև ժամանակի զգացողությունը, նա ընկալեց հավերժության մեջ մարդուն տրված կյանքի սահմանափակությունն ու առավել ևս՝ փութաց օգնելու այդ ժամանակի դառնաղետ անկյուններում ընկածներին:

Ահա պահի ու հավերժի մասին իր մտորումներին համահունչ բայրոնյան տողերը, որ զարդարում են Նանսենի բարձրաճաշակ հուշագրության քչերից մեկը.

*Մայրամուտ է ամեն կողմ, մթապատ է ամեն բան,  
Հավերժական արևն է ոսկեգոծում սոսկ նրան:*

Իրապես, անցողիկ է պահը, և ժամանակների հարափոփոխ ընթացքը սրբում է անզամ հզոր քաղաքակրթությունների հետքերը: Այնտեղ, ուր

Հին աշխարհը դողում էր ասորական քաղաքակրթության առջև, այսօր անարգել սուլում է անապատի քամին:

Խոսելով հառնող ու կործանվող կայսրությունների, քաղաքակրթությունների մասին Նանսենն իր մենագրություններում հաճախ էր գործածում «աշխարհի ընթացքն է այդպես» և կամ «սա է կյանքի ընթացքը» արտահայտությունները: Թեկուզ և այդպես, այնուամենայնիվ, հառնումի ու կործանումի պատմության մեջ նրա միտքն ու հոգին փնտրում էր բարոյական մարդու կերպարը:

Բարբարոս և քրիստոնյա երկու կողմերի պայքարի նկարագրությունը և դրա արդյունքի մատնացույցը Ֆրիտյոֆ Նանսենի կողմից, իր նոթերում, միանգամայն բնորոշում են նրան իբրև անհատի ու ժողովուրդների ճակատագրով մտահոգ մարդ, ըստ որի՝ մարդասիրության ճանապարհին կարող են խամրել անգամ մշակույթ, դավանանք ու քաղաքակրթություն հասկացությունները: Ահա նման մի հատված Նանսենի նոթերից.

«Վայրագություններն ու բռնությունները հատկանշական են ոչ միայն մշակույթ չունեցող թշնամիներին: Անհնար է պատկերացնել մի ավելի նողկալի տեսարան, քան ջերմեռանդ քրիստոնյա Վասիլ 2-րդ կայսրի արարքը, որը բուլղարներին հաղթելուց հետո 15000 գերի կուրացնում և տուն է ուղարկում: Մի քանիսին թույլատրվում է պահել մի աչքը՝ մյուսներին առաջնորդելու համար: Բարբարոս իշխանն ավելի մարդկային է գտնվում, քան քրիստոնյա հաղթողը, նա մահանում է սրտի կաթվածից՝ իր մարդկանց տեսնելով այդ վիճակում»:

Այսպես՝ հառնումի ու կործանումի անընդմեջ ընթացքն է եռում հողագնդի ողջ մակերեսին և, եթե այսպիսին է աշխարհի ընթացքը, ուրեմն պետք է շտապել այնտեղ, ուր ժամանակի փլառակների տակ ընկած մարդկանց մոտ մեռնում է ապրելու հույսը:

Ֆրիտյոֆ Նանսենի մարդասիրական գործունեության նվաճումները վերադարձրին հազարավոր ռազմագերիների, սովի ճիրաններում հայտնվածների, գաղթական ու անօթևան մարդկանց ապրելու հույսը:

Նանսենյան անձնագրերով եղեռնից մազապուրծ երեք հարյուր քսան հազար հայեր իրենց ծխացող վերքերով կարողացան նոր օջախներ ստեղծել:

Հայոց եղեռնակործան տարիների արհավիրքից հետո կենսապես գոյատևելու համար իբրև հույսի շող էր վետվետում մեծ հումանիստի մարդասիրական գործունեությունը: Քաղաքականության և բարոյականության հաշտեցման փորձերին գնացող այդ շողը հաճախ էր ստվերում խաբեապատիր իրականությամբ, բայց անդդվելի էր կամուրջներն իր ետևից այրող համառ եվրոպացին:

Մարդկային միտքն ու հոգին երևի թե անգոր են պատկերացնելու այն ապրումները, որ ունեցել է Նանսենը, երբ Գյումրիի որբանոցում էր: Ահա նա, պատկերված լուսանկարում, հույսի սպիտակ շողի նման է ապուրամանների կողքերով շարված երեխաների մեջ: Ո՞վ գիտի՝ ինչպիսի ծանրություն էր զգում իր առաջ թեքված ուսերի վրա նա այդ պահին: Ո՞վ գիտի ժպիտը դեմքի վրա հազիվ պահելու հետ որքան արցունք էր հոսում նրա աչքերից դեպի ներս, դեպի նրա լայնահուն սիրտը, որպեսզի հետո, իբրև գայրույթ, հորդի մեծ տերությունների ներկայացուցիչների առջև:

Նանսենն իր մարդասիրական գործունեության բարձրակետում էր, երբ հուսախաբ լինելով Ազգերի լիգայից ու մեծ տերություններից՝ իր առաջացած տարիքում էլ երկար ճանապարհորդություն է կատարում ամերիկյան Իադաքներով, որպեսզի իր դասախոսություններով միջոցներ հայթայթի օթևանից ու սննդից զրկված հայ գաղթականների համար: Հանուն մեկ մանկան առջև դրվելիք մեկ աման ապուրի՝ նա ուներ նաև իր ամենավերջին միջոցը, երբ փակված էին նրանց համար օգնություն ստանալու բոլոր ճանապարհները: Ամենավերջին միջոցը նրա լանեզր գլխարկն էր, որով նա հանգանակություն էր հավաքում մեծ քաղաքների փողոցներում:

Մարդարապատի անապատում գաղթականների համար կենսապայմաններ ստեղծելու առաքելությամբ 1825 թվին Հայաստան եկած Նանսենը հիացած էր հայ ժողովրդի ազնիվ ու բարոյական կերպարով: Այստեղ էլ ամառային մի օր նա մասնակցում է Շիրակի ջրանցքի բացման համաժողովրդական տոնախմբությանը: Չբավարարվելով լուսանկարչական ապարատն անընդհատ շխկացնելուց՝ գթասրտության ռահվիրան ժամանակն է համարում կրկին հանելու գլխից իր լայնեզր գլխարկը, բայց այս անգամ ջրանցքում աղմկելով հորդացող ջրերի մեջ նետելու համար: Հետո, երբ գրում էր Հայաստանին նվիրած իր աշխատությունը, նա նշում է, որ «դա մեծ օր էր, քանզի ավարտվել էր մի այնպիսի գործ, որը երջանկություն կպարզևի հազարավոր նոր օջախների...»:

Երևանում Նանսենը ծանոթացավ մի քանի տեսարժան վայրերի, եղավ պետական համալսարանում՝ ջերմ ու գործարար մթնոլորտ ստեղծելով իր շուրջը: Հայաստանից ստացած տպավորություններն ու հիշատակները հիմք դարձան նրա հետևյալ բառերի համար. «Իմ հույսն է՝ կարողանալ նորից վերադառնալ...»:

Ֆրիտյոֆ Նանսենի վերադարձն արդեն իսկ իրողություն է: Այնուամենայնիվ, այստեղ տեղին է վերհիշել աստվածաշնչյան մարգարեի տողերը, որ ապշեցուցիչ ձևով վերաբերում են նաև Ֆրիտյոֆ Նանսենին.

«Իմաստուն մարդիկ պիտի ճառագեն իբրև երկնակամարի լուսատուներ, իսկ արդարներից շատերը, առավել ևս՝ իբրև հավիտենական աստղեր»:

Իր արդարությամբ մաքրագործված Ֆրիտյոֆ Նանսենն իր հետ աստղային հավիտենություն տարավ մարդու ցավը, քանի որ այսօր էլ մոլորակը երբեմն-երբեմն տնքում է այդ ցավից: Արդարության իր աստղից ճառագող լույսերի մեջ կենդանացնելու տարավ հայոց մուխը մարած տների, վիզը ծուռ որբուկների հիշատակը և մնաց իբրև մարդկային արժանապատվության համար մոլորակի վրա բարձրացված դրոշին վետվետող արևի ճառագայթը:

Այսօր, երբ գթասրտությունը բարձրացված է կառավարական ու քաղաքական մակարդակին, անվիճելի է, որ այն մեծ նորվեգացու նման մարդասեր անհատների սիրո պտուղն է՝ կախված կյանքի ծառի ճյուղերից: Գալով մոլորակի վրա եղած գթասրտության ու մարդասիրության ամենամեծ օրինակին՝ իր նուրբ ու մանրիկ ոտքերով աղքատաց աղքատների դռներին հուշիկ-հուշիկ մոտեցող Մայր Թերեզային, վկայենք վերջինիս խոսքերի ճշմարտությունը՝ օրինակ ունենալով Ֆրիտյոֆ Նանսենի կյանքն ու գործունեությունը: Այդ ճշմարտությունը հետյալն է.

«Սիրո պտուղը Ծառայությունն է, Ծառայության պտուղը՝ Խաղաղությունը»:

## ՃՇՄԱՐԻՏ ԵՎՐՈՊԱՅԻՆ

Թերևս մշակույթն է անհատի ներքին նվաճումների, ներքին զարգացման և հոգևոր հարստությունների դրսևորման տերը: Սակայն այստեղ կա մի նուրբ դիտողություն այն մասին, որ մշակույթն ընդհանրապես չի կարող իր ներսում տեղավորել Տիեզերական Գոյի հետ իր ներքին լույսով կապված անհատի էությունը, ոբը ոչ այլ ինչ է, եթե ոչ նրա համակ սերն ու բարությունն իր նմանի ու հավերժական շրջապատույթի մեջ գտնվող արարչագործության նկատմամբ: Այն սերն ու բարությունը, որից ծնվում են լույսը սիրելի դարձնելուն ուղղված առավել քնքուշ ու նուրբ մոտիվներ, և, որը ձգտում է անհատի լուսավորմանը վերից վար, ներսով ու դրսով:

Այդ լույսը պարզապես հորդում է առանց նվագարանների լարերին զարկելու և կամ կտավների վրա գույներ կենդանացնելու: Սիրո ու բարության այդ լույսը պարզապես հորդում է, և, եթե կապված է մշակույթ հասկացության հետ, թերևս նրան պետք է անվանել ներաշխարհային մշակույթ: Այսինքն՝ մշակույթ, որը մարդու ներաշխարհում է ի վերուստ և

ոչ թե այն արարվելիքը, որի շուրջը հյուսվում է մարդկային ստեղծագործական աշխատանքը:

Ահա այսպիսի, ի վերուստ արարված մշակութային ներաշխարհով ներքին նվաճումների էր գնում Ֆրիտյոֆ Նանսենը Երկիր մոլորակի վրա: Մարդ, որի մասին հիշողությունների յուրաքանչյուր պահի հետ հաղորդակցումից անգամ առավել լուսավոր է դառնում այն մոլորակը, որտեղից գրեթե մեկ դար արդեն բացակայում է այդ բացառիկ անձնավորությունը:

Ճանաչողություն՝ հակադրությունների միասնականացումների միջոցով: Ահա կյանքի իմաստի ընկալման այն մեխանիզմը, որ գործում էր «Ֆրամով» կատարած ճանապարհորդության ողջ տարիների ընթացքում: Հակադրություններից համադրումներ գոյություն ունեին առաջին հերթին գոյի մտավոր և ոգեղեն դրսևորումների հավերժի ու անսահմանության հետ մարդու կապվածությունը, այդ գաղափարն ընդունելու մեջ է տեսնում նաև բանականության, մտքի հաղթանակը:

«Ես ներկայումս գտնվում եմ տարօրինակ հոգեկան կացության մեջ, ինչ-որ առանձնահատուկ հուզմունքի մեջ, - գրում է նա: — Ես նույնիսկ տամադրություն չունեմ գրի առնելու այս օրերը, մտքերս մեկը մյուսի ետևից գալիս ու գնում են: Ինքս ինձ չեմ հասկանում: Իսկ ո՞վ կարող է ըմբռնել մարդկային հոգու խորությունը: Մեր ուղեղը չափազանց բարդ մեխանիզմ է: «Մենք էակներ ենք՝ հյուսված նույն նյութից, ինչպես և անուրջները»: Այդպե՞ս է արդյոք: Ես գրեթե հավատում եմ՝ մենք միկրոկոսմոս ենք՝ կազմված հավերժականության նյութի անսահման հյուսվածքից»:

«Սառցային գերեզմանն» ուսումնասիրելու նախնական ճիզը հենց իր մեջ պարունակում է քայլ դեպի անհատի տիեզերականության ուսումնասիրություն ու բացահայտում: «Սառցային գերեզման» ասվածը հասկանալու համար, սակայն, կարելի է չլինել արշավախմբի անդամը: Նանսենյան օրագրերից արված քաղվածքները և հենց իր՝ Նանսենի հետագա շարադրանքները, որոնք լրացնում են օրագրության էջերը, համաշխարհային նշանակության գիտագեղարվեստական ստեղծագործության արժեք ունեն՝ հանձին ««Ֆրամ»-ը Բևեռային ծովում» գրքի: Ընթերցողն այստեղ ականա դառնում է սառցային լռության զրուցակիցը, սառցաճեղքերից օվկիանոսի խորությունները չափելուց բացի, դառնում է նաև Ֆրիտյոֆ Նանսենի հոգու անհատակ խորությունների վկան:

Որտեղի՞ց, սակայն, սառցային կամքի և մտավոր ճանաչողության ձգտման հետ նաև ներաշխարհային այդքան խորությունների:

«Երկու տարբերակված կարողությունների՝ Ոգու և Կամքի երջանիկ խառնուրդն է մարդու մեջ, որ հավանաբար պատճառ է դարձել եվ-

րոպական միասնության: Այս բոլորն ակնհայտորեն չափազանց հարաբերական են և չափազանց ընդարձակ, և պետք չէ կարծել, թե մյուս մայրցամաքներում ծնվածները զուրկ են այս պարզկից: Մենք պարզապես հաստատում ենք, թե Եվրոպայի արարքների և գործերի բնորոշ էական որակը հատկապես Ոգու և Կամքի այդ համերաշխ զարգացումն է»: Այսպիսի մեջբերում է անում Դենի դը Ռուժմոնը Եվրոպայի գաղափարի պատմությանը նվիրված կոթողային աշխատություններից քաղված մտքերով հարուստ իր «Եվրոպայի քսանութ դարերը» գրքում: «Գուցե Եվրոպայում է,— գրում է նա,— որ Ոգին ու Կամքը սերտորեն կապված են իրար և այնքան, որ մեկը մյուսից անհնար է բաժանել: Սա էլ սահմանում է եվրոպական ամբողջ կյանքի մասնահատուկ ուժը, որի մեջ Կամքը գերազանցում է Ոգուն, առաջին, համառ փուլի ընթացքում, ազատագրված, գերանհատականացված, շիտակորեն գնում է դեպի նպատակը: Այնուհետև, գալիս է երկրորդ փուլը, որտեղ Ոգին գերազանցելով Կամքին՝ փորձում է կարգ ու կանոն սահմանել այս սկզբնական քառսի մեջ: Վերջապես գալիս է երրորդ փուլը, Ոգու և Կամքի հավասարակշռությանը կառավարված, ու հասցնում է համադրության: Այս եռաստիճան ուժը եվրոպական կյանքի տեսակի քննարկիչն է, որքան գիտության, նույնքան էլ քաղաքականության ասպարեզում, ինչպես իրավաբանական էվոլյուցիայի, այնպես էլ համաշխարհային նվաճողականության մեջ»: («Եվրոպայի քսանութ դարերը», էջ 349):

«Այս եռաստիճան ուժը», իբրև եվրոպական կյանքի տեսակը բացահայտող գործոն, այնքան շատ է համադրելի նորվեգացի անձնավորության Ֆրիտյոֆ Նանսենի կյանքի ու գործունեության հետ: Եվրոպացու այս տեսակն ընդհանրապես մեծ մարդու օրինակով, հրաշալի ու ցայտուն ձևով է գծագրված հենց իր՝ Նանսենի ««Ֆրամ»-ը Բևեռային ծովում» աշխատության մեջ: Չեռնարկելով իր հիշողություններից պոկված մի հատվածը ներկայացնող գրքի ամբողջականացումը՝ Նանսենը թերևս չէր էլ պատկերացնում, որ իր օրինակով կերտում է անթերի եվրոպացու կերպարը:

Հետաքրքիր է Ռուժմոնի խոսքը իր՝ «Եվրոպայի քսանութ դարերը» գրքի համար որպես հիմք հանդիսացող վկայությունների մասին: Եվրոպայի պատմության մեջ տեսնելով նրա մշակույթի հաջորդական կազմավորման ժամանակագրությունը՝ սկսած հոմերոսյան ժամանակներից, Ռուժմոնը այսպես է ներկայացնում իր գրքի հենքը նրա նախաբանում.

«Երեք հազար տարվա ընթացքում մեզ հետաքրքրող նյութի վերաբերյալ քանի հեղինակ է գրել: Եվրոպական գաղափարի պատմությանը նվիրված մի աշխատության մեջ, որ լույս տեսավ վերջերս, երկու հազար

ամուն կարելի է գտնել անվանացանկում, որոնք լավագույններն են ու նշանավորները: Մեջբերումների համար ընտրել են նրանց, որոնք շարունակում են մնալ արդիական և որոնք այդ մասին ասելիք ունեն՝ թե՛ որպես մեր քաղաքակրթության ակունքների և թե՛ որպես պատմության ու գիտակցության մակարդակի հասած՝ այդ արմատական ծագման վկաներ...»:

Խնդրի վերաբերյալ հայտնի ու նշանավոր մարդկանց կարծիքների համադրումից են ընտրվել առավել տիպական մտքերը Ռուժմոնի գրքում.

«Ոգին և Կամքը մարդու ամենամահատականացված կարողություններն են... մեր մայրցամաքն անվիճելիորեն ամենամահատականացվածն է մյուս բոլորից: Ասիայում մարդն սկսում է արժեք ներկայացնել, իսկ Ամերիկայում սկսում է այլևս արժեք չներկայացնել: Կոնֆոսիոսով, կարգախոսներով, կաղապարով շինված մարդիկ անհամեմատ ավելի հեռու են եվրոպական, քան մյուս մայրցամաքների ոգուց: Եվրոպայում անհատն արքա է...»

Մրանով է բացատրվում եվրոպական ոգու ակտիվ որակը: Այն չի բավարարվում միայն առարկան դիտելով, այլ ուղիղ քայլում է դեպի առարկան և տիրապետում: Եվրոպացու ոգին «ձեռքբերողական» է: Նրա համար ճանաչումը միջոց է բնությանը տիրապետելու համար: Կեցվածք, որ տեղավորվում է ամերիկացու (որի համար ճանաչումը գործիք է արարքի համար) և հնդիկի կեցվածքի միջև (որի համար ճանաչումն ինքն իրենից ազատվելու միջոց է)» (349):

Բևեռային սառույցներում ակոսող «Ֆրամ»-ն առաջ էր գնում անվարան՝ ետևում թողնելով բացահայտված գաղտնիքների շարանը, և նրա առաջ մղիչ ուժը ճանաչողության ձգտող եվրոպացու ոգու հզորությունն էր: Առավել շատ, քան կարող էր տանել սովորական մահկանացուն, իհարկե, նաև՝ մահկանացու եվրոպացին: Այստեղ է նանսենյան ոգու կրկնակի ուժի և մեծության գաղտնիքը:

Համաշխարհային պատմափիլիսոփայական մտքի սինթեզների միջից Դենի դը Ռուժմոնը Եվրոպային պատկանող ամեն ինչի սինտան դուրս է բերում առաջին հերթին ազատություն բառի հետ շղկապված:

«Ազատության բովանդակությունը բացահայտում է եվրոպական արմատական երկու երևույթներով: Դրանք են.

*Երկու հակադիր բևեռների միջև ընկած կյանքը,  
Կյանքը ծայրահեղ սահմանագծին» (351):*

Սկսած «Ֆրամ»-ի հետ կապված արշավախմբի նպատակներից ու ծրագրավորումից, մինչև երեք տարի տևած դրեյֆից հետո նրա վերադարձն իր ծննդավայր, իսկապես, բացահայտումն է այն բանի, որ երկու հակադիր բեռների միջև ընկած տարածությունում եվրոպացին իրեն զգում է այնպես, ինչպես ծուկը ջրում:

«Յուրաքանչյուր դիրքորոշման համար Եվրոպան ինքը զարգացրել է հակառակ դիրքորոշումը: Նա գուցե միայն ամեն ինչ լինելու կարողությանն է տիրապետում, որը նրան օժտում է կարողությամբ՝ ինքն իր հանդեպ ընդդիմանալով ոչ միայն հղանալ այն, ինչը գալիս է դրսից, այլև դարձնել սեփական էության տարր: Եվրոպան ճանաչել է կարգավորված կառույցների մեծությունը և հեղափոխությունների անհանգստությունը: Նա պահպանողական է և իրագործել է ամենահիմնավոր խզումները: Նա ճանաչել է կրոնական ներամփոփման խաղաղությունը և անկումը նիհիլիստական ժխտումի մեջ... Եվրոպան իրար է կապում այն բաները, որոնք միաժամանակ ծայրահեղորեն հակադրում է միմյանց. աշխարհը և վերացականը, գիտությունը և հավատը...» (350):

Ահա Եվրոպայի արժեքների ճանաչմանը մվիրված այս բոլոր նկատառումների հետ այնքան ներդաշնակ եզրեր ունի սառցաճեղքերի միջով բաց ծով փնտրող «Ֆրամ»-ի վրա գործող արշավախումբը, հանձնիս նրա կազմակերպչի և գիտական ղեկավարի: Սակայն մի՞թե միայն եվրոպական արժեքների կրողն էր այս անհանգիստ անձնավորությունը, կամ որտեղի՞ց էր գալիս եվրոպական արժեքների արմատն ընդհանրապես:

Փաստերը, որ բերվում են Եվրոպայի պատմության սկիզբը որոշելու համար, վկայում են նրա սեփական ծագումը: Եվրոպա անունը առաջինը գրել է Հեսիոդոսն իր «Թեոգոնիայի» 357-րդ տողում, իբրև երեք հարյուր օվկիանոսուիներից մեկը, աստվածուհի, որ գետերի աստծո հետ սնում էր մարդկանց երիտասարդությունը: Առասպելը պատմում է, թե ինչպես ծովի ալիքների ու ափերի բուրումնավետ խաղատեսակների մեջ զվարճացող ընկերուհիներից մեկին՝ Եվրոպային, առևանգում է Ջևսը: Եվ ոչ սովորական ձևով, այլ նա մոտենում է իբրև սքանչելի մի կով՝ ոսկեգույն մորթով:

«Եվ դիմեց Եվրոպան ընդարձակ զգեստներ հագած իր ընկերուհիներից. «Մո՛տ եկեք, ընկերուհիներս, որպեսզի միասին նրան հեծած զվարճանանք... Որքան սիրալիր է նա: Կատարյալ ձեռնասուն է և հնազանդ: Մյուս ցուլերին բնավ նման չէ: Իր բնավորությամբ էլ նման է մարդու, տեսքն էլ շատ գեղեցիկ է, միայն խոսել չգիտեք»: Ահա ծովերի մեջ լողացող հարսի՝ Եվրոպայի թեպետ առասպելաբանական, բայցև ձգտումը դեպի բանականության, գեղեցկության առավելագույնը և դեպի ճանաչողության ոսկեգույնը:

Մինչ ընկերուհիները հապաղած կանգնել էին, Եվրոպան ժպտալով նստում է ցուլի մեջքին, իսկ ցուլը վեր ցատկելով առևանգում է նրան, տանում դեպի բաց ծով, դեպի փյունիկյան Կրետե կղզին:

Պատմությանը հայտնի են Եվրոպայի առևանգման մասին բազմաթիվ տարբերակներ, իսկ ընդհանուր գաղափարը մեկն է՝ «Քր կազմակերպվածությամբ, իր օրենքներով, իր արվեստներով, իր հարստությամբ հզոր ծովային նվաճող Մինոսյան Կրետեն Ջևսին զուգորդված Եվրոպայի պաշտամունքը տարածում է էգեական աշխարհով...» (20): «...Եվրոպայի առևանգման առասպելն արտահայտում է Արևելքից Արևմուտք կատարած հիմնական շարժումը, գաղութացնող ժողովուրդների և տեխնիկական ու կրոնական քաղաքակրթության անցումը Մերձավոր Արևելքից դեպի «ամանուն մայրցամաք»,— կրկին ու կրկին հավաստում է պատմությունը, որ ամբողջականանում է Դենի դը Ռուժմոնի գրքում: Այստեղ կա նաև այն հավաստիացումը, թե Նոյի երեք որդիները՝ Սեմը, Քամը և Հաբեթը, բաժին ստացան աշխարհի երեք մասերը՝ Ասիան, Աֆրիկան, Եվրոպան: Հաբեթը, որ արևելյան ծագում ուներ, Արևմուտքի ժողովուրդների նախահայրն է: Սեմը Արևելքի ժողովուրդների նախահայրն է, իսկ Սուրբ գիրքը մեկնում է, թե Հաբեթը կբնակվի Սեմի վրաններում, այսինքն՝ թե՛ Արևմուտքի վրա ընկած կլիմի նաև Արևելքի ճշմարիտ լույսը: Իսկ եթե Արևելքի լույսը աշխարհագրական տեղանք չէր, ապա քիչ նշանակալի չէր իր խորհրդավորությամբ աշխարհագրական արևմտյան տարածքը.

«Նախահոմերոսյան միջերկրականում փյունիկիացիք նույնպես նետվել էին արևմտյան ցամաքի որոնումներին, որն իրենց լեզվով պիտի նշանակեր «մայրամուտի երկիր»: Նրանք իրենց եզիպտացի ուսուցիչներից վերցրել էին «սքանչելի Ամենօթի», Խորհրդավոր Մայրամուտի գաղափարը, որտեղ Եզիպտոսը գետեղել էր մեռյալների երանելի և հավերժական կացարանը...» (25):

Անշուշտ, Եվրոպայի գաղափարի շուրջը եղած բոլոր ուսումնասիրությունները, ամենափոքր իսկ բացահայտումներով բնորոշում են նրան իբրև սառը դատողություններով կազմակերպված մտքի և մեծ ոգևորությամբ այդ միտքը բարձր պահելու անհողողող կամքի խորհրդանիշը: Իսկ երբ նրա հետ զուգահեռվում է արևելյան ներամփոփվածությունը, ինչպես Սեմ Հաբեթ ժառանգության զուգահեռը, ահա այստեղ է վեր հանում ճշմարիտ Եվրոպան:

«Ճշմարիտ եվրոպացի»: Այս անունով բազմիցս են բնորոշել Ֆրիտյոֆ Նանսենին: Այն, որ աշխարհագրական այդ տարածքը, որի բնակիչն էր նա, լիովին համապատասխանում է աշխարհագրորեն, ինքնին պարզ է, բայց այն, որ բացառիկ այդ անձնավորությունը բացառիկ ձևով իր մեջ



խտացնում էր Եվրոպայի գաղափարն՝ սկսած այն օրից, երբ Եվրոպան դեռևս առասպելաբանության մեջ էր, գալիս է ապացուցելու մի ուրիշ բան: Այն, որ մարդկային հոգին տիեզերքի հյուլեն է այնպես, ինչպես կաթիլը՝ օվկիանոսի:

«Ֆրանս»-դրեյֆը 19-րդ և 20-րդ դարերի սահմանագլխին մեծ օվկիանոս էր հանել Եվրոպայի կաթիլը՝ Ֆրիտյոֆ Նանսենի պարզ ու զուլալ ոգին:

Արշավախմբի վերադարձից անմիջապես հետո լույս տեսավ դեպի Հյուսիսային բևեռ խիզախ նորվեգացու՝ նավով, այնուհետև ոտքով գնալու արշավի մասին գիրքը: «Ավելի ուշ եկավ ավիացիայի դարը,— գրքի առաջաբանում գրում է Չեռնենկոն,— մարդկությունը հուսալի միջոց ստացավ երկրի ամենահեռավոր ու դժվարամատչելի անկյունները հասնելու համար»: Սակայն խնդիրն այստեղ, որի վրա էլ ուզում ենք կենտրոնացնել «Ֆրանս»-ի ընթերցողների ուշադրությունը, բոլորվին այլ է: Արդեն ամփոփված են, թե՞ դեռ շարունակվում են արկտիկական հետազոտությունները, և կամ ի՞նչ են տվել մարդկությանը գիտականորեն, դրանք բոլորովին այլ, ընդամենը բնագավառային մասնագետների հետաքրքրության շրջանակներում է պատվում՝ պատելով նաև գիտության պատմության անիվը: Իսկ այն, որ «Ֆրանս»-ը դեպի մեզ է բերում մարդու ֆենոմենն ընդհանրապես, և, մասնավորապես, եվրոպացու ֆենոմենը, արժևորում է գրքի նշանակությունն իբրև մարդու և նրա կողմից կյանքի իմաստի մասին դռների բանալիների հայտնագործություններ:

Ֆրիտյոֆ Նանսենը եզակի ու բացառիկ անձնավորություն էր, և «Ֆրանս»-ը պատմում է այդ մասին կաթիլ առ կաթիլ, մաս առ մաս: Ինչպե՞ս էր նրա հոգում այդքան ջերմ մնում Սառուցյալ օվկիանոսի անծայրածիր ջրերում, զարմանում էր անգամ հենց ինքը՝ Նանսենը: Այսօր զարմանալիս այն է, որ գիտական հայտնագործությունների պատրվակով մեկ դար մեզանից առաջ գրված գիրքը կարող է ջերմ մնալ առավել մեքենայացված ու ավտոմատացված ապրելակերպով մարդկանց հետզհետե սառչող օվկիանոսում: Այն կոչված է մշտապես ջերմ պահելու մարդկության պատմությունն իր այն հատվածում, որտեղ առկա է սառեցման վտանգը:

Պայքարի և չհանձնվելու հզոր ոգի: Եվ դա այն դեպքում, երբ Երկիր մոլորակի մասին Նանսենի պատկերացումները կապված էին 19-րդ դարի վերջին լայն տարածում գտած այն թեորեայի հետ, ըստ որի՝ գնալով կնձվազի արեգակի ջերմությունը, և Երկիրը կենտրոնի մեռյալ ու մութ սառնության գրկում: Այս փաստն ասես թե վավերացնել է ուզում նրա շրջակայքի պատկերը, երբ արշավախումբ ծայրաստիճան հյուսիսում էր. «Անապատային ձյան հեռու հարթություններ, անսահման, անկենդան

սառցազանգվածներ» և նրանց ճայթյուններից առաջացող խուլ դրդյուններ:

«Կիրակի, ապրիլի 15: Այսպես՝ ապրիլի կեսն է: Ինչպիսի ուրախություն, կյանքի ինչպիսի հրճվանք է հնչում այս բառի մեջ:

...Բնության զարթեցրած հաճույքի ինչպիսի անսպառ աղբյուր է բերում իր հետ ապրիլ ամիսը: Բայց ո՞չ այստեղ, ո՞չ այստեղ... Ամենուրեք միայն նոր եկած ձյան շլացուցիչ սպիտակությունն է... Ժամանակը հոսում է նույն միապաղաղությամբ...

...Ես նայում եմ հեռու, շատ դարերի միջով դեպի առաջ... դանդաղ ու աննկատելիորեն իջնում է երկրի ջերմաստիճանը... միլիոնավոր տարիներ անհետանում են հավիտենականության մեջ... ի վերջո բոլոր ծովերը միաձուլվում են մեկ սառուցյալ օվկիանոսի մեջ... անհետանում են կյանքի վերջին հետքերը... այն ամենը, ինչի համար մենք ապրել ենք, այլևս գոյություն չունի... Երկիրը սառեց և անկենդան սառցազանգվածով շարունակում է իր օրբիտով պտտվել տիեզերքի հավերժական տարածության մեջ... Այսպիսին է հավերժության ամեզր շրջապատույթը: Բնության հավիտենական ռիթմը...» (334):

Սառցային ժամանակների շրջապատույթի մասին գաղափարը, որի շունչն զգում էր Նանսենը, երբ «ինչպես խխունջը խեցու մեջ» զբաղված էր նավասենյակում, յուրատեսակ, իրար հակադիր լիցքերով էր զինում նրան: Բնության «մեծ տավիղի» ձայներից կազմված սիմֆոնիան հնչում է դարերի միջով: «Նա մեկ լավում է կյանքի աղմուկի մեջ, մեկ մահվան քարացած սրտում, ինչպես Շոպենի թաղման քայլերգը: Այդ ձայներն ամբողջ աշխարհներ են: Մեկն ապրում ու հնչում է ավելի երկար, մյուսն ավելի կարճ, և բոլորն էլ մեռնելով իրենց տեղը գիջում են նորին...» (333):

Բայց ահա նանսենյան օրագրության ու հիշողությունների միջից դուրս ենք կորզում զարման մասին ունեցած նրա հիշողությունը, երբ ինքը դեռ կանաչախիտ անտառներով շրջապատված հայրենի դաստակերտում էր. «...մարդ չի ուզում տեղում նստած մնալ, նրան ձգում է ազատությունը...»:

Կյանքի ու մահի հակադիր բևեռների մասին նանսենյան խոհակա-նությունը գեղեցիկ ու իմաստալից է յուրաքանչյուրն իր տեղում՝ յուրովի: Հյուսիսային երկնակամարի վրա ստեպ-ստեպ հայտնվող շլացուցիչ գեղեցկությունները լուրջ մտորումների տեղիք են տալիս: Փոխվում են սկզբում նրա ունեցած պատկերացումներն այն մասին, թե աշխարհը սառչելու հետ այն դառնալու է մերկ ու մեռյալ անապատ: Այժմ նա բացականչում է կանգնած հյուսիսափայլի շողողուն բռնկումների առաջ. «Չէ՞ որ իմ առջևում է աշխարհի ապագան՝ գեղեցկությունը և մահը» (214): Հաջորդ պահին ձևավորվում են հարցեր և ինքն իրեն ան-

գամ հակադրվելով պատասխանների նոր տարբերակներ գտնելու մղումով է տարվում գիտնականը. «Հապա ինչի համար է այս գեղեցկությունը, երբ չի լինելու մի կենդանի էակ, որը կարողանա այն վայելել... Ինչո՞ւ, ինչի համար են այս աշակերտները...: Սառցե հրաշագեղ, բայց անկենդան խաղերի տակ Նանսենի հոգուց դուրս թռչող հարցերի հեղեղն ունի իր վերջնական, այլևս ոչ մի տարբերակ չճանաչող պատասխանը. «Պատասխանը կարդա այնտեղ, կապույտ աստղային երկնքում...»: Ո՞ւմ էր դիմում օրագրային այս գրառումով Ֆրիտյոֆ Նանսենը շատերի համար արդեն մահվան խորխորատների վերածած Բենեռային ծովի սառցե ջրերի վրա: Իհարկե, ցամաքի վրա գտնվող մարդկանց, որոնց հետ համոզված էր, որ կրկին հանդիպելու է: Եվ եթե համարենք, որ աստղալի երկինքն անուրջների աշխարհն է, և եվրոպացու մտավոր աշխարհն արդարացում է անուրջների աննյութեղենությունն իբրև գոյության ձև, ուրեմն Ֆրիտյոֆ Նանսենը հավերժի հետ կապակցված է տեսնում մարդկային կյանքը: Նրան հասանելի է մահվան միջով դեպի հավերժը մտնելու գեղեցկությունը՝ մահվան անմահությունը:

Իսկապես «Ինչի՞ մասն կլինեք անուրջներով զուրկ մեր կյանքը» խոսքերը, որոնցով ավարտվում է ««Ֆրան»-ը Բենեռային ծովում» աշխատությունը, ինչպես նաև՝ անձնակազմի երեք տարվա զրկանքներով, տխրություններով ու ոգևորություններով լի արշավը, խորհել է տալիս ընթերցողին կյանքն ու մահը իրար հետ արժանավայել ու գեղեցիկ կապի մեջ տեսնող եվրոպացու մասին: Աշխարհն անէության մեջ ընկղմվելու մասին միտքը չի ճնշում նրան հուսահատեցնելու չափ, որովհետև նա գտել է անուրջների աշխարհի գոյության հմայքը: «Ֆրան»-ի վրա երեք տարի շարունակ տևած անասելի ու յուրահատուկ ծանր կյանքի ընթացքում Ֆրիտյոֆ Նանսենը բացի այն, որ բարձր պատասխանատվությամբ է իրագործել գիտական հետազոտությունները, անընդհատ տրվել է խոհական մտորումներին աշխարհի ու կյանքի գոյության շուրջը: Նման մտորումների համար հիմք են դարձել բնության բոլոր երևույթներն իրենց թե՛ հրավառությամբ, թե՛ ամենաչնչին տարբերակումների մեջ: Շրջապատի հետ կապվածությունը Նանսենի համար գոյության ձև էր, յուրաքանչյուր պահի մեջ նա բնության հետ էր, և բնության հետ էլ ապրում էր նրա ծննդի ու մահվան բոլոր խորհուրդները: Դիտումների ու չափումների յուրաքանչյուր արձանագրության հետևում էր օրագրային խոհականությունը... Կարմիր, արնանման բոցավառվող շերտ արևմուտքում և ցուրտ, ցուրտ ձյունը նրա ներքևում: Հիշում ես ծովն այնտեղ, հայրենիքում, մայրամուտի ժամին... Այստեղ նույնպես ծով է, բայց կաշկանդված,

մեռյալ ծով: Իսկ շուտով արևը բոլորովին քելու է մեզ, մենք կմնանք խավարում... Արդյոք դա այն ծովը չէ՞, որ երբևէ կլանելու է ցամաքը...» (221):

1895 թվական, հոկտեմբեր: Լրացել է «Ֆրան»-ի սառցաջրերի, սառույցների վրա և սառցաբեկորների մեջ գտնվելու երկու տարին: Անձնակազմը շարունակում է իր համերաշխ ու համառ գոյությունը: Մտավոր, գիտական աշխատանքների և մարդկային հարաբերությունների մեջ պարտաճանաչ, կազմակերպված եվրոպացին՝ Ֆրիտյոֆ Նանսենը, գնալով երկյուղածորեն է լցվում տիեզերական Գոյի նկատմամբ, հասնելով ճիգ ու ջանքի մեջ երջանկություն փնտրող մարդկային գոյության ունայնության գաղափարին:

«...Ո՞ր ձևն է միահյուսում կյանքի թելերը՝ ստիպելով, որ ինքներս մեզ խաբենք, և շարունակ, անշեղորեն տանում է այնպիսի ճանապարհներով, որով մենք չենք ըմտրել և բոլորովին չէինք ցանկանա գնալ այդ ճանապարհով: Մի՞թե ինձ դեկավարել է միայն պարտքի զգացումը: Օ՛, ոչ: Չէ՞ որ ես սուսկ մի երեխա էի, որին արկածները տարան անհայտ երկրներ, և որն այնքան երկար ժամանակ երագում էր նրանց մասին, որ, վերջապես, երևակայեց, թե գտել է այն, ինչ որոնում էր: Եվ ահա ես սկսեցի մի մեծ ձեռնարկում: Այստեղ՝ իմ առջևում, սառույցների հեքիաթային երկիրն է, խորունկ ու մաքուր, ինչպես տիեզերքի անսահմանությունը... Այստեղ մեծ գիշերվա մեջ կանգնած դեմ առ դեմ բնությանը՝ քեզ զգում ես այնքան հնազանդ, երկյուղածությամբ կանգնած ես հավերժության ոտքերի մոտ ու ունկնդրում ես նրան ու սովորում ճանաչել տիեզերքի տիրոջն ու արարչին: Կարծես կյանքի բոլոր առեղծվածները բացվում են քո առաջ, և տարօրինակ է թվում քեզ, որ դու կարողացար տանջվել երկյուղներով ու կասկածներով: Այդ ամենն այնքան մանր է, այնքան անասելի չնչին... «Ով տեսել է Եհովային, նա պետք է վախճանվի» (399):

Այնուամենայնիվ, տրտմաթախիծ մտորումներն ու նիրվանային գրավիչ շոշափուկներն իրենց մեջ չէին կարող առնել գործողությունների ծարավ գիտնական եվրոպացուն: Նրա մտապատկերի մեջ հառնում է նորվեգական ժողովուրդը, որը «իր փողերն է զոհաբերել» հանուն անհայտ շրջանների հետազոտությունների: Նա պարտք ունի կատարելու իր ժողովրդի առաջ: Կյանքի դատարկության մասին միտքը նա մեկ կապում է ընտանիքից հեռու գտնվելու փաստի հետ, մեկ տրամադրության փոփոխությունների: Հաջորդ պահին նրա միտքը շամփրում է մի ուրիշ կասկած. «Թե՞ ես վախենում եմ կյանքս վտանգի տակ դնելուց: Ո՛չ, դա չէ: Հապա ի՞նչն է ինձ զսպում: Պլանի իրագործման նկատմամբ եղած կասկածա՞նքը: Ոչինչ չեմ հասկանում, ամեն ինչ խճճվեց, ինքս ինձ համար հանելուկ եմ դարձել...» (291):

««Ֆրամ»-ը Բևեռային ծովում» գրքի նորվեգական առաջին հրատարակության առթիվ Նանսենը մի քանի խոսք է գրել նրա առաջաբանում: Այդ այն մասին, թե զիրքը թեպետ շատ է գունազարդված անձնականով, բայց ինքը կարծում է, որ տրամադրությունների տատանումները չեն խանգարում ստեղծել կյանքի ու կենցաղի պատկերը սառցային անապատում: Բայց մի՞թե դրանից առավել շատ չի շահել ընթերցողը: Մի՞թե կյանքի ու կենցաղի պատկերների հետ միահյուսված մեր առջև չի հառնում մարդ արարածն իր ֆիզիկական, մտավոր ու հոգևոր առավելագույն հնարավորություններով: Մի՞թե մեր առջև այդ ամենի միջոցով իսկապես չի բացահայտվում Մարդկային ու Տիեզերական Գոյի աներևույթ կապը: Մի՞թե Ֆրիտյոֆ Նանսենի ճանապարհորդական երեք տարվա կյանքը, որ այնքան գեղագիտորեն են ներկայացնում նրա օրագրության էջերը, անհատի ապրելու ճշմարտության մասին չէ, ապրելու իրավունքի ճշմարտության մասին:

Նանսենի կենսագիրներից Վ. Վիգեն ընդամենը հարևանցիորեն նշում է, թե «Նանսենը ընդհանրապես լավ պատմող էր»: Բավական է միայն այդ մասին այս կարճ խոսքը, քանի որ «Ֆրամ»-ը աննկարագրելի պատկերավորությամբ արված պատմությունների հեղեղ է: Կյանքի իրավունքի ճշմարտությունն այստեղ ներկայացված է գեղարվեստական կատարյալ բարձրակետի վրա: Գեղարվեստական խոհն այստեղ այնպիսի պոռթկումներ ունի, որոնք հատկապես առանձնանում են ուրույն արժեքով: Ահա արժեքներից մեկը՝ խոսքի իր ամբողջականության մեջ.

«...Բայց դու, բևեռային գիշեր, նման ես մի կնոջ, գերող, չքնաղ մի կնոջ՝ անտիկ արձանի ազնիվ դիմագծերով, ինչպես և նրա մարմարյան սառնությամբ: Երկնային եթերի նման պարզ ու վճիտ քո բարձր ճակատին չկա մարդկության փոքր դառնություններից ծնված տառապանքի ոչ մի ստվեր, քո գունատ, չքնաղ այտերին չի շառագունում զգացմունքների կարմրությունը: Քո ձյունի նման սև մազերում, որ քամուց փողփողում են տարածության մեջ, եղյամը հյուսել էր շողշողուն բյուրեղներ: Այնքան ազնվազարմ են քո հպարտ վզի խիստ գծերը, քո բոլորակ ուտերը, բայց, ավա՜ղ, նրանց մեջ ինչպիսի աննախանջ ցուրտ: Քո ձյունափայլ անարատ կրծքում կա ձյունով ծածկված սառցի անզգայնություն: Դու անարատ, մարմարի նման գեղեցիկ, հպարտ սավառնում ես սառած ծովի վրա, քո ուտերի արծաթափայլ թիկնոցը, որ գործված է հյուսիսափայլի ճառագայթներով, փողփողում է մութ երկնականմարով: Բայց և այնպես, երբեմն վշտի ծալքեր են երևում քո շուրթերին և անսահման վիշտ կա քո մութ աչքերի խորքերում: Գուցե քե՞զ էլ է ծանոթ կյանքը՝ հարավային արևի ջերմ սեռը, կամ դա իմ սեփական լլկանքների արտացոլումն է: Այո, ես հոգնեցի քո սառը գեղեցկությունից, կարոտում եմ

ջերմ, եռուն կյանքը: Թույլ տուր ինձ վերադառնալ կամ որպես հաղթող, կամ որպես մուրացկան՝ ինձ համար միևնույն է: Բայց թույլ տուր ինձ վերադառնալ և նորից սկսել կյանքը: Այստեղ տարիներ են անցնում, բայց ի՞նչ են բերում նրանք: Ոչինչ, բացի փոշուց, չոր փոշուց, որ ցրում է քամու առաջին պոռթկումը. նոր փոշի է գոյանում նրա տեղը, նրան դարձյալ քշում է նոր քամին: Կյանքն ավելին է, քան սառը ճշմարտությունը, իսկ ապրում ենք մենք միայն մեկ անգամ» (275-276):

Ուրեմն արժե պայքարել և վեհորեն հաղթահարել ունայնության պարիսպը: Ուրեմն առաջ՝ դեպի կյանքի իմաստի նոր հայտնություններ: Առաջ դեպի կյանքի «ոժիվարիմաց կտավի» նոր ճանաչողություններ: Առաջ, առանց ուշադրություն դարձնելու միտքը պղտորող հարցին, որ երբեմն-երբեմն կախվում է զլխավերևում. «Ինչո՞ւ դու գնացիր»: Իսկ եթե ուշադրություն ես դարձնելու այդ հարցին, ուրեմն տուր այն պատասխանը, որ ապրել է քո ներսում քո գոյության ողջ ընթացքում. «Մի՞թե հեղեղը կարող է կանգնեցնել իր վազքը կամ հոսել ստորոտն ի վեր» (242):

Որո՞նման ու պայքարի ոգին իր տարերքի մեջ է մնում բևեռային խաղաղ թե հյուսիսափայլով լի շլացուցիչ գիշերներին, սառցային սպառնացող սեղմումների թե բաց ջրերի վրա:

Պայքարի մեջ չընկճվելու նամսենյան համարձակ ոգու հետ նրա հայրենիքում ծանոթ էին դեռևս «Ֆրամ»-ով կատարած արշավից տարիներ առաջ, երբ նա գազանորսական «Վիկինգ» նավով գնում է նվաճելու Գրենլանդիան: Այդ էքսպեդիցիան պլանավորված էր այնպես, որ անցումը պետք է կատարվեր Գրենլանդիայի անմարդաբնակ ափերով դեպի մարդաբնակ ափեր, ապա նոր՝ վերադարձ: Մամուլում ներկայացվող սենսացիոն լուրը Նանսենին որակում էր իբրև կամավոր ինքնասպանի: Մերժվում էին աջակցության բոլոր խնդրանքները: Իսկապես՝ համառ եվրոպացի: Արշավախմբի վերադարձի հանդիսավոր օրվա մասին հիացմունքը չի զսպում նաև նրա կենսագիրը. «Նանսենը այն վիկինգն էր, որը հեռավոր անցյալի սագաները կապում էր երեկվա սագայի հետ, գերանների լաստառաքի սագայի հետ, որն իր լույսը արձակում է ուղիղ ջրվեժի առջև...»:

Ֆրիտյոֆ Նանսենն ուներ պայքարով առաջանալու, հաղթանակի համար ոգին անկոտրում պահելու խորհուրդը. «...այրեցե՞ք ձեր թողած նավերը, քանդեցե՞ք ձեր ետևում կամուրջները: Միայն այդ դեպքում ձեզ և ձեր ուղեկիցների համար այլ ելք չի մնա, քան միայն առաջ շարժվել...»: Այսպես էր կարդում նա իր դասախոսությունները արշավից շատ տարիներ հետո:

Նման ձևով հաղթողը կրկին տուն է վերադառնում: Սա է նամսենյան թե՛ տրամաբանությունը, թե՛ փիլիսոփայությունը: Չէ՞ որ երկրագունդը

կլոր է և նման ձևով տուն վերադարձողը նահանջի ճամփան անհամար-  
ձակ բռնողը չէ, այլ հաղթանակով իմաստնացած և իր տունը ճշմարտա-  
պես վայելելու արժանի մեկը: Այդ տրամաբանությամբ էլ նա առաջ էր  
շարժվում «Ֆրամ»-ի հետ:

«Շաբաթ, հոկտեմբերի 7: ...Փշում է հյուսիսային քամի: Վախենում  
եմ, որ նա մեզ տանի հեռու հարավ: Դեռ երկու օր առաջ դիտումները  
ցույց տվին ավելի հարավ, քան մի շաբաթ առաջ էր... մենք նորից կնվա-  
ճենք այդ ռուպեները, մենք պետք է շարժվենք դեպի հյուսիս: Այժմ այդ  
նշանակում է՝ մենք գնալով ավելի ենք հեռանում տնից: Եվ ճանապարհը  
երկար է լինելու: Բայց շուտով մենք նորից կսկսենք մոտենալ տանը»  
(220):

Տունը Ֆրիտյոֆ Նանսենի համար երջանիկ խաղաղության նշանա-  
կությունն ունեցող հասկացություն էր: Տան կարտուն ուղեկցում էր նրան  
ողջ արշավի ընթացքում, իբրև խաղաղության մեջ ներդաշնակ ապրու-  
նով հոգեկան բավականություն ստանալու կարող: Ահա հակադրու-  
թյունների մեջ կյանքիմաստ փնտրող եվրոպացուն բնորոշ ևս մի օրի-  
նակ: Տան զգացողությունն այստեղ վերադարձ է հանգստավետ վայելքի  
զգացողության, որի կաշիքը ևս առկայծում էր բնության հետ պայքարի  
ելած անհատի հոգում:

«Հորիզոնի մի ծայրից մյուսը փռված անծայրածիր հարթավայրե-  
րում, ասիական նունդրանների անընդգրկելի լայնության վրա քոչվորը  
թփափառում է եղջերուների իր հոտերով: Հիասքանչ ազատ կյանք: Ուր  
որ դուր է գալիս, այնտեղ էլ նա խփում է իր վրանը՝ թողնելով, որ եղջերու-  
ները արածեն իր շուրջը, երբ ցանկանա, տեղափոխում է այլ վայրեր: Ես  
գրեթե նախանձում եմ նրան. ոչ մի նպատակ, ոչ մի հոգս, միայն ապրել:  
Ես չէի խորշի լինել նրա տեղը, կնոջս ու երեխաներիս հետ ապրելի ազատ  
և ուրախ այդ անսահման հարթավայրում» (134):

Ֆրիտյոֆ Նանսենը, սակայն, որի գործունեությամբ ապացուցեց  
այն, որ հանգստավետ խաղաղությունը վայելք կարող է լինել, եթե քեզ  
արդեն ծանոթ է պայքարի անհանգիստ հոգին: Եվ որքան մեծ է պայ-  
քարի տառապանքը, այնքան մեծ է նվաճված խաղաղության վայելքի  
չափը: Թե որքան ծանր էր նրա համար ապրել սիրած կնոջից անասե-  
լի հեռու և նման պայմաններում, փաստում է այն հանգամանքը, որ նա  
մշտապես երկյուղածորեն էր հիշում կնոջն իր օրագրության էջերում:  
Այստեղ նա երբեք չնշեց Եվա անունը՝ ասես վախենալով խառնել  
նրան նյութական գոյությամբ եռուն աշխարհի հետ: Եվան իր վեհ ու  
քնքուշ, բյուրեղյա մաքրություն ունեցող հուշն էր, որի մասին գրված  
խոսքը կրում էր մեծատառով Նա անունը:

«...Ես անգոր եմ հայացքս հեռացնել արևմուտքի հեքիաթային  
հրացուլքից, ուր լուսնի գունատ ու բարակ արծաթագույն եղջյուրն իր  
ներքևի ծայրը սուզում է արյունամերկ ցուլի մեջ: Այդ ցուլի միջով մտ-  
քերս սլանում են դեպի արևը, որն այնքան հեռո՛ւ-հեռու է, և դեպի նրան,  
միակին, դեպի մեր ապագա հանդիպումը... օ՛, գրկանքների հազարա-  
վոր ժամերն ու օրերը կանհետանան հանդիպման մեկ ակնթարթի ան-  
սահման հրճվանքի մեջ...» (241): Այս խոսքերը գրառվել են նավարկու-  
թյան առաջին տարվա վերջին, նոյեմբեր ամսին, երբ դեռ առջևում խոր  
զգացումների երկու տարի կար: Այնուամենայնիվ, գուցե թե հենց այս,  
հիշյալ նոյեմբերի 5-ի կիրակի օրվա տպավորությունն էր այնքան  
հզոր, որ հետագայում ստիպեց Ֆրիտյոֆ Նանսենին «Ֆրամ»-ը զիջել  
Ամունդսենին, նրանով երկրորդ անգամ արշավի դուրս գալու համար:  
Դրանից առաջ նրան գրվում էր Անտարկտիկան, և նա Լոնդոնի Աշ-  
խարհագրական ընկերությունում դասախոսություններ է կարդում այդ  
արշավի ծրագրերի մասին: Նա չէր կարող «Ֆրամ»-ը խոստանալ ար-  
դեն ականավոր բեռնախույզ Ամունդսենին: «Մեպտեմբերին Ամունդսե-  
նը եկավ վերջնական պատասխան ստանալու,— գրում է Նանսենի  
կենսագիրը:— Երբ Նանսենը դուրս է գալիս դիմավորելու Ամունդսենին,  
նրան կանգնեցնում է կինը. «Ես գիտեմ, թե ինչ է լինելու,— ասում է  
նա,— դու դարձյալ մտադիր ես ինձ մենակ թողնել»: Նանսենը նայում է  
նրան և ոչ մի խոսք չասելով, գնում է այն սենյակը, ուր նրան սպասում  
էր Ամունդսենը: «Դուք «Ֆրամ»-ը կստանաք», այսպիսին էր Նանսենի  
որոշումը»:

Նանսենի կենսագիրները վկայում են, թե նա 1907-ին հրաժարվեց  
երկրորդ անգամ «Ֆրամ»-ով ճանապարհվելուց, քանի որ զբաղված էր  
քաղաքական ու հասարակական գործունեությամբ: Սակայն Եվա Սար-  
սը ժողովրդի հետ կապված կյանքի նշանակությունն ուներ: Նրա մեջ  
Նանսենը տեսնում էր հարազատ տունն ու երկիրը: Այդպես էր, երբ նա  
տուն ուղարկվող փոստի վերջին հնարավորությունն ուներ.

«...Վերջապես, վերջին ձեռքսեղումներ: Կրիստոֆերսենը և Տրոնտ-  
հենյը իջան նավակ և շուտով անհետացան մառախուղի մեջ: Նրանց  
հետ միասին գնաց տան վերջին փոստը, խզվեց հայրենիքի հետ կապող  
վերջին թելը: Մենք բոլորովին մենակ մնացինք մառախուղի ծովի մեջ...»  
(140):

Ֆրիտյոֆ Նանսենը շատ էր կապված բնության հետ: Գուցե թե  
դրանից էր այդքան հուզառատ նրա գրիչը, որ հուզականության իր  
բարձրակետում էր, երբ խոսքը վերաբերում էր հրաժեշտներին, ըն-  
տանիքին ու հայրենիքի՝ Նորվեգիայի մասին հիշողություններին:

Նանսենի օրագրային գրառումները «Ֆրան»-ի վրա զարմացնում են, բացահայտելով նրան իբրև ոչ միայն քաջ զինակ ժողովրդական երգերի, դյուցազնական ասքերի, ավանդապատումների, այլև պարզորոշ նկարագրելով դրանց թողած ազդեցությունը նրա կյանքի ու գործունեության վրա, դրանց հետ ունեցած նրա կապվածությունը և դրանցով լի ոգու հարստությունը: Հենց ժողովրդական երգից վերցված հատվածով է սկսվում մեկնումի նկարագրությունը, արկածների սկիզբը, ցույց տալու համար իր համոզումն այն մասին, որ ինքը, տեղյակ լինելով խավարի քազավորության մասին, կանովին և համարձակորեն է նետվում այնտեղ, քանի որ իր հետ նորվեզ ժողովրդի ոգին է:

1893 թվականի հունիսի 24-ը հրաժեշտի օրն է: Կարոտն սկսվում է հրաժեշտից առաջ. «Վերջին անգամ ես տնից միայնակ գնացի այգու միջով դեպի ծովափ, ուր անգթորեն ինձ էր սպասում «Ֆրան»-ի փոքրիկ նավակը: Այն ամենը, ինչ որ սիրելի էր իմ սրտին, մնաց ետևում:

...Այդ ակնթարթին ես ամեն ինչ կտայի, միայն թե հետ վերադառնալու հնարավորություն լիներ: Իսկ վերևում՝ լուսամուտի գոգին նստած, քաթիկներով ծափ էր տալիս իմ փոքրիկ Լիվը»:

Մարդկային կարոտը ետ վերադառնալու հնարավորությունների մեջ էր: Սակայն դա ընդամենը կայծի մի գեղեցիկ փշուր էր այն հզոր կրակի առջև, որն առաջ էր մղում Նանսենին: Առասպելներով ու կյանքով լի եվրոպացու ոգին էր դա:

Դեպի ռիսկ և անորոշություն նա գնում էր զոհողությունների գնով: Նա սառնասրտորեն, կամ սեփական հետաքրքրություններին հազուրդ տալու համար չէ, որ փորձում էր իր կամքի ուժը: «Ֆրան»-ով կատարվող արշավին նվիրված ողջ մենագրության մեջ տրոփում է նրա նուրբ զգացմունքներով, ներաշխարհային խորքերում մարդկային վեհ զգացումներով հոգեկան բավականություն ստանալու կարոտը: Այդ կարոտը քայլեց նրա հետ ոչ միայն արշավի, այլև իր ողջ կյանքի ընթացքում, երբ դեռևս քիչ էր համարում այն ամենը, ինչ արվում էր իր կողմից ուղղված մարդ արարածների համար մարդավայել կյանք ապահովելուն:

Չուտ մարդկային, առավել ևս՝ տղամարդկային վեհ պահվածքը բավականության հզոր աղբյուր էր Նանսենի համար: Այդ նաև այն պատճառով, որ նա շատ ճիշտ էր ընկալում վեհության արժեքը: «Իհարկե, դա մահի ու կենաց հարց է,— մտորում է նա սառույցների մեջ գերված «Ֆրան»-ի վրա,— բայց մի՞թե այլ ընտրություն կարող է լինել: Տղամարդուն վայել բան չէ՝ նպատակ դնել և նահանջել վճռական մարտին: Միայն մի ճանապարհ կա, և այն կոչվում է առա՛ջ...»:

Անհանգիստ հոգին ամենից շատ ճնշվում է անորոշ, անգործունյա միապաղաղությունից. «Ամեն ինչ խաղաղ ու մեռյալ է, քարացած, սառած է սառցածածկույթի տակ... Չգուցե եմ, որ իմ հոգին սառցակալվում է: Ինչ ասես չէի տա պայքարի մեկ օրվա համար, լուրջ վտանգի մեկ ակնթարթի համար» (325):

Իսկ ահա, երբ գալիս է գործելու և պայքարի պահը, անձնակազմն իր ղեկավարի հետ կիսում է համարձակությամբ ձեռք բերված հաջողության վայելքը: Նվաճված տարածության յուրաքանչյուր աստիճանը ոգևորության նոր աղբյուր էր: Այդպես հաղթահարեց «Ֆրան»-ը Չեյուսկիին հրվանդանը: Երբ վտանգներն արդեն ետևում էին, հնչում են թնդանոթային համազարկերը նավի վրա, թունդ է ելնում գեղազետ, զիտնական, ճանապարհորդի հուզաշխարհը: Ցայտում են արևի ճառագայթները, անձնակազմի բժիշկը պոետ է դառնում: Երեկոյան ամեն ինչ արդեն ավելի հանդիսավոր է դառնում: Նույնիսկ՝ մտորումները.

«Արևածագի հետ ցրվեց կախարդ Չեյուսկիին հմայքը, որ այնքան երկար կաշկանդում էր մեր միտքը: Այն արգելքը, որ մեզ ստիպում էր ձմեռել այս ավերին, անձնատուր եղավ: Դանապարհը, որ մեզ այս ավերի ցամաքային գերությունից պետք է տաներ դեպի նպատակակետը՝ դրեյֆոդ սառույցները, բացված էր»: Ցամաքային գերությունից ազատված նավը գնում էր գերվելու սառույցներին: Անձնակազմը գնում էր պայքարի նոր ոգևորություն փնտրելու և վայելելու հաջողության երանությունը:

Հետաքրքիր են նաև Ֆրիտյոֆ Նանսենի մտորումներն, ընդհանրապես, ճանապարհորդության նկատմամբ: Նա այստեղ կարևորում է նպատակակետի խնդիրը, և ըստ նպատակակետի նկատմամբ ունեցած վերաբերմունքի է տարբերակումներ դնում ճանապարհորդության իրողության խնդրի վրա:

Ահա Հյուսիսային Սիբիրի ամենավերջին կետում, բաց ծով դուրս գալուց առաջ պայմանավորվածություն կար՝ հանդիպելու նորվեգացու արմատներ ունեցող Ալեքսանդր Իվանովիչ Տրոնտհեյմին, որը «Ֆրան»-ի անձնակազմին պետք է ապահովեր լծկան շներով ու անհրաժեշտ այլ իրերով: Մորթեղենը, շները, եղջերուները, մթերված 300 փութ կերը հյուսիսի ամենավերջին կետը հասցնելու համար Տրոնտհեյմին անհրաժեշտ էր երեք ամիս ճանապարհ անցնել: Չնայած կար նպատակի պայմանավորվածությունը, բայց «դա ավելի շուտ քոչվորություն էր, քան ճանապարհորդություն,— հիշատակվում է գրքի՝ Տրոնտհեյմի ճանապարհորդությանը վերաբերող մասում,— շարժվում էին ոչ թե ուղիղ դեպի նպատակակետ, այլ շրջանցելով մեծ տարածություններ, և կանգ առնում ոչ թե այնտեղ, ուր ցանկանում էին, այլ այն-

տեղ, ուր հարմար էր եղջերուների համար, և որտեղ նրանք կարող էին մամուռ գտնել»:

Ողջ ճանապարհորդության ընթացքում, իհարկե, Նանսենին զբաղեցնում էր այն միտքը, թե արդյոք հայրենիք կվերադառնան որպես հաղթողներ, թե՞ կպարտվեն: Մակայն միևնույն ժամանակ նա պատրաստ է որքան ասես անհերքելի փաստարկներ բերել՝ ապացուցելու համար, որ «ամենագլխավորը՝ էքսպեդիցիայի ավարտումն է՝ հաջող կամ անհաջող, տուն վերադառնալը»: Ամենակարևորը՝ կար արշավի գիտական պլանը, և համոզվածությունը, որ այն իրագործմանը գնալու խնդիրը: «...Չորեքշաբթի, նոյեմբերի 29: ...Եվ եթե այն նույնիսկ չհաջողվի, ապա դա ոչինչ չի նշանակում, մի՞թե ես եմ մեղավորը: Ես կատարեցի իմ պարտքը, արի այն ամենը, ինչ ուժերս ներում էին, և կարող եմ հանգիստ խղճով վերադառնալ տուն, ընտանեկան օջախ»:

Ըստ Նանսեն ճանապարհորդի, պատահականություններն են, որ նման ճանապարհորդությունների ընթացքում հաջողություններ կամ անհաջողություններ են բերում, անմահացնում անուններ կամ հակառակը: «Պլանն իր արժեքը չի կորցնում, անկախ նրանից, թե բախտը մեզ կժպտա, թե ոչ: Իսկ անմահությունը, — շարունակում է գիտնականը, — այդ մասին մի խոսեք. կյանքում միակ արժեքավոր բանը երջանկությունն է, իսկ դա նրա մեջ չէ» (248):

Այստեղ կրկին առիթն է վերհիշելու Նանսենի՝ ինքն իրեն տված հարցը. «Արդյոք իմացության համար մղվող բուն պայքարի մեջ չէ՞ երջանկությունը»: Եվ հարցի պատասխանն էլ զուլալ ջրի նման պարզ էր մի անձնավորության համար, որ ծարավ էր ամեն ինչ իմանալու, նոր ճանապարհներ հարթելու, համոզված լինելով, որ «անհնարին է ամբողջապես ու լրիվ լուծել հանելուկը»:

Ֆրիտյոֆ Նանսենը բացառիկ բաց անձնավորություն է՝ ներկայացված իր ճանապարհորդական օրագրություններում ու նրանից դուրս եղած նոթերում: Եվ այդ անկեղծ, պարզ ու հստակ անհատից ճառագում է մարդկային զգացումների բազմազան դեպի վեհ ու գեղեցիկ նպատակներ, հույսեր, կարոտներ ու տրտմաթախիծ ապրումներ: Ահա շողում է նրա հոգու մարգարիտը ներամփոփումների պահերին, ապա շողում շլացուցիչ կայծակնային փայլով, երբ ձեռնարկված գործի ոգևորությունների մեջ է:

Ֆրիտյոֆ Նանսենի մարդկային կերպարը հարզանքի և ակնածանքի խոր զգացումների է մղում ոչ միայն իր նկատմամբ: Մարդու նկատմամբ, ընդհանրապես: Մարդն անսահմանափակ հնարավորություններ ու կարողություններ ունի և յուրաքանչյուր քայլ՝ դրանց բացահայտում-

ների ճանապարհին, հրճվանքով է լցնում ոչ միայն բացահայտողի սիրտը:

Արդյո՞ք ինքնաբերաբար էր ստացվում Ֆրիտյոֆ Նանսենի մտայն ամենը, ինչի նա հասնում էր համատ կամքի ուժի, նորբազույն հոգու, ինչու չէ, նաև արտաքինի շնորհիվ: Որքա՞ն էր այդ ամենի մեջ բախտի քմահաճույթը, գուցե նկատելի, բայց չի կարելի չասել, որ նա գնում էր յուրաքանչյուր նպատակակետ մանրամասն ու լուրջ վերլուծություններից հետո, խստակենցաղությամբ, ինքն իր վրա աշխատելով:

Ահա մի հիանալի օրինակ, որ վերաբերվում է մարդու կողմից կյանքի ընթացքի հետ հարմարվելուն և այդ հարցին Ֆրիտյոֆ Նանսենի վերաբերմունքի մասին: Մենք արդեն անդրադարձել ենք այն խնդրին, թե կյանքում նա որքան մեծ գնահատական էր տալիս պայքարի ու ձգտման նկատմամբ մարդու ունեցած կամքի ուժին և պայքարի մեջ կյանքն իմաստավորելուն: Բայց ահա նրան գրավում է անգլիացի փիլիսոփա Դավիդ Յումի (1711–1776) տեսակետը այն մասին, թե դեռևս անլուծելի է օբյեկտիվ իրականության գոյության հարցը: Սուբյեկտիվ իդեալիստ այս փիլիսոփան կասկածում է նույնիսկ, թե արդյոք ընդհանրապես գոյություն ունեն նրանք: Թեպետև Նանսենն այսքան խորությամբ չի գնում տրվելու Դավիդ Յումի տեսակետին, այնուամենայնիվ, 1893 թվի դեկտեմբերի 10–ին նրան սրտամոտ էր Յումի տողերը. «Երջանիկ է նա, ում կյանքի պայմանները համապատասխանում են նրա բնավորությանը, բայց էլ ավելի հարզանքի է արժանի նա, ով կարող է իր բնավորությունը հարմարեցնել պայմաններին» (252):

Հակադրությունների միջոցով ճանաչողության ձգտումը եվրոպացու բնավորություն է: Այն առավել ցայտուն է Ֆրիտյոֆ Նանսենի մոտ: Մակայն ի՞նչ է նշանակում «բնավորությունը հարմարեցնել պայմաններին»: Արդյո՞ք սա «նահանջի գինն» է, ետդարձը մինչև այնտեղ, որտեղից սկիզբ է առնում ունանշը: Կամ գուցե թե պայմանների նկատմամբ հարմարվողականությունը պայքարի յուրահատուկ ձև՞ է: Կամ էլ «ավյա՞լ պահի» խնդիր է, ժամանակավոր դադար մինչև նոր բռնկումներ: «Դա ճիշտ է, տվյալ պահին ես հետևում եմ հենց այդ փիլիսոփայությանը: Էլենկտրական լույսի տակ պառկած եմ անկողնում, գրում եմ օրագիրս, խմում եմ գարեջուր և ուտում բիսկվիթ: հետո վերցնում եմ գիրքը, կարդում մինչև քունս վրա հասնի: Ամբողջ օրը աղեղնալապտերը արևի նման լուսավորում էր մեր գոյությունը: Այժմ դժվար չէ գուլիս հանել մեր կեղտոտ խաղաթղթերից, կարմիր փոսիկով խաղաթուղթը տարբերել կարմիր ազգավի խաղաթղթից»: Հետո, իհարկե, գալիս են պայքարի ուրիշ պահեր, երբ արդեն ճանապարհի կեսն անցածն էր, և այրված էին

ետղարձի բոլոր կանուրջները: Ահա այստեղ էլ վճռվում են շատ խնդիրներ, այստեղ էլ ամբողջականանում Ֆրիտյոֆ Նանսենի կերպարը:

«Ֆրամ»-ը կալանված է սառցապատնեչի, սառցե սեղմումների մեջ, բայց նպատակակետը դեռ առջևում է: Նոյեմբերյան գրառումները լի են լիրիկական խոհերով գոյության առեղծվածի շուրջը, մտքերի ապարդյուն շրջապատություններից դուրս գալու լավագույն ելքերով, վճռական որոշումների գնալու համոզմունքներով և վերջապես, վճռական որոշման կայացումով:

«Կիրակի, նոյեմբերի 11:

...Ամեն գիշեր ու ամեն ցերեկ հյուսիսափայլը երկնքում վառում է իր հավերժ փոփոխվող ջքնաղ լույսերը: Նրան նայիր, համձնվիր ինքնամոռացության և հույսեր քաղիր նրանից, — նա այնքան նման է խռովահույզ մարդու ոգուն: Նրա նման անհանգիստ նա ձգտում է ընդգրկել ողջ երկնականարը, բայց մնում է սոսկ որպես պայծառ լույսի հետք, լույս, որը փայլատակում է ճառագայթների աննպատակ վազքով: Նրա վայրենի խաղը աշխարհում ամենաչքնաղն է, արշալույսից գեղեցիկ, բայց չի ավետում նոր օրվա գալուստը»: Ֆրիտյոֆն ինքը դատարկ տարածության մեջ անգոր մարդու մտորումներ է համարում այս ամենը: Նա ուզում է գտնել խորհրդավոր լույսի գաղտնիքը, նրա համար քիչ է գեղեցկությանը հիանալն ու անուրջներով տարվելը:

«Չորեքշաբթի, նոյեմբերի 14:

...Անորոշություն, օ՛, ինչպիսի անորոշություն, լսում ես սեփական նյարդերի թրթիռը... Այստեղ հավերժություն ու խաղաղություն է: Նիրվանան պետք է ցուրտ ու պարզ լինի, ինչպես այս հավերժական աստղալի երկիրը: Ի՞նչ արժեք ունեն մեր բոլոր հետազոտություններն ու մեր ամբողջ բանականությունը այս հավիտենականության առջև...»: Ծաղկում է արևելյան ներամփոփումը եվրոպացու ներաշխարհում: Ծաղկում, ծաղկում է, սակայն միտքն առաջ է ընկնում, պատասխանատվության զգացումից կամքի ուժ է ծնվում, և այն համառորեն գործողությունների է մղում:

«Ուրբաթ, նոյեմբերի 16:

...Փորձել բևեռ հասնել սառցի վրայով, թեկուզ ինչպիսի բարդություններ էլ լինեն... այն դիտումները, որ կատարելու ենք ավելի հյուսիսային լայնություններում, իրենց արժեքավորությամբ կգերազանցեն այն դիտումները, որ ես կարող էի կատարել մնալով նավում: ...Մեր սահնակային էքսպեդիցիան դեպի բևեռ անպայման ցանկալի է: ...Ավելի ճիշտ կլինի չսպասել հաջորդ գարնանը»: Ամեն ինչ որոշված է, ետևում են համառ կասկածները և հաշվարկները այն մասին, թե ինչ է դրվում ռիսկի, և ինչքա՞ն բան են շահելու դրանից:

Կիրակի՝ նոյեմբերի 18-ին, կրկին մտորումներ, այս անգամ պայքարի ոգեշունչ զգացումներով:

— Հըմ... մի՞թե անբավականությունը, գրկանքները, տառապանքները չեն կազմում կյանքի անհրաժեշտ պայմանները: Առանց գրկանքների չկա պայքար, առանց պայքարի չկա կյանք, դա նույնքան ճիշտ է, որքան երկու անգամ երկուսը հավասար է չորսի: Ուրեմն թող սկսվի պայքարը: Հյուսիսում նշմարվում է արշալույսը: Օ՛, միայն թե լինել պայքարի մեջ, խմել լիքը բաժակից: Պայքարը կյանք է, իսկ նրա ետևում ժպտում է հաղթանակը»:

Սկսվում է շնասահնակներով արշավը դեպի բևեռային ծայրագույն կետը: Դժվարություններով ու տառապանքներով լի արշավ:

Մարդկային տարբեր բարեմասնություններով, բարեհոգությամբ, ուժեղ կամքի և առասպելական ոգու տեր անձնավորությունը՝ Ֆրիտյոֆ Նանսենը, սովորածավալ երկհատորյակի մեջ, որը վերաբերում է Հյուսիսային բևեռ կատարած երեքամյա ճանապարհորդությանը, ոչ մի տողում չի անդրադարձել իրեն, ի ցույց դնելու համար իր գիտելիքները, մտավոր, ֆիզիկական ու հոգևոր կարողությունները: Այդ ամենին տեղյակ լինելուն օգնում են ընդամենը զուսպ ու հակիրճ նկարագրությունները, տողատակային մտորումները: Ո՞վ էր նա «Ֆրամ»-ում կողմնակի աչքով, այն հատվածում, որը մեջ է բերված ծայր հյուսիսում նրանց պաշարով ապահովելու առաքելությունն ունեցող Տրոնտեյնի հետ հանդիպման մասին պատմող «Տրոնտեյնի ճանապարհորդությունը» հատվածում:

«Ֆրամ»-ին վաղուց սպասող խումբը վերջապես հեռվում նշմարում է նավից բարձրացող ծուխը: «...Այստեղ նրան դիմավորում է Նանսենը, հագին ճարպակալած աշխատանքային կուրտկան: Նանսենը դեռ բոլորովին երիտասարդ, ոչ բարձրահասակ մարդ է: Նրա յուրաքանչյուր շարժումն ու խոսքը վկայում է նրա եռանդի, կամքի ուժի և տոկունության մասին: Նրա վերաբերմունքը ենթակամների նկատմամբ, որոնք ընտրված են մեկը մյուսից ավելի լավ, աչքի է ընկնում մտերմությամբ ու սիրով: Ըստ երևույթին, դա մի ընտանիք է՝ միացած մեկ գաղափարով, և կրքոտ կերպով ձգտում է իրագործել այն...»:

Հետաքրքիր է, որ արշավախմբի գիտական ղեկավարն սկզբում հիասթափեցնում է հյուսիսի բնակիչներին՝ նենեցներին ու ռուսներին. «Այսպիսի մեծ պետ կլինի՞, — ասում են նրանք:— Աշխատում է հասարակ նավաստու պես, իսկ տեսքով էլ հասարակ թափառաշրջիկից վատ է»: Նանսենը գտնում է, որ նրանց փաստորեն առարկել չի լինի և նույն օրերի մասին հուժկու պատմում է մեծամտության վնասների մասին իր հետ կապված մի դեպք: Հյուսիսային ծովի ափերին, երբ սպասում էին

վառելիքի լրացուցիչ պաշար բերող «Ուրանիա» նավին, հաճախ էին նավթի շարժիչ ունեցող փոքրիկ նավակով դուրս գալիս թե՛ որսորդության, թե՛ ծովում սառույցների վիճակն ուսումնասիրելու: Այդպիսի մի օր նրանց նավակն անցնում էր երկու նեմեցների մոտով, որոնք իրենց նավակը հանել էին սառույցների վրա ու պառկած դարան մտնել, սպասելով ծովաշների երևալուն: «Հետաքրքիր է, ինչ էին մտածում նրանք, տեսնելով, որ իրենց մոտով սահում ենք՝ նստած մի փոքրիկ նավակի մեջ, առանց շոգու, առանց առագաստի, առանց էակների... Իսկ մենք նավակում հարմար նստած նայում էինք այդ «խեղճ վայրենիներին» եվրոպացու ինքնագոհ խղճահարությանը»: Ահա եվրոպացին, ինքն իր աչքով՝ կողքից «ինքնագոհ խղճահարությանը»: Այս խոսքերով է, որ Ֆրիտյոֆ Նանսենը բնորոշվում է իբրև մարդկային բացասական ու դրական գծերի մեջ հմուտ կողմնորոշվող, բացասականը ճանաչող, բայց բարին պիտի բռնող անձնավորություն: «Բայց մեծամտությունը չի տանում դեպի բարին,— նշում է նա ու շարունակ:— Դեռ շատ չէինք գնացել, երբ հանկարծ՝ ոռո... Մեքենան կարելի էր կարգի բերել միայն բոլոր մասերը քանդելուց հետո»: Ահա այդ գործով զբաղված էլ տեսնում են իրենց պատկերացումներով առասպելական արշավի ակնածանքի արժանի դեկավարին տեղացի բնակիչները: «... Որքան էլ ցավալի է, իմ հռչակն ընդամենը զցեցի տեղացի ռուս և նեմեց բնակչության մեջ,— խոստովանում է Նանսենը:— ...Նրանք տեսան, թե ինչպես քրտինքի մեջ կորած ես աշխատում էի նավակը նորոգելու վրա, թևերս վեր քաշած, առանց պիջակի և բաճկոնի, մրից ու մեքենայի յուղից կեղտոտված»: Այդ պատկերն, իհարկե, մման չէր սառույցները ճեղքող նավի զորեղ կապիտանի մասին պատկերացումներին, բայց ամսաք ճակի վրա կոացած Ֆրիտյոֆ Նանսենն, անշուշտ, մտքում շատ բաներ էր ծանրութեթև անում այդ պահին: Նրան հատուկ էր նաև հուժկու արված անդրադարձը իր և ընկերների արարքներին, որով էլ առավել սիրելի ու սրտամուտ է դառնում նրա կերպարը: Սառցե անապատում Ֆրիտյոֆ Նանսենը ոչ միայն չէր կորցրել հոգու ջերմությունը, այլ նաև հուժկու գագցումը: Ծանապարհորդության ընթացքում երբեմն—երբեմն առկայծող նրա հուժկու խոստում է նրա սրտի ամափ մեծության մասին, քանի այն երբեք չի արվում ծաղրելու իմաստով, այլ ընդհակառակը՝ դեպի մարդն ունեցած սիրո մեծ զգացումով: Սեր դեպի մարդը, նրա մարդկային թուլություններով հանդերձ: Բացակայում է սնապարծությունն ընդհանրապես:

Մի հրաշալի գեղարվեստական ոճի կարճ պատմություն է 1893 թվի հոկտեմբերի 2-ի միջադեպը, երբ փաստորեն նա փրկում է ընկերներին հսկա արջի ճիրաններն ընկնելու վտանգից, սակայն սնապարծության փոխարեն ընթերցողի ուշադրությունը շեղում է բոլորովին հակառակ հու-

մորախառն ուղղությունով: Հիշյալ օրը, երբ նավասենյակ խուժող Հենրիկսենը գոչում է, թե արջը մոտենում է նավի աջ կողմի վրանին, Նանսենը, հրացանն առնելով, անմիջապես տախտակամած է վազում: Վրանում նրանց երեք ընկերներն էին: Նանսենի նկարագրությունը իբրև զվարճալի մի տեսարան է ներկայացնում վերջիններիս պահվածքը, չխորացնելով վտանգավորության աստիճանը, երբ երեքով ետուառաջ էին վազում արջի առջև: «Ես ցատկեցի սառույցին և վազեցի նրանց ընտառաջ: Ջարդվեց սառույցը, սայթաքեցի, ընկա, ոտքի ելա և նորից վազեցի առաջ: Արջը շարունակում էր հոտոտել և հավանաբար գտնելով, որ երկաթյա թիակը, սառցափորիչը, կացինը, մի քանի ցցեր, ինչպես և առագաստի կտորից վրանը չափազանց ծանրամարս կեր են նույնիսկ արջային ստամոքսի համար, հաղթական քայլերով գնաց, որ հասնի փախչողներին: Հանկարծ նա նկատեց ինձ և շվարած կանգնեց, կարծես մտածելով՝ «Էս ճիճուն որտեղի՞ց բուսեց»: Ես նրան մոտեցա կրակոցի հեռավորության չափ...»:

Ֆրիտյոֆ Նանսենի պատմողական կարճառոտ ոճում ասելիքը մշտապես ամբողջական է: Սակայն ուրիշ է, երբ խոսքը վերաբերում է նրա խոհերին ու մտորումներին առավել վերանցողական, իր համար դեռևս զարմանալի, գաղտնիքներով լի մարդ-բնություն հարաբերություններին, կյանքի ու մահվան համադրումներին և այլն: Այնուամենայնիվ, այստեղ նանսենյան հոգեբանությունը հեռու չի գնում նրա լայնախոհության, մարդասիրության, ազնվաբարո պահվածքի շրջանակներից:

Մարդկության պատմության մեջ մարդասիրության այնպիսի օրինակ, ինչպիսին Ֆրիտյոֆ Նանսենի մոտ է, քիչ կարելի է հանդիպել: Սակայն այն, թե երբվանից էր նա հոգեբանորեն արդեն ամբողջովին պատրաստ մարդկային արարքների, այդ մասին եղած արմատները պետք է փնտրել նրա կենսագրության առավել վաղ տարիներին վերաբերող էջերում, նրա և ժամանակակիցների հուշերում, նրան մկիրված առանձին այլ գրքերում: Սակայն այն, ինչ վերաբերում է «Ֆրամ»-ին, այդ խնդիրը պարզաբանելու համար այստեղ կա հոկտեմբերի 11-ի օրագրային գրառումը: Այս գրառումը նախ առօրյայի նկարագրություն է, որտեղից երևում է, թե որքան մեծ դժվարությունների հետ էր կապված շների խնամքը, որոնք պահվում էին շնասահակներին իբրև լծկաններ օգտագործելու համար: Երկար ժամանակ անգործության մատնված շներն սկսում են «իրար ուտել»: «...Օր չի անցնում առանց զգվոտոցի... Այդ շները ոչ մի նշույլ ազնվություն չունեն. բավական է երկուսը կովի բռնվեն, մնացածները գիշատիչ գազանների մման նետվում են թույլի վրա: Այնուամենայնիվ, մի՞թե սա բնության օրենքը չէ՞ պայքարում օգնել ուժեղին և ոչ թե



թույլին: Գուցե մենք՝ մարդիկս եմք բնությունը գլխավայր շուռ տալիս՝ պաշտպանելով ու աջակցելով հենց բոլոր թույլերին»:

Նախ ի՞նչ են պատմում Ֆրիտյոֆ Նանսենին վերաբերող կենսագրականներին, նրա նախնիների մասին: Այստեղ են նրա էության և բնավորության շատ գծերի արմատները:

Ֆրիտյոֆի նախնիները դանիացիներ էին, որոնց մեջ հատկապես հիշատակության արժանի է Հանս Նանսենը: Նա ապրել և գործել էր Ֆրիտյոֆից գրեթե երեք հարյուր տարի առաջ: Դեռ 16-ամյա Հանսը մավով ճանապարհորդում է Ռուսաստանի հյուսիսում: Կոլա թերակղզում ձմեռելու ընթացքում սովորում է ռուսերեն լեզուն: 21-ամյա Հանսն արդեն արշավախումբ էր գլխավորում Պեչորայում: Ռուսական ցարի առաջարկով նա ուսումնասիրում է Սպիտակ ծովի առափնյա որոշ մասեր: Այնուհետև 18 տարի շարունակ լողում էր ծովի վրա իսլանդական մավերով: Հանս Նանսենի գրառումները լույս են տեսնում 1633-ին: Դրանք հետաքրքիր դիտողություններ, դատողություններ և խոհեր են երկնքի ու երկնային մարմինների, աստղերի մասին: Հանս Նանսենի գիտագեղարվեստական գրիչը տեղեկություններ է հաղորդել նաև որոշ պետությունների ու նրանց մայրաքաղաքների, ծովերի ու բևեռային երկրների մասին: Հանս Նանսենն այնուհետև զբաղեցրել է Կոպենհագենի առաջին քաղաքագլխի պաշտոնը: Նա հրաշալի ձևով է կազմակերպել հայրենի երկրի մայրաքաղաքի պաշտպանությունը շվեդական բանակից: «Ես,— ասում է հետագայում Ֆրիտյոֆ Նանսենը,— հպարտ եմ, որ իմ երակներում հոսում է այն մարդու արյունը, որը դժվարին պահին կարողացել է օգնել իր երկրին՝ պահպանելու անկախությունը»:

Միայն 18-րդ դարում Նանսենները, թողնելով Դանիան, տեղափոխվում են Նորվեգիա, ուր արդեն Ֆրիտյոֆի պապի հայրը՝ Անշեր Անսոնի Նանսենը, դատավորի պաշտոն էր ստացել: Հանս Լեյերդալ Նանսենը՝ Ֆրիտյոֆի պապը, պոետական և արտիստիկ շնորհներով օժտված անձնավորություն էր: Նրա կինն էլ բավականին զարգացած, կրթված, լեզուների և գրականության իմացությամբ օժտված սիլվեստրյան անձնավորություն էր:

Ֆրիտյոֆ Նանսենի հայրը դատապաշտպան էր: Նա ամուսնացել էր այրի Ադելաիդայի հետ, որը ծննդով կոմսուհի էր: Վերջինիս էր պատկանում Ստրուե-Ֆրոյեն կավածքը, ուր ծնվում է Ֆրիտյոֆը:

«Մորից Ֆրիտյոֆը ժառանգել էր մշտապես ազատորեն գործելու բնավորությունը, կամքի ուժը, վճռականությունը, արիությունը, սերը սպորտի նկատմամբ: Հորից սեփական ուժերի վրա հենվելու, հարազատների, գիտության ու երկրի առջև ունեցած պարտքի գիտակցումը» (Պասենցիի Վ., Ֆրիտյոֆ Նանսեն, 1987, ռուս հրատ.):

Հետաքրքրություն աշխարհի և նրանից դուրս գտնվող մթնոլորտի ու տիեզերքի մասին: Ոչ միայն հետաքրքրություն, այլև հոբբի, նախասիրություն, ճանապարհ, որ ձգվում է մագնիսի պես: Ծանոթություն ոչ միայն աշխարհի մասին եղած պատկերացումներին, այլև ջանք ու եռանդ նրա վրա ինչ-որ բան ավելացնելու համար: Իրականությունը նկարագրելու գրագիտություն, ճշմարիտ ու գեղարվեստականը վարպետորեն, իրարից զատ-զատ ներկայացնելու հմտություն: Նվիրվածություն ընկերներին, հարազատներին, հայրենիքին: Ծովագնացի խիզախություն, համարձակություն, անսահման բարություն: Այս ամենը կար Նանսենների տոհմում, երբ նրանք դեռ դանիական հողի վրա էին: Նորվեգիայի հողում ազատատենչությունը զուգակցվեց արդարության ու մարդասիրության հետ, բնության հետ կապը մեծացրեց գեղարվեստական շնորհները, վստահություն ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ, ի հայտ եկավ նպատակակետն ազատորեն հաղթահարելու բնազդը, ազնվական կեցվածքը զուգակցեց անենավերջին աշխատանքից չխորշելու բնավորությանը: Եվ շատ ու շատ ուրիշ համադրություններ ու հակադրություններ, որոնք այլք տալով առատորեն հոսում էին «Ֆրանս»-ի վրա ճանապարհորդող Ֆրիտյոֆ Նանսենի երակներով: Ամեն ինչ հասկանալի է: Պատճառաբանված է նրա յուրաքանչյուր քայլը, պահվածքը, կեցվածքը, վերաբերմունքը...

Սակայն ահա Նանսենի այն հարցադրումը, որի պատասխանը ևս թողել է գտնելու մեզ՝ ուսումնասիրելով անհատի մտավոր և հոգևոր խորխորատները: Հարցը ծնվում է այն պահին, երբ շները հոշոտում են թույլին. «...Մի՞թե սա բնության օրենքը չէ՞ պայքարում օգնել ուժեղին, և ոչ թե թույլին...»: Իսկ եթե այդպես է, ուրեմն՝ դարձյալ հակադրություն, և այն էլ՝ բնության նկատմամբ, և այն էլ թույլին օգնելու և աջակցելու ինչպիսի հսկայածավալ գործունեությամբ, որի հեղինակն ինքը՝ Ֆրիտյոֆ Նանսենն էր, երբ թողեց գիտական գործունեությունը: Ի՞նչ իմանաս, երբ Նանսենը ելույթ էր ունենում Ազգերի լիգայում ի պաշտպանություն ազգային փոքրամասնությունների, արդյոք ի՞նչ չափով էր զգում մեն-մենակ բնությունը գլխավայր շուռ տալու ծանրությունը:

Ինչևէ, Ֆրիտյոֆ Նանսենի զգայունությունը չէր խանգարում նրա մտքի ու տրամաբանության հստակությանը: Չուտ տրամաբանորեն նա կարող էր կրակել խղճալի ձևով իր աչքերի մեջ մայրող արջի և նրա քոթոնների վրա, երբ դուրս էր եկել որսի և անձնակազմը պաշարի պակասություն ուներ: Իսկ եղջերուի ո՞րսը... «... մնում էր միայն մի ելք՝ սողալ որդի՞ մնան... սողալ ցեխի՞ միջով, թե՞ ուղղակի ջրի միջով: Բայց չէ՞ որ մտե կերակուրը նավում թանկ բան է և մարդու մեջ գազանային բնազդը չափազանց ուժեղ է... Հերն էլ անհիժած հագուստի... Ես փողի վրա սողում եմ ուղ-

ղակի ջրիկ ցելիս միջով...»: Հետո բավականին տանջալից ու երկար հետապնդումից հետո ահա եղջերուն աղերսանքով նայում է որսորդին, բայց կրակոցը չի ուշանում: Սակայն ի հակադրություն այս պահերին՝ Նանսենը խղճահարվում է նայելով ցեղակիցների կողմից բզկտված շանը. «Խեղճ Բարաբասին վերջերս կծոտեցին և նա սարսափից համարյա խենթացել է. այժմ նա նստած է տախտակամածին, չհամարձակվելով իջնել սառույցի վրա, ուր ամբողջ ոհմակը գազան կտրած ուզում է նրա վրա հարձակվել: Այդ շները ոչ մի նշույլ ազնվություն չունեն...»: Այստեղ՝ շների պարագայում, իհարկե, դժվար էր ազնվություն սպասել նրանցից, բայց անգամ եթե այն իրողություն դառնար, ուրեմն կլինե՞ր բնության օրենքների ոտնահարում, պայքար բնության դեմ և կամ էլ կնշանակե՞ր իսկապես գլխիվայր շրջել բնությունը:

Բնությունը առավել խիտ է ջունգլիներում, և ջունգլիի օրենք են անվանում ուժեղի հաղթելու իրավունքը: Սակայն ջունգլիում այն բնությունն է, որը դեռևս վայրիության իր կատարելության մեջ է: Իսկ մարդն իր կատարելության մեջ այնքան է մոտ նրա բարձրակետին, որքան հեռու է վայրի բնագոյներից: Մարդու կատարելության չափանիշներից կարևորագույնը Ֆրիտյոֆ Նանսենը համարում էր ազնվությունը: Ահա թե ինչն էր մղում նրան օգնելու թույլին: Ահա թե ինչն է Նանսենին ստիպում հետագայում գնալ սովահաղները, ռազմագերիները կամ յաթաղանից մազաալուրծ գաղթականները:

Ազնիվ եվրոպացին ազնիվ էր ամեն ինչի մեջ: Այնտեղ, ուր մարդկային կրքերն ու զգացումները կարող էին խանգարել, նրա միտքն աշխատում էր հստակ ժամացույցի պես: Ահա «Ֆրամ»-ի վրա ապրած ամիսների ու տարիների մեջ ամենածանր պահը. նավն ու ընկերներին թողնելով՝ դեպի բևեռ ուղքով ճանապարհը շարունակելու որոշումը:

Նախ՝ ի՞նչ նշանակություն ուներ «Ֆրամ»-ը Ֆրիտյոֆի համար, և ովքե՞ր էին ընկերները նրա կյանքում:

Տասներեք ազնիվ, արի ու իրենց գործի մեջ հմուտ տղամարդիկ էին Նանսենի ուղեկիցները:

Նավի վրա իրենց ծառայություններն առաջարկած հարյուրավոր անձնավորություններից առաջինն ընտրվել էր Օտտո Նեյման Սվերդրուպը, իբրև նավի կապիտան: Գրենլանդական էքսպեդիցիայի ընթացքում նա Նանսենի ուղեկիցն էր, ուր վերջինիս կողմից որակվել էր «լուսկյաց նավագ» անունով:

«Սվերդրուպը հյուսիսում էր մեծացել և դահուկներին գեմքից վատ չէր տիրապետում: Կյանքը խիստ էր եղել նրա նկատմամբ՝ չքավորությունը և զրկանքները կոփել էին նրան: Լեռնային հետում որոշ ժամանակ լաստառաք աշխատելուց հետո Սվերդրուպը ծով է գնացել, ուր սկ-

սել է նավաստուց, իսկ այժմ 33 տարեկան հասակում ամենափորձառու և սառնարյուն նավապետներից էր համարվում... Սվերդրուպը հազվադեպ էր ծիծաղում, բայց ոչ մեկը նրան մոռալ չէր տեսել: Նա մշտապես խաղաղ էր, սիրալիր և, որն ավելի կարևոր էր, անհողորդ հանգիստ»,— այդպես է ներկայացնում նրան Գեորգի Կուբլիցկին «Ֆրիտյոֆ Նանսեն» վիպակում:

1888–89 թթ. Սվերդրուպն ու Նանսենը մեծ դժվարություններ էին կիսել իրար հետ գրենլանդական ճանապարհորդության ընթացքում: Մի անգամ, երբ նրանք սառցե բլրակի վրա էին քարշ տալիս ծանր սահնակը՝ լարելով իրենց վերջին ուժերը, Նանսենն այսպես է դիմում հևասպառ Սվերդրուպին.

«— Իսկ դեպի բևե՞ռ... Կարծում ես, հե՞շտ է բևեռ գնալ:

Սվերդրուպը մի հայացք գցեց նրա վրա:

— Ինչո՞ւ ես դա ասում:

Իսկ Ֆրիտյոֆը կրկին պարանն է ձգում» (Կուբլիցկի Գ., «Ֆրիտյոֆ Նանսեն», Եր., 1986):

Այս երկխոսությունը նրանց միջև առաջինն էր բևեռային ճանապարհորդության մասին, որի պլանը տարիներ հետո էլ շարունակ հանգիստ չէր տալիս Ֆրիտյոֆին: Նրան շատերն ինքնասպանության մտքով տառապող խելագար էին անվանում: Օտտո Սվերդրուպը արդեն բաջ ծանոթ էր Ֆրիտյոֆի համառությանը, կամքի ուժին, խիզախությանն ու գիտելիքներին, այնուամենայնիվ, նա ևս տեղի է տալիս: Երբ Նանսենը գրում է Սվերդրուպին Եվա Սարսի հետ իր նշանադրության մասին, Սվերդրուպի ուրախությանը չափ չկար: Եվ այն էլ ինչո՞ւ. «Չէ՞ որ հիմա Հյուսիսային բևեռը գրողի ծոցը կգնա»,— պատասխանում է նա Նանսենին իբրև շնորհավորանք:

Բայց Նանսենի պրպտուն համառությունն էլ հենց հիացմունք էր պատճառում Սվերդրուպին, և նա առաջինն է ենթարկվում բժշկական և այլ գնությունների՝ ընտրվելով իբրև կապիտան առասպելական նավի համար:

Ի տարբերություն Նանսենի, Օտտո Սվերդրուպը համառորեն հանդարտ էր: «Որքան էլ շուրջը մռայլ էր ու ամայի – եթե միայն ծովափին կա բավականաչափ վառելիք՝ փայտի խարույկ սարքելու համար, իսկ որքան շատ, այնքան լավ,— Սվերդրուպի աչքերը փայլում էին, կարծես ընկած լինե՞ր ավետյաց երկիր»,— գրում է ծովային ընկերոջ մասին Ֆրիտյոֆը, երբ «Ֆրամ»-ը դեռևս ասիական տունդրաների արևին էր և երկուսով նավակով դուրս էին գալիս ուսումնասիրելու Կարայի ծովի սառցաջրերի մեջ գտնվող անցուղիները:

Մակայն օրերն ահա ամիսներ ու տարիներ էին դարձել, և ծովափնյա խարույկները չափազանց էին ետևում մնացել: Երևում էր անցած հսկայական ճանապարհը, երբեմն երկարատև խավարի միջով, երբեմն՝ հյուսիսափայլի լույսի տակ, երբեմն կալանվելով սառցասեղմունների մեջ, երբեմն՝ սառցագրոհների տակ: Անցել էին վտանգի ու սառնամանիքի միջով, խույս տալով ահագոյն ցինգայից: Ետևում բավականին երկար անցած ճանապարհ էր, իսկ առջևում՝ սառցային ծածկույթ, որը կարելի էր անցնել միայն ոտքով, ոտքով, շնասահնակների օգնությամբ: Որևէ տեսակի բարդության պատրվակ այլևս լինել չէր կարող: Վճռված էր շարունակել ճանապարհը դեպի բևեռ: Անձնակազմը համաձայն է, հաշվարկներն արված են, նախապատրաստական աշխատանքները սկսված են: Բայց մտքերը դեռևս հանգիստ չեն տալիս արշավախմբի ղեկավարին: Ճի՞շտ է արդյոք ճանապարհի կեսին բաժանվել և լքել նրանց, ում համար պատասխանատվություն է վերցրել մինչև ծով դուրս գալը: Մակայն այստեղ կա նաև պատասխանատվությունը նորվեգ ժողովրդի առաջ, որն իր գումարներն է ծախսել գիտական հայտնագործությունների համար: «... Անկասկած է, որ այն դիտումները, որ կատարելու ենք ավելի հյուսիսային լայնություններում, իրենց արժեքավորությամբ մեծ չափով կզերազանցեն այն դիտումները, որ ես կարող էի կատարել մնալով նավակում»,— ահա հերթական մտորումներից մեկը, որը նաև որոշիչ ու վճռական էր: Իրար ետևից վճռվում են նաև այլ հարցեր, որոնք շրջանցել չէր կարելի: Կազմակերպված գիտնական ու ճանապարհորդ եվրոպացին իբրև արշավախմբի ղեկավար մասատմաս սաքրում է բոլոր խնդիրների ճանապարհները: «Իրավունք ունե՞մ արդյոք նավը և նրանց, ովքեր մնալու են այստեղ, զրկել այն հանդերձանքից, որ պահանջվում է սահնակային էքսպեդիցիայի համար»,— ահա անհանգստացնող խնդիրներից մեկը: Բայց ինքն իրեն տված պատասխանը համոզիչ է և պատճառաբանված: Հաշվի է առնված նավի վրա թողնված մթերապաշարը, հագուստը, նախազգուշական բոլոր միջոցները: Եթե նավի հետ դժբախտություն պատահի, անձնակազմը կկարողանա հասնել Ֆրանց-Իոսիֆի երկիր կամ Շպիցբերգեն: Ամենադժվար խնդիրն այն էր, թե ովքեր էին այն երկուսը, որ թողնելու էին նավը: Ֆրիտյոֆ Նանսենի օրագրային գրառումների այն մասը, որ վերաբերում է արշավի երկրորդ՝ սահնակային մասին, գրված է այնպիսի հաշվեկատությամբ, որ կարողանա ոչ միայն պատասխանել աննախադեպ բոլոր իրադրություններից ծնված հետագա հարցերին, այլև Նանսենի մտորումները փորձում էին ճշգրիտ քայլերով ապահովագրել սեփական խղճի մաքրությունը: Իսկ այն, թե ով կգա իր հետ առավել վտանգելու կյանքը, չափազանց ծանր

մտորումների տեղիք է տալիս: «Սվերդրուպը և ես. մենք երկուսս էլ արդեն միմյանց փորձել ենք մման ճանապարհորդության մեջ և, իհարկե, ի վիճակի կլինենք այդ գործը գլուխ բերել, բայց և մեզնից մեկը պետք է մնա, որպեսզի իր վրա պատասխանատվություն վերցնի մնացած մարդկանց բարեհաջող տուն հասցնելու համար»,— որքան էլ մեծ էր ցանկությունը նավը թողնել Սվերդրուպին, այնքան արդար տրամաբանությունը հակառակ էր դրան: Իսկ ո՞վ պետք է գլխավորի սահնակային էքսպեդիցիան: «Սվերդրուպը ուրախությամբ կգնար,— ընկերոջ վրա մեծ վստահություն ունենալով՝ նշում է Նանսենը:— Բայց ես գիտեմ, որ մեծ վտանգ է սպառնում նրան, ով թողնում է «Ֆրան»-ը, այլ ոչ նրան, ով մնում է»: Ազնվագույն դաստիարակությունը, որով սնվել էր Նանսենը, զագաթնակետային դրսևորման մեջ է իբրև արշավախմբի ղեկավարի որոշումների աղբյուր: «Եթե ես բաց թողնեմ Սվերդրուպին,— մտորում է նա,— դրանով նրա վրա ավելի վտանգավոր խնդիր եմ դնում, իսկ ավելի թեթև թողնում եմ ինձ: Եթե նա զոհվի, մի՞թե ես երբևէ ինձ կներեմ, որ թույլ տվեցի նրան գնալ...»: Այս հաշվարկները, այնուամենայնիվ, անհրաժեշտ է դիտարկել անձնակազմի մյուս անդամների տեսանկյունից. «Մեր երկուսից ո՞ր մեկի հետ կնախընտրեն մնալ: Ինձ թվում է՝ նրանք հավասարապես վստահում են երկուսիս էլ: Բայց և այնպես, Սվերդրուպի մասնագիտությունն է նավ վարելը, մինչդեռ ինձ վրա ընկած են գիտական դիտումները: ...Իմ պարսաքն է գնալ, Սվերդրուպինը՝ մնալ...»:

Ընկերների հետ ունեցած հարաբերություններում Ֆրիտյոֆ Նանսենը չափազանց մարդկային ու զգացմունքային էր: Մահնակային ճանապարհի համար իբրև ընկեր նա վերջապես ընտրում է Իոհանսենին: Պահեստային լեյտենանտ, ռազմական ուսումնարանի սան Ֆրեդերիկ Իոհանսենը ընդգրկվել էր «Ֆրան»-ի անձնակազմի մեջ միայն այն բանի համար, որ չափազանց մեծ ու ջերմ էր նրա ցանկությունը: Եվ քանի որ ուրիշ ազատ պաշտոն չկար, նա ընդունվեց իբրև «հնոցավար», բայց ծամանակի մեծ մասն անց էր կացնում իբրև օդերևութաբանական դիտումների ընթերակա: Երբ երկու տարի արդեն նա Նանսենի ուղեկիցն էր, վերջինս իրեն հատուկ զսպվածությամբ այսպես է խոսում նրա մասին. «Հիանալի դահուկավար է, տոկունությամբ իրեն հավասարը չունի, և դրա հետ միասին սքանչելի տղա է»: Ինչի շնորհիվ էր Իոհանսենն արժանացել «սքանչելի տղա» որակումին, կարելի է, իհարկե, ենթադրել: Բայց որ Ֆրիտյոֆ Նանսենի կողմից ճանապարհորդին տրվող գնահատականի մեջ կարևոր է նաև այն, որ նա լինի բացսիրտ, ազնիվ, ընկերասեր և անխարդախ ամեն ինչում, անդավաճան իր մարդկային կերպարին, ու Իոհանսենը հենց այդպիսին է, դա արդեն շատ կարևոր է բևեռա-

յին անմարդաբնակ ու վտանգավոր տարածությունները երկուսով ուսումնասիրելու համար: Իռհանսենը մեծ պատիվ է համարում այն, որ Նանսենի ընտրությունն իր վրա է կանգ առել: Չնայած որ բոլորն արժանի էին նման «պատվի», բայց նա՛վի վրա յուրաքանչյուրն իր գործն ավելի լավ կարող էր անել: Այդպես էր գտնում արշավախմբի ղեկավարը: Միևնույն ժամանակ նա կրկին ու կրկին ուզում է, որ ամեն ինչ արդարորեն լինի և հարցը վճռվի կողմերի լիակատար համաձայնությամբ.

«— Բայց դուք հիմնավոր մտածե՞լ եք արդյոք, որ մեզինք ոչ մեկն այլևս մարդու չի տեսնի, և նույնիսկ այն դեպքում, եթե գործն այնքան էլ վատ ընթացք չստանա, նման ճանապարհորդության մեջ հարկ է լինում բազմաթիվ զրկանքներ կրելու...

— Այո, այդ ամենի մասին խորհել եմ:

— Շատ լավ, ուրեմն հարցը վճռված է: Վաղը մենք կսկսենք արշավի նախապատրաստությունը: Թող Սկոտ—Հանսենը իրեն նոր օգնական որոնի՝ օղերևութաբանական դիտումների համար»:

Դեպի ավելի հյուսիս շնասահնակներով արշավի ծրագիրն ու նպատակը հավանության է արժանանում «Ֆրամ»-ի ողջ անձնակազմի կողմից:

«Առարկությունը, եթե նրանց հետ բանավեճի մեջ մտնեի,— նշում է Նանսենը,— կարծում եմ կլինեի այն, որ նրանք չեն կարող ինձ հետ գալ»: Ֆրիտյոֆ Նուսենը գիտեր արժևորել անձնակազմի անդամներից յուրաքանչյուրին, գնահատելով ոգևորել նրանց: «Հնարավորին չափ ավելի հյուսիս թափանցելը, անկասկած, հրապուրիչ խնդիր է,— այսպես է բացատրում նա,— բայց ոչ պակաս կարևոր է «Ֆրամ»-ը անվնաս տանել Բենեային ծովով և դուրս գալ նրա մյուս կողմը, կամ եթե չհաջողվի դուրս բերել «Ֆրամ»-ը, ապա ծայրահեղ դեպքում ինքներդ կվերադառնաք անվնաս՝ ոչ մի կորուստ չտալով: Եթե այդ բանը կատարվի, մենք, անկասկած, կարող ենք մեր էքսպեդիցիան համարել հաջողված»: Նանսենը մեծ նշանակություն էր տալիս ընդհանուրի միահամուռ համաձայնությանը, և երբ բոլորն արդեն հավատում էին նրա ճշմարտությանը, սկսվեց նոր ճանապարհի նախապատրաստությունը:

Ֆրիտյոֆ Նանսենը չափազանց մեծ հավատ ուներ մարդկային ուժի, մարդու նկատմամբ՝ ընդհանրապես: Այդ էր ներշնչում նրան հենց այն բնությունը, որի հետ պայքարի մեջ էր մտնում նա: Պայքարի մեջ կոփվում էր կամքը, հզորանում էր ոգին: Բնությունը համադրվում է ոչ միայն մարդկային բնավորությունների, այլև հիշեցնում է առանձին ժողովուրդների գոյաձևերը: «Կայծակնափայլ ճառագայթների խաղը երկնքում, իր անդորրությամբ ճնշող բնության մեջ, սառցակալած ցրտի

մեջ, միթե չի հիշեցնում մեր նորվեգական պարերն իրենց անգուսպ ցատկումներով, լեռնային վայրի մեղեդիների բարձրաձայն դալայլներով»,— գրում է նա, ապա շարունակում նաև չափավորելով իր այն մտքերը, որոնք վերաբերում են սառցային կաշկանդումների միջից դուրս ժայթքող մարդկային «կիզի» ձգտումներին:

*«Ահա և եկավ 1985 թիվը.*

*Բախտ, շրջի՛ր անիվդ, մի՛ խանգարիր մեզ,*

*Ինչ էլ որ տաս մեզ, մենք գոհ կլինենք,*

*Լինի անձրև թե քամի կամ արև,*

*Չվարթ դենք ցույց տաս թե թշնամաբար*

*Սպառնաս վատ բան՝ դա մեզ հոգ չէ,*

*Մարդը միշտ ինքն է իր բախտը կռում»:*

Այսպես է ոգևորում Ֆրիտյոֆ Նանսենն իր ընկերներին 1895 թվի Նոր տարվա առաջին օրը:

Հյուսիսային լայնություններում սառցե հսկա զանգվածների հետ պայքարի ընթացքում ասես վերակենդանանում էին հին սագաներն ու առասպելները, Տորի կոփվը Իոտունիեյն տիրակալի հետ, երբ փլուզվում էին ժայռերն ու լեռնագագաթները: Սառցե բլուրները բաժնուրդ տղաները Ֆրիտյոֆի աչքին պատկերանում էին մրջյունների պես: «Բայց մրջյունները,— գրում է նա,— թեկուզ քարշ են տալիս միայն մեկական հատիկ փշատերև, սակայն ժամանակի ընթացքում կանգնեցնում են մրջմաբույն, ուր ապրում են փոթորիկներից պաշտպանված, տաքության ու հարմարավետության մեջ»: Նանսենն ինքը անընդհատ լցնում է անձնակազմի հույսի ու ոգևորության բաժակը, և երբ արդեն այն բավականին լիքն էր, համոզվում է, որ կարող է լքել նավը: Նոր արշավի նախապատրաստության վերջին օրերին նա չի մոռանում նախկին արշավախմբի ղեկավարների թողած հաշվետվությունների ու նկարագրությունների հետ թերթել նաև մարդու կոչմանը վերաբերող փիլիսոփայական երկերը, կամ մտաբերել հատվածներ դրանցից: Այո՛, «Ֆրամ»-ը հաշվարկված էր ամեն ինչի համար: Այժմ, երբ արշավի հնարավոր տապալման մասին մոռալ մտքեր են փորձում մերթափանցել ուղեղովս ներս, Նանսենը մտաբերում է անզլիացի ականավոր գրող, փիլիսոփա Թոմաս Կարլեյի խոսքերը. «Մարդը կարող է և պետք է խիզախ լինի, նա պետք է միշտ առաջ ընթանա ու գործի որպես մի տղամարդ, որն անսասան հավատում է իր կոչմանը և իր դերին»:

Ահա այս ոգևորությամբ է բեռնախույզն իր ետևից այրում բոլոր «կամուրջները կամ նավերը»: «Եթե մենք ուզենանք ետ վերադառնալ,— մեկ անգամ ևս մի՛ իորձում է իր վճռականությունը,— մեր ետևում ոչինչ

մնացած չի լինի, նույնիսկ ամայի մի ափ, դեպի ուր կարողանանք ուղղվել: Նավը նորից գտնել հնարավոր չէ, իսկ առջևում մեծ անհայտություն է: Մեզ համար կա միակ մեկ ճանապարհ՝ դեպի առաջ...»:

«Ֆրամ»-ի անձնակազմը մեկ մարդու նման հավատում էր իրենց ղեկավարին: Նանսենը բանձրիցս համոզվել էր դրանում, երբ դեռ երկրորդ շնասահնակներով արշավը միայն իր մտորումների մեջ էր: Դեռ սեպտեմբերին նավի երկրորդ մեխանիկ Լարս Պետերսենը, որ երբեմն փոխարինում էր խոհարարին, մոտենալով Նանսենին՝ ահա թե ինչ է ասում.

— Երազումս տեսա, որ դու կտոր Նանսենը սառույցի վրայով ուղևորվում է դեպի քեռ՝ չորս մարդու հետ, ես խնդրեցի, որ ինձ էլ ձեռք հետ վերցնեք, բայց դուք ասացիք, որ այդ էքսպեդիցիայում խոհարար հարկավոր չէ: ...Տեսա, որ դուք վճռել եք նավին հանդիպել մի այլ տեղ, ուր նա սպասելու է ձեզ, կամ թե մտադիր չեք ընդհանրապես վերադառնալու, որ իբր բոլարովին մի այլ ցամաք եք գնում: Մարդ կարո՞ղ է այդպիսի անմիտ բան երազում տեսնել...

Ահա այստեղ Նանսենը խոստովանում է, որ հնարավոր է այդպիսի արշավի կազմակերպումը: Պետերսենն, իհարկե, շատ է խնդրում, որ նման դեպքում ղեկավարն իրեն էլ վերցնի: Իսկ երբ լսում է Նանսենի բացատրությունները, թե որքան դժվար կարող է լինել նման ճանապարհը, Պետերսենի պատասխանն այսպիսին է լինում. «...Դժբախտություն չէ, որ դժվարություններ են լինելու. միայն թե ձեզ հետ լինեն»:

Ֆրիտյոֆ Նանսենը անձնակազմին վստահություն էր ներշնչում ոչ միայն որպես գիտնական ու ղեկավար: Նրա հետ մարդիկ ոչ միայն ասպահովվածության զգացումի մեջ էին, այլև նրանց համար հաճելի էր կողքին նման ընկեր ունենալը: Իսկ վերջինս զարմանում էր, թե «ինչպես են այդ մարդիկ կուրորեն հավատում իրենց առաջնորդին»: «Լավ է այդպիսի մեծ հավատ ներշնչելը, — մտածում էր նա, — բայց Աստված մի արասցե, եթե այդ հավատը խախտվի»: Հավասարակշռված կազմակերպիչն ու մարդը արշավից արշավ ընկած օրերի ընթացքում, բնական է, որ աշխատելու էր չկորցնել ընկերների հավատն իր նկատմամբ: Թեպետև նա դրա կարիքն էլ չուներ: Անձնակազմը գործում էր մեկ հոգու ու մեկ սրտի նման: Նրանց պարզ ու ազնիվ ոգու հետ ճակատագրին անզամ հաճելի էր գործ ունենալ, որն էլ նրանց ասես թե իսկապես տեսնում էր ընդհանրության մեջ: Այլապես երկրորդ գիտական արշավից ամիսներ առաջ մեխանիկ ու խոհարար Պետերսենին որտեղի՞ց այն երազը, որն իրականություն դառնալու համար դեռ շատ ճանապարհ ուներ անցնելու:

Ընդհանուր գործի մեջ բոլորին ներգրավելու նանսենյան հմտությանն ու կազմակերպվածությանը հրաշալի օրինակ դարձավ սահնակային ճամփորդության նախապատրաստությունը: Ամեն ինչ հաշվարկ-

ված էր բավականին երկար, ծանրութեթև անելուց հետո: Անկախ այն բանից, դա իրենց՝ երկուսի սննդամթերքին էր վերաբերում, թե շների, իրենց հագուստին, թե շների: Զնապարկերը, սահնակները, սահաձողերը, դեղորայքով դեղարկողը և այլն, ամեն ինչ՝ ճիշտ հաշվարկված քանակով ու որակով: Անզամ բարակ թղթի վրա շատ սեղմ ձևով օրագրերից ու գիտական հաշվետվություններից գրառումներ էին արել, քանի որ չգիտես, թե հատկապես ինչը նկատի ունենալով էր արշավախմբի ղեկավարը որոշել դրանք ունենալ իր հետ:

Մանրակրկիտ հաշվարկները հասցնում են այնտեղ, որ արշավին անհրաժեշտ 50 օրվա համար հարկ կլինի տանել 28 շուն և 1050 կգ սնունդ ու հանդերձանք: Հաշվարկն ու տրամաբանությունը լավագույն ելքը համարում է այն, որ «ստիպված կլինենք աստիճանաբար շներին սպանել՝ մնացածին կերակրելու համար... Ենթադրում են, որ մեր վերադարձի քառասունմեկ օրվա ընթացքում սպանած կլինենք քսաներեք շուն, և մեզ մոտ դեռ կմնա հինգ շուն»:

Հաշվարկն արված էր գուցե թե նախկին բևեռախույզների փորձի և կամ սեփական տրամաբանության հիման վրա, սակայն արդյո՞ք սառը դատողության հաշվարկների հետ այդքան հեշտ էր հաշտվում մարդկային հոգին:

Քսաներեք շներից յուրաքանչյուրն ուներ իր անունը, բանվորության առանձնահատկությունը, ուժի չափը և այլն, որոնց շնորհիվ էլ ունեին իրենց կապվածությունը տերերի՝ թե՛ Իոհանսենի, թե՛ Նանսենի հետ: Դեպի հյուսիս փոքր խմբով ճանապարհին, կամ Նանսենի որակումով «տառապանքի ճամբարում», ուր շարժվելու հնարավորությունը շատ քիչ էր, երկու ճանապարհորդները հաճախ իրենք ևս լծվել էին սահնակներին և քաշում էին շների հետ կողք կողքի: Քնի մեջ անզամ նրանց հանգիստ չէր թողնում սահնակներն առաջ մղելու աշխատանքի կարևորության զգացումը, և քնապարկերի միջից էլ լսվում էր նրանց կանչերը՝ «դեպի հյուսիս, դեպի հյուսիս»: «Ինձ հաճախ էր արթնացնում Իոհանսենի բացականչությունը, — վերհիշում է Նանսենը, — որ քնի մեջ բղավում էր. «Պան: Բարաբաս», «Ֆշշան օձ: Շարժվե՛ք, սատանաներ...»: Իսկ շները քնում էին հենց վրանի առջև, և ո՞վ գիտի քանի անգամ են վեր թռել ու զարմացել տերերի անհարկի բացականչություններից: Այնպես որ, երբ ստիպված էին ոչնչացնել առաջին շանն իբրև կերակուր մյուսների համար, նրանք՝ տերերը, հագիվ էին կարողանում ջանք թափել սառը տրամաբանության մեջ մնալու համար: Այնուամենայնիվ, ամեն ինչ տեղին պլանի վրա էր, քանի որ կար առաջնային նպատակը՝ առաջ ընթանալ:

«Շատ ցավալի է, որ այդպիսի ճանապարհորդությունների ժամանակ քո մեջ մեռցնում ես մարդկային լավագույն զգացմունքները,— գրում է Նանսենը:— Երբ մտածում ես այդ հիանալի կենդանիների մասին, որոնք հավատարիմ ու անտրտունջ ծառայում են քեզ որքան ուժ ունեն ի հատուցումն դրա չստանալով ոչ պարզև, ոչ փաղաքշանք, հազվադեպ նույնիսկ մի բարի խոսք... երբ վերհիշում ես, թե ինչպես նրանք հրաժեշտ էին տալիս կյանքին այնտեղ՝ հյուսիսում, սառցային անապատի մեջ, դառնալով վկա նրանց հավատարիմ ծառայության և նվիրվածության՝ ակամայից դառնորեն խղճի խայթ ես զգում»:

Շների հետ կատարած ճանապարհորդությունն ինքնին այդ կենդանիների վարքի, մարդկանց հետ ունեցած նրանց կապի ուսումնասիրության մի յուրատեսակ աղբյուր է, չնայած նրան, որ կարևորագույն աղբյուր է նաև մարդկային մտքի և հոգու, դատողության և զգացմունքների փոխկապակցվածության մասին: Իսկ այն, որ այստեղ չափազանց ցայտուն է «նանսենյան հոգեբանություն» արտահայտությունը, հիմք է տալիս այդ որակում ընդունելու համար մարդկային այն դրսևորումը, երբ զգացմունքները տեղի են տալիս հանուն առավել կարևոր խնդիրների:

«Երեկ գիշերվա ժամը մեկին՝ նախքան մեր ճանապարհվելը, Բարոն, որին դեռ չէիք հասցրել լծել, փախավ: Տեսնելով, որ մյուս շներին լծում են, նա հասկացավ, թե բանն ինչու է: Ես չէի ուզում կորցնել բոլոր լծկաններից լավագույնին, և Բարոնի փախուստը մեզ խիստ կասեցրեց: Նախ, որքան ուժ ունեի՝ կանչում էի նրան: Հետո բարձրացա սառցակարկառի վրա, բայց այնտեղից տեսա միայն սառցազանգվածների շղթաներ...»: Այսպիսին է երեքշաբթի, ապրիլի 16-ի գրառումը, որից հետո պարզվում է, թե ինչպես, երբ փորձում են հեռանալ, Բարոն հանկարծ դուրս է գալիս հեռվից և վազում խմբի ետևից: «Իսկ ես արդեն հույսս կտրել էի, որ երբևէ կտեսնեմ նրա փառահեղ դունչը,— շարունակում է պատմել Նանսենը:— Հիմա նա, ըստ երևույթին, ամաչում է. նա հասավ մեզ, կանգ առավ և աղերսագին աչքերով նայելով ինձ՝ հանգիստ կանգնեց, որ լծենք: Ես ուզում էի նրան ծեծել, բայց նրա աչքերն ինձ զինաթափ արին»: Ուղիղ մեկ ամիս հետո օրագրային գրառման մեջ Նանսենն ասես խուսափում էր ավելորդ զգացմունքայնությունից. «Երեկ վերջ տրվեց իմ լծկանների ավագ Բարոնին: Նա այլևս չկարողացավ առաջ գնալ, և երեկոյան ստիպված եղանք սպանել այդ դժբախտին: Նա ազնվաբար աշխատեց մինչև իր կյանքի վերջին օրը»:

Հյուսված շների մտով մյուսներին կերակրելու իրողության մեջ կա այն պահը, ըստ որի՝ Նանսենն ընդհանրապես արդարացնում է թույլերի գոհաբերման խնդիրը, բայց, իհարկե, ոչ ըստ գայլային կամ ջունգլիի

օրենքի: Այդտեղ հանուն նպատակի մինչև վերջին ուժերը գնալու և հանուն այդ նպատակի գոհաբերվելու խնդիրն է: Իսկ այն, ինչ վերաբերում է շների սպանության հետ կապված իրողությանը. «ընդհանրապես դա շատ տհաճ գործողություն է, բայց ի՞նչ արած...»,— գրում է Նանսենը. — հատկապես սոսկալի է վերջին հարվածը հասցնելը... Երեկ վճռեցինք փորձել օղակով: Դա ավելի վատ ստացվեց: Սովորաբար մենք շանը տանում էինք սառցակարկառի ետևը, որպեսզի մյուս շներից թաքցնենք այդ գործողությունը»: Սակայն ասիա Պերեպետուումի սպանությունն այդ ձևով գլուխ չի գալիս:

«...օղակը անցկացրինք շան վզից և ծայրերից յուրաքանչյուրս ձգեցինք դեպի մեզ... Ի վերջո, մենք բոլորովին ուժասպառվեցինք, մեր ձեռքերը թմրել էին ցրտից. ոչինչ անել չէր կարելի. ստիպված էինք մորթել: Որքան զզվելի բան է դա...»: Գնդակահարությունն իհարկե միանգամից վերջ կտար կենդանու կյանքին, սակայն այստեղ ևս կար գուտ թանկարժեք համարվող վերջին փամփուշտներից չզրկվելու ստիպողականությունը: Բայց շունը խեղդամահ անելն էլ անավոր ապրումների տեսիլք էր տալիս, քանի որ «մեր ձեռքերը թմրել էին ցրտից». — ինչպես վկայում է Նանսենը: Մենք իրավունք չունենք կասկածելու իր արդարամտությամբ և ճշմարտախոսությամբ հայտնի Ֆրիտյոֆ Նանսենին, սակայն արդյո՞ք օղակի ծայրերից քաշող նրանց ձեռքերի թուլության պատճառը միայն ցուրտն էր: Ավելի ուշ, երբ շների սպանությունը դառնում է Իոհանսենի «մասնագիտությունը», Նանսենը մանկան անմիջականությամբ հպարտանում է դրանով. «Նա հասավ այնպիսի կատարելության, որ անասունին սպանում է մեկից՝ իմ ֆիննական երկար դանակի մեկ հարվածով. շունը չի հասցնում նույնիսկ մի ծպտում հանել»:

Ծպտում չհանող յուրաքանչյուր շան մասին, այնուամենայնիվ, Նանսենը թողնում է նրա հիշատակի գիրը այնպես, ինչպես դա կարելի էր անել իր գործին հավատարմորեն ծառայած մարդկային ցեղի յուրաքանչյուր նվիրյալի համար: Ահա Դեղնուկի համար գրված օրագրային հիշատակի գիրը. «...Նա Արկտիկայի իսկական զավակն է, ծնվել է «Ֆրամ»-ի վրա 1893 թ. դեկտեմբերի 13-ին, և նրան չվիճակվեց ոչինչ տեսնել, բացի սառույցից ու ձնից: Բարի, հավատարիմ շուն»:

1895 թ. «տառապանքի ճամբարում» որակում ունեցող ժամանակն անցավ դժվարություններին համառորեն դիմագրավելու անհողորդությամբ, գիտական և հոգեբանական նոր հայտնագործությունների շղթաների միջով: Այժմ, երբ կայակները պատրաստվում են դեպի ցամաք ծովային ճամփորդության համար, ստիպված էին հրաժարվել վերջին երկու շներից, քանի որ չէր կարելի շատ ծանրաբեռնել փոքրիկ նավակների նեղ տախտակամածը: Դժվար է, իհարկե, անգամ

պատկերացնել նրանցից բաժանման այն պահի զգացումները, որ ապրվել էին՝ հինք դառնալով Նանսենի «Չափազանց ծանր էր լքել շներին...» գրառման համար: «Մենք անգոր էինք նրանց մորթել մյուսների նման, — խոստովանում է Նանսենը, — և յուրաքանչյուրի համար գոհաբերեցինք մեկական փամփուշտ: Իոհանսենը անցավ սառցակարկառի ետևը և զնդակահարեց իմ շանը, իսկ ես՝ Իոհանսենի շանը: Դա մեր երկուսի համար էլ ծանր էր»:

Ֆրիտյոֆ Նանսենը չէր տրվում զգացմունքայնությանը՝ ասես խուսափելով երկրի վրա որևէ բանի հետ խոր կապվածություն ստեղծելուց: Ինչպես մանկան ուշադրությունն են շեղում, նրա թախիծը կամ տխրությունը փարատելու համար, այդպես էլ հենց ինքը կարողանում է շեղել իր ուշադրությունը, երբ զգում է զգացմունքների վտանգավորությունը: Այդպես է եղել ամեն պարագայում, երբ նա սառցե ամայության մեջ տարվել է սեփական կանաչախիտ դաստակերտի մասին վերհուշեցնելով, երբ մտաբերել է նրան՝ Եվային, փոքրիկ Լիվին, որին տանն է բողել, երբ ընդամենը մի քանի ամսական էր, երբ զնացել է իրականության հետ մրցող վերացական խոհերի ետևից, տիեզերքի հզորությունը համեմատել մարդկային կյանքի ունայնության հետ: Ամեն դեպքում Ֆրիտյոֆ Նանսենը կարողացել է խուսանալով զգացմունքային թուլություններից շնորհիվ իր մեծ գաղափարների, որոնք կազմված են եղել Լայրենի երկրի ու ժողովրդի, ընդհանրապես մոլորակի ու մարդ արարածի գոյությունը քաղաքակիրթ ու անկաշկանդ պահելու նվիրումներ պարունակող պահերից:

Այդպես նա բաժանվեց «Ֆրամ»-ից ու ընկերներից, առավելագույն հյուսիսում առավելագույն հետազոտություններ կատարելու համար: Եվ երբ «Ֆրամ»-ի նոր ղեկավարը՝ Օտտո Սվերդրուպը, խոստովանում է, թե «մեզնից ոչ մեկը լուրջ կերպով չէր անհանգստանում Նանսենի և Իոհանսենի մասին՝ որքան էլ վտանգավոր լիներ նրանց ճանապարհը», յրաճուճ հայտնում է իրենց համոզմունքը և վկայությունն այն բանի, որ, իսկապես, սահնակներով ճանապարհորդության ընթացքում Նանսենն իր հետ ուներ դժվարությունների հետ մարտի մեջ մտնելու հզոր մի ներուժ՝ կապված նպատակն իբրև միակ ճշմարտություն ընդունելու գաղափարի հետ:

Նանսենյան ընկերասիրությունը զգայացունց կարող էր լինել ուրիշ պարագայում: Իսկ այժմ, երբ նավի հրամանատարությունը նրա անձնակազմի իր լավագույն ընկերների հետ հանձնում է Օտտո Սվերդրուպին, որի հետ արդեն կապված էր առավել քան հարազատորեն, նա աշխատում է իրեն պահել զուտ պաշտոնական մակարդակի վրա: Որքանով էլ դա հաջողվում Ֆրիտյոֆ Նանսենին, այդ մասին է

խոսում «Ֆրամ»-ի հրամանատար, կապիտան Օտտո Սվերդրուպին» խորագրով նամակը կամ հրահանգը: Նամակ, թե՞ հրահանգ: Մտանձնելով նավի հրամանատարությունը՝ Օտտո Սվերդրուպն սկսում է աշխատել իր հաշվետվության վրա, որի սկզբում գրում է. «...Հենց մեկնելու պահին Նանսենն ինձ հանձնեց մի նամակ կամ հրահանգ, հետևյալ բովանդակությամբ...»: Սվերդրուպն ինքն էլ չի կողմնորոշվում՝ նամակ, թե՞ հրահանգ: Չի կողմնորոշվում այնպես, ինչպես և նա, ով գրել էր այն: Նման ոճ և բովանդակություն կարող էր ունենալ արշավախմբում տարբեր պաշտոններ զբաղեցնող այն ընկերների գրությունը, որոնց հարաբերությունները եզակի մարդկային էին ոչ միայն միմյանց, այլև ընդհանրապես մարդկության նկատմամբ: Աշխատելով պահպանել խիստ պաշտոնական ոճը՝ Նանսենը մեկ նախադասությամբ ավարտում է միտքը իր նպատակի, հեռանալու և ղեկավարությունը ընկերոջ վրա թողնելու մասին: Այնուհետև, ըստ երևույթին, ոչ թե վախենալով վիրավորել ընկերոջ ինքնասիրությունը, այլ իսկապես շատ վստահելով և զնահատելով վերջինիս կարողությունները, նա գրում է. «Ես ավելորդ եմ համարում քեզ որևէ ցուցում տալ այն մասին, թե ինչ է հարկավոր ձեռնարկել այս կամ այն պատահարի դեպքում՝ նույնիսկ, եթե հնարավոր լիներ այդպիսի ցուցումներ տալը, ես համոզված եմ, որ դու ինքդ կարող ես լավագույն ելք գտնել դուրս գալու դժվարին կացությունից...»: Տողեր, որոնք պարզորոշ խոսում են Նանսենի ընկերասիրության, ազնվության, բարոյականության, համեստության մասին: Իսկապես. նամակ, թե՞ հրահանգ: Այնուամենայնիվ, առաջնայինը մարդկային կյանքն է: Մարդկային կյանքի արժեքումը՝ նանսենյան բնավորության ամենացայտուն գիծը այստեղ իր կատարելության մեջ է: Այստեղ չկա նպատակին նվիրվածության գաղափարի սրբացումը: Այդ գաղափարի դեմ կանգնած է մարդը. «Զո պարտականությունն է՝ քեզ հանձնված մարդկանց բարեհաջող հասցնել հայրենիք՝ նրանց չենթարկելով ոչ մի ավելորդ վտանգի ո՛չ հանուն նավի կամ բեռների պահպանության, ո՛չ էլ հանուն էքսպեդիցիայի գիտական արդյունքների»:

Դուկտոր Նանսենը վստահում էր կապիտան Օտտո Սվերդրուպին և ավելորդ էր համարում նրան որևէ ցուցում տալը: Բայց, իբրև սրտացավ ու հոգատար ընկեր, նա ասես ինքնաբերաբար մտովի կիսում է նրա բոլոր դժվարությունները. «Ես գիտեմ նաև, որ դու ամեն ինչ միշտ կպահես այնպիսի կանոնավոր վիճակում, որպեսզի առավել կարճ ժամկետում թողնեք «Ֆրամ»-ը, երբ պատահի որևէ անսպասելի դժբախտություն, ինչպես, օրինակ՝ հրդեհ կամ սառույցների ճնշում: Ես չափազանց խելամիտ կհամարեի սառույցի վրա, եթե նա բոլորովին ամուր է, սննդամթերքի և հան-

դերձանքի մշտական պաշար պահել...» և այլն, և այլն... Ֆրիտյոֆ Նանսենի գրությունն Օտտո Սվերդրուպին գրված է եզակի նրբանկատությամբ, որքան որ հնարավոր է այդ անել այն հաշվով, որ մարդ կարողանա ցուցաբերել իր սիրալիրությունը, նվիրվածությունը և հարգանքը դիմացինի նկատմամբ՝ չկեղծավորելով ու չնվաստանալով: Այստեղ իրար ետևից գրված նախադասություններ կան, որոնք սկսվում են «Ինչպես քեզ հայտնի է», «Ես խիստ ցանկալի եմ համարում», «Եթե հնարավոր լինի» և նման այլ խոսքերով, որոնք էլ առիթ են տալիս երկար մտորելու Նանսենի բնավորության մեջ եղած բացառիկ մարդասիրության մասին:

Գրության ավարտին նա հյուսիսային առավել խոր սառնությունների մեջ իր լուսավոր հավատի և ջերմությունից այրվող սրտի հետ է.

«...Երջանկություն եմ ցանկանում քեզ և նրանց, որոնց համար դու այժմ պատասխանատվություն ես կրում: Մնաք բարով մինչև մեր հանդիպումը Նորվեգիայում՝ այս նավի տախտակամածի վրա, կամ առանց նրան: Քեզ նվիրված՝ Ֆրիտյոֆ Նանսեն»:

Այստեղ համոզված ենք, որ «առանց նրան» խոսքերը, որ «Ֆրամ»-ին են վերաբերում, գրվել են մի պահ գրիչը թղթից կտրելով: Չէ՞ որ «Ֆրամ»-ը ևս շատ բան էր նշանակում Ֆրիտյոֆ Նանսենի համար: Չէ՞ որ այն հոգով ռոմանտիկ, մտքով չափակչոված եվրոպացու համար անձնավորված էր այնքան, որքան հնարավոր էր այդ անել անշունչ սուարկայի նկատմամբ: «Ֆրամ»-ն ուներ ծննդյան, անվանակոչության, հորելյանական օրեր: «Հիրավի, ինչպես չսիրել այն,— վկայում է ուրբաթ, հոկտեմբերի 26-ի օրագրային գրառումը, երբ անձնակազմը նշում էր նրա ծննդյան երկու տարին:— Ոչ մի մայր չի կարող իր թևերի տակ երեխաներին տալ այնքան ջերմություն ու ապահովություն, որքան նա է տալիս մեզ: Նա մեր տունն ու օթևանն է: Մենք միշտ ուրախ ենք վերադառնալ նրա մոտ սառցային հարթություններից, և քանի անգամ ջերմ զգացումներով է բարբախել սիրտս, երբ հեռվից հավերժական ձնածածկույթի վրա երևում էին նրա կայմերը...»:

«Ֆրամ»-ը քաղաքակրթության խոսքն էր «ուզիների սառցակալած թագավորությունում», և նրա ծննդյան օրը, երբ այն առաջին անգամ ջուրն իջավ, «նա, նավի առաջամասին ջարդելով շամպայնի շիշը, ասաց. «Թող «Ֆրամ» լինի ամուսնու...»: Մինչ այդ առաջարկված բոլոր անունները հօդս ցնդեցին: Հենց դրանով էլ նավն ավելի մտերիմ ու հարազատ դարձավ: «Ես ամուր սեղմեցի նրա ձեռքը, աչքերս լցվեցին արտասուքով, սեղմվում էր կոկորդս...»: Նա, ով այնքան թանկագին էր Նանսենի համար, հենց նա՝ Եվա Մարսն էր անվանակոչել նավը՝ իր անվան ու անձի հետ կապելով այն, որ Ֆրիտյոֆի համար տուն ու օթևան էր: Այն արշավախմբի գիտական աշխատանքների համար անգնահա-

տելի նշանակություն ուներ և քաղաքակիրթ երկրներից դուրս եկած անձնավորություններն իրենց պարտքն էին համարում կազմակերպված ձևով նշել նրա ծննդյան օրերը, ինչպիսի պայմաններում էլ որ գտնվելիս լինեին: Նրա հետ կապվածության փաստն արդեն գնահատական էր, սակայն առավել մեծ էր նրա ծննդյան օրվա առթիվ կազմակերպված մրցություն հաղթող լինելու պատիվը:

Քաղաքակիրթ եվրոպացին պատվի արժանացնելու հազար ու մի ձև գիտի, որ փառավորում է հաղթողի սիրտը: Նման պատիվ էր հրաձգության մրցություն հաղթողի համար նախատեսված առաջին մրցանակը՝ «Ֆրամի փայտե խաչը» սպիտակ ժապավենի վրա՝ վզին կրելու համար: Վերջին մրցանակը փոքրիկ հայելի էր՝ «ընկած փառքով հիանալու համար»:

Ֆրիտյոֆ Նանսենի կյանքն ընդհանրապես, մասնավորապես նրա ««Ֆրամ»-ը բևեռային ծովում» աշխատությունը, իսկական դաս է ու դասագիրք պարզևատրումների ու գնահատանքների նշանակության առումով: Նանսենն ինքը մեծ նշանակություն էր տալիս պարզևատրումների ձևով եղած գնահատականներին՝ համարելով դրանք մարդկային առաջընթացի համար թե՛ նյութական, թե՛ հոգևոր գործոն: Նա ինքը, մինչև բևեռային արշավն իր գիտական աշխատության համար արժանանալով ոսկե մեդալի, խնդրում է ոսկին փոխարինել բրոնզով, որպեսզի մնացած գումարը կադուսում օգտագործել գիտական այլ ուսումնասիրությունների համար: Նախօրոք պատկերացնելով, թե որքան մեծ աշխատանք էր կատարելու հեռավոր Սիբիրում շնորով ու հանդերձանքով արշավախմբին սպասարկելու համար սպասող Տրոնտհեյմը՝ Նանսենը մտածել էր նրան խրախուսելու մասին: «Դուք պայմանը կատարել եք չափազանց բարեխղճորեն,— բաժանվելուց առաջ դիմում է նա Տրոնտհեյմին,— և դրանով էքսպեդիցիային խոշոր ծառայություն եք մատուցել: Ես հանձնարարություն ունեմ ձեզ հանձնելու ոսկե մեդալ, որը ձեզ շնորհել է մեր թագավորը այն մեծ օգնության համար, որի կատարմանը դուք կոչվել էիք»: Օսկար Երկրորդ թագավորի թագով խոշոր ոսկե մեդալի հետ Նանսենը հանձնում է նաև վկայական մեդալ շնորհելու և մատակարարումը գերազանց կատարելու համար:

Կազմակերպվածությունը Ֆրիտյոֆ Նանսենի բնավորության մեջ արմատական գիծ էր: Ազատության զգացողությունը, որ այնքան թանկ էր նրա համար, ուղեկցվում էր կազմակերպվածության անհրաժեշտությամբ: Ահա թե ինչն էր նաև արշավախմբի հաջողության գաղտնիքը: Մի փոքր ընդհանրացում կատարենք այս խնդրի շուրջը՝ կանգ առնելով ազգերի պատմության վերաբերյալ եվրոպական փիլիսոփաներից Թեոդոր



ժուճրուայի (1798–1842) մտքի վրա: Վերջինս գտնում էր, որ անհատն իր շահն ու դերն ունի ազգի մեջ, ազգը՝ քաղաքակրթության, քաղաքակրթությունները՝ մարդկության պատմության մեջ: Դրանք ի վերջո կդառնան կենտրոնաձիգ ու կստեղծեն միասնականություն: Մակայն դեպքերի ընթացքը այսպիսի հարցադրում էր դրել. դեպի համերաշխություն տանող այս սիստեմն ինչո՞ւ վերաճեց համաշխարհային պատերազմի: Կար նաև հարցի պատասխանը, որն այսպես էր բացատրվում: Համաշխարհային հավասարակշռության հիմքերը խարխուլ էին, քանի որ ազգությունների ոգու առաջընթացը շղթայագերծում էր կրքերի, որոնց միտքը չէր կարողանում վերահսկել: «...Իրականում ազգի համար ձեռք բերված ազատությունը դառնում էր ոչ այլ ինչ, քան պետության անկախություն, որը դրանով գոռոզանում էր: Եվ աստվածացրած անկախության անհշխանականությունը, մերժելով իր «սրբազան էգոիզմից» վեր որևէ իրավասություն, անհրաժեշտաբար պիտի պատերազմ ծներ, և այն էլ ճիշտ այն պահին, երբ իդեալիստական մեծ դիպեկտիկան նախատեսում էր խաղաղության գալուստը (Դեմի դը Ռուժմոն, «Եվրոպայի 28 դարերը»):

Ազատությունն այնքան բարձր գնահատող եվրոպացին՝ Ֆրիտյոֆ Նանսենը, քաջ գիտեր դրանից ծնվող կրքերի կործանիչ լինելու մասին, ուստի նրա կազմակերպվածությունը ներդաշնակություն էր ստեղծում ազատության զգացողության և կյանքի միջև: Նրա գիտական կազմակերպվածությունն արդեն ինքնին հասկանալի էր: Իբրև ճանապարհորդ, հետազոտող գիտնական՝ նա հրաշալի գիտեր ամեն ինչի չափ ու կշիռը: Բայց ահա, երբ խոսքը վերաբերում է անձնակազմի ապրելակերպին, իրար հետ ունեցած փոխհարաբերություններին, ազատ ժամանակի օգտագործմանը, այստեղ թագավորում է նանսենյան «չափ ու ձևից» առաջացած ներդաշնակությունը: Այստեղ հիշարժան է նշանավոր օրերին, ծննդյան տարեդարձներին ու այլ տոներին նվիրված հանդիսությունների անցկացման ձևն ու բովանդակությունը: «Ֆրամ»-ի վրա գտնվու, այս փոքրիկ ընտանիքի ներսում գոյություն ունի անգամ մշակութային քաղաքականություն:

Բժիշկ Բլեսինգի ծննդյան և հյուսիսային լայնության 79 աստիճանը նվաճելու հանդիսությունը առաջին տոնն էր նափի վրա: Նախօրոք համաձայնեցված՝ գրամեքենայով տպագրվեցին հինգ տեսակ ճաշով ճաշացուցակն ու ճաշկերույթային երաժշտությունը: Վերջինս կազմված էր հայրենասիրական քայլերգերից, ուրախ ու մեղամաղձոտ վալսերից, հանրաժանոթ օպերաներից ընտրված կատարումներից, ինչպես նաև, իբրև եզրափակում, «Կախարդական նետաձիգից»:

Առանձին շքեղությամբ էր տոնվում Նորվեգիայի Մահմանադրության տարեդարձը՝ մայիսի 17-ը: Նափի վրա առաջին անգամ այն

տոնվեց 1894 թվականին, որը մի հրաշալի նկարագրություն է հրաշալի կազմակերպված տոնակատարության մասին: Իրար խառնված հումորն ու իրականությունը ներկայացնում են հայրենի երկրի գովքը, հայրենի աշխատավորի դերն ու դիրքը: Բոլորովին այլ նպատակների ծառայող իրերը՝ սկսած կաթսաներից, օգտագործվում էին միտինգային, երթային տպավորություն ստեղծելու համար: Բժիշկը տանում էր մի հսկա ձող պլակատով, որի վրա գրված էր իր պահանջը՝ «նորմալ աշխատանքային օր»: Նանսենը շատ տեղին է համարում նրա պահանջը հենց իր՝ բժշկի կողմից միայն, բայց ոչ ոք չի պատրաստվում ընթացք տալու այդ պահանջին: Պատկերացնել է պետք տասներեք տղամարդու և փառահեղ խնամված շների շքերթը սառցաբեկորների մեջ խրված նափի շուրջը: «Շները քայլում էին այնպիսի հպարտությամբ, որ կարծես ամբողջ կյանքում միայն զբաղվել են ցույցերի մասնակցելով»: Բնական ու անպաճույճ ձևով դեպի հումորն է գնում Ֆրիտյոֆ Նանսենի գրիչը նաև շների վերաբերյալ, երբ դեռ նրանց հարկադրաբար սպանությունների մասին պատկերացումն անգամ չկար: Այդ 1894 թվի մայիսի 17-ին շները շարունակում էին ապրել անձնակազմի հետ կապվածության խիստ աշխատանքային, բայց և հրաշալի օրեր:

Մայիսի 17-ը «Ֆրամ»-ի վրա նշվեց ոչ պակաս հանդիսավորությամբ նաև այն ժամանակ, երբ նավը հանձնված էր Օտտո Սվերդրուպին, իսկ Նանսենը նրանից շատ հեռու էր: Ոգևորություն, մարդկային մտածողության ու պահվածքի, գաղափարների հասունության համար մղված նանսենյան ավանդույթները շարունակվում էին առանց նրա և: «Տոնական կոմիտեն» ամեն ինչ հաշվի էր առել. «Հանդիսավոր երթը», համազարկերը, դորշակները, ճառերը: Հանդիսավոր ճաշկերույթի ժամանակ ավանդական կենացներին ավելացել էր ևս մեկը՝ բացակայող երկու ընկերների՝ Իոհանսենի և Նանսենի կենացը՝ ցանկանալով, որ նրանք հասնեն նպատակին և բարեհաջող վերադառնան հայրենիք: Այդ կենացն ուղեկցվեց համազարկաողջույններով: «Մեծ տոնախմբությունը տևեց մինչև ուշ գիշեր, որը լի էր անկեղծ ու բարեկամական զվարճություններով», — գրում է Օտտո Սվերդրուպը հաշվետվության էջերում: Որտե՞ր էր ընտանեկան այսքան միասնականության, հարաբերություններում այսքան ներդաշնակության գաղտնիքը: Ճակատագի՞րը, նանսենյան ոգի՞ն... Թերևս երկրորդի մեջ է գաղտնիքը: Նման անձնավորության հետ հնարավոր չէր բացասական էնոցիաներ ունենալ: Անձնակազմը նրանից ճառագող դրական լիցքերի մեջ էր: Այստեղ, իհարկե, միտում չկա թերագնահատելու անձնակազմի անդամներին, քանի որ նրանցից յուրաքանչյուրը գործին գիտակ հրաշալի

անձնավորություն էր: Նրանց հետ ունեցած ներդաշնակություններն են, որ օգնում են Նանսենին ողջ արշավի ընթացքում հաղթահարել իրենց հակադրվող բոլոր տիպի արգելքները: Ներդաշնակության ստեղծելուն, համոզված ենք, շատ դեպքերում օգնել է յուրաքանչյուր մանրուքի հաշվառումը դեռ ճանապարհորդությունը սկսելուց առաջ: Մանրուքներից մինչև ամենամանրաժեշտ իրերն ու նյութերն են նպաստել երեք տարվա կյանքի ու կենցաղի տնօրինումը: Բացի գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ գործիքներից, իր կարևորագույն դերն է կատարել բժախնդրությամբ ընտրված գրադարանը, որ սառցային անապատն իսկական օազիսի էր վերածում բանախյուսական, փիլիսոփայական, գիտահանրամատչելի ու այլ տիպի գրքերի ընթերցանության ժամերին: Մունտեյի «Երեք արքայադուստրերը» նկարը ճամփորդեց «Ֆրամ»-ի հետ, անձնակազմի հարազատների նկարների կողքին:

Ամեն ինչի հաշվարկն արդեն չափազանց պարզ է, երբ արշավը վաղուց արդեն ավարտված է: Չափազանց հեշտ է այսօր մտովի պատկերացնել նշանավոր ճանապարհորդ Ֆրիտյոֆ Նանսենին բևեռային երկրում, զբաղված իր գործով, մանավանդ որ նրա ձեռքով արված լուսանկարները առավել արտահայտիչ են դարձնում այդ պատկերացումները: Սակայն ո՞վ կարող է լիովին պատկերացնել այդ բացառիկ անձնավորության այն ապրումները, որոնցից բևեռային երկրում ծնվել են նրա այն մտորումները, որ մեծ խորություններ ունեն իրենց մեջ, կյանքով ու նվիրումով ապացուցված խորություններ:

— Հարկավոր է համդիպել թեկուզ որևէ արգելքի, որպեսզի ինչպես հարկն է գնահատենք հաջողությունը (200):

— Մարդու կյանքը սոսկ տրամադրությունների փոփոխություն է՝ բաղկացած հիշողություններից ու հույսերից (292):

— Լույսի շնորհիվ ժամանակն արագ է անցնում: Լույսը վանում է թախիծը, բերում է հավատ դեպի հաջողություն և գործողության ծարավ (302):

— Արդյոք իմացության համար մղվող բուն պայքարի մեջ չէ՞ երջանկությունը:

Վերջապես, նորվեգ ժողովրդի հնագույն երգերից ու ասքերից ընտրված տողերը ոչ միայն գեղեցկացնում են գիտական նպատակով գրված այս գեղարվեստական աշխատությունը, այլև ամբողջականացնում Ֆրիտյոֆ Նանսենի կերպարն իբրև ճշմարտացիության ու ազնվության հզոր շնչով ոգի, առած դեպի մարդկային բարօրություն առաջացնող բացառիկ անհատի:

«Ես գգում եմ, որ ընդունակ եմ հաղթելու»,— գրում է նա վերոհիշյալ ժողովրդական բանահյուսությունից այն տողերը, ուր խոստում կա տրված կենաց պսակով պսակելու իրենց կոչմանը հավատարիմ եղողին (412):

Մարդասիրության իր կոչմանը հավատարմությունը Ֆրիտյոֆ Նանսենն ապացուցեց նաև բևեռային երկրում, «Ֆրամ»-ի հետ և առանց նրա: Ո՞վ էր ճանապարհորդ Նանսենն իբրև գրող: Դեպքերը շարադրելու, պատմելու նրա հրաշալի ձիրքին ծանոթ էին բոլոր նրա մտերիմները, հարազատները, նրանք, ովքեր բախտ էին ունեցել շփվելու նրա հետ դեռ մինչև ճամփորդությունը: Նա իր կյանքից վերցրած փոքրիկ հետաքրքիր հատվածներ ու դեպքեր էր պատմում հավաքույթների ժամանակ, ճաշի սեղանների շուրջը՝ գրավելով պատմածի պատկերավորությամբ: ««Ֆրամ»-ը բևեռային ծովում» աշխատությունը դարձավ նրա ստեղծագործական շնորհի հրաշալի վկայությունը: Գիտական ու գեղարվեստական ոճի զուգակցումը օրագրային գրառումներում՝ Ֆրիտյոֆ Նանսենին ներկայացնում են իբրև ոչ միայն իր գործին գիտակ հետազոտող գիտնականի, այլ գիտությունը մոտեցնում են մարդկային հոգևոր ոլորտներին: Ահա այստեղ է ձևավորվել մարդկության մեծագույն այն օրինակներից մեկը, որի շուրջը մտորել են փիլիսոփայական, իմացաբանական համաշխարհային նշանակության հայտնագործությունների հեղինակներ:

Նկարագրելով դարաշրջանային փոփոխությունները, որ հետևանք են եղել արդյունաբերության, էլեկտրականության, ատոմի և այլ հստանագործությունների, 19-րդ դարի վերջերին ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա, գիտնական Տեյար դը Շարդենը անցում է կատարում մարդկային անհատի ուսումնասիրությանը. «Փոթորկալից աշխարհում մեր առջև դեմ հանդիման հառնում է մարդու ֆենոմենը՝ իր ողջ, մինչ այդ անմատչելիությամբ... մենք ավելի, քան մեզ նախորդող մտածողներից որևէ մեկը, կարող ենք հուսալ հասկանալ մարդայնացման կարևորությունը և գնահատել նրա նշանակությունը: ...Եվ դրա համար մակերեսից հեռանալով՝ փորձենք վերծանել ժամանակակից երկրագնդի ընդերքում ծնվող ոգու յուրահատուկ ձևը» (Պիեռ Տեյար դը Շարդեն, «Մարդու ֆենոմենը», էջ 180): Մատերիայի տարածումը, առանց ոգու հետ սինթեզի, կտանի մի աշխարհի ստեղծման, որը ոչ մի եզր չի կարող ունենալ մեր՝ մարդկային աշխարհի հետ: Ուստի «մարդկության զարգացումը, անկասկած, ընթացում է ոգու ծառայությանը հատկացված մատերիայի նվաճման ուղղությամբ»,— գրում է Տեյար դը Շարդենը: Այստեղ վերջ է դրվում իմանալ իմանալու համար սահմանին, և սկիզբ դրվում իմանալ՝ կարողանալու համար սահմանին: Ֆրիտյոֆ Նանսենը գնում էր գիտական իմացությանը՝

մարդկային ոգեղենության աշխարհում այն օգտագործել կարողանալու համար:

Ըստ տեյարդիզմի 20-րդ դարի երկրորդ կեսին ընդունված ազդեցիկ գիտափիլիսոփայական ուսմունքների՝ «էվոլյուցիայի ամեն մի փուլ, անընդհատականի ամեն մի ընդհատում բնորոշվում է ոգու նյութակա-նացման և նյութի ոգեղենացման որոշակի ձևերի առաջընթացով» (Էդ. Աթայան, «Մարդու ֆենոմենը» գրքի առաջաբանից): Այնուամենայնիվ, դրանք, աշխարհի պատմության համար խոշորագույն հեղաշրջումներ լինելով հանդերձ, ընթանում են արտաքուստ աննկատելիորեն: Այս մասին Տեյարը գրում է. «Չևաբանական աննշան թռիչք, բայց միաժամանակ կյանքի ոլորտների սասանում. սա է մարդու ողջ պարադոքսը...»: Կյանքի ոլորտների սասանում, որը, իհարկե, գործում է ի նպաստ տիեզերական գոյի ներդաշնակ իրողության:

««Ֆրամ»-ը բևեռային ծովում» աշխատության օրագրային գրա-ռուններում չենք կարող ասել, թե արտաքուստ աննկատելիորեն է ընթա-նում մարդու գիտակցության ոգեղենացման հեղաշրջումը: Այնտեղ չա-փազանց տեսանելի է այդ ամենը՝ իբրև օրինակ ունենալով Ֆրիտյոֆ Նանսենի ֆենոմենը: Հենց այդ հեղաշրջումով էլ գերբնական տարերքի տիեզերածավալ սփռվածությունը՝ պանթեիզմն իր ողջ դրսևորմամբ ըն-կալող անհատը՝ Ֆրիտյոֆ Նանսենը, հաղթում է բնության գերբնականու-թյունը և գնում իր իմացածը, իր ոգեղեն գիտակցությունը օգտագործել կարողանալու ճանապարհով:

Նա:սսենի մտքի և ոգու ոլորտների միախառնումից օրագրային գրա-ռուններում ծնվել են չնաշխարհիկ նկարագրություններ՝ իրենց լիմացա-կան և գեղագիտական բարձր նշանակությամբ հանդերձ մտորելու տե-ղիք տալով նաև ընդհանրապես մարդու ֆենոմենի մասին:

Ահա նոյենբերյան եղանակի մեջ գտնվող բևեռային բնության նկա-րագրությունը, և նրա ազդեցությունը մարդու գիտակցության ոգեղենաց-ման հրաշքն իրականություն դարձնելու ճանապարհին. «...Լուսնի արծա-թափայլ լույսով ողողված՝ շուրջը փոված են սառցադաշտերը, ամենուրեք մութ, ցուրտ ստվեր են գցում սառցակարկառները, որոնց կողերը թույլ ար-տացողում են աղջամուղջի սփռած կիսալուսինը: Հեռվում հորիզոնը ուր-վագծում է սեղմումներից կուտակված սառույցների մութ գիծը, նրանց վրա արծաթափայլ մառախուղի քողն է, իսկ ավելի բարձր աստղերով սփռված անսահման մուգ կապույտ երկնային խորխորատն է, որի վրա-յով եթերի մեջ լողում է լիալուսինը: Հարավում ցերեկվա թույլ առկայծումն է՝ ներքևում մուգ բոտրագույն, իսկ մի քիչ վերև՝ վառ դեղին և աղոտ կա-նաչավուն, որոնք անեանում են այնտեղ՝ կապտի մեջ՝ վերևում: Այդ ամե-նը ձուլվում է իր տեսակի մեջ միակ, աննկարագրելի ներդաշնակության

մեջ: Երբեմն սաստիկ ցանկանում ես այդ բնությունը վերածել երաժշտու-թյան հնչյունների. միայն նրանք կարող էին տալ նրա էությունը: Ինչպի-սի՜ հուժկու և պարզ ակորդներ կստացվեն:

Անդորություն, օ՜, ինչպիսի անդորություն, լսում ես սեփական նյարդերի թրթիռը: Զեզ թվում է, թե այս հարթություններով սահում ես հե-ռո՜ւ-հեռու, անեզր տարածության մեջ: Արդյո՞ք դա այն բանի կերպարը չէ, որ երբևէ լինելու է: Այստեղ հավերժություն ու խաղաղություն է: Նիր-վանան պետք է յուրտ ու պարզ լինի, ինչպես այս հավերժական աստղա-լի երկիրը: Ի՞նչ արժեք ունեն մեր բոլոր հետազոտություններն ու մեր ամ-բողջ բանականությունը այս հավիտենականության առջև...»:

Այս պահի մեջ ինչպե՞ս է ընդունում ինքն իրեն բևեռախույզ Ֆրիտյոֆ Նանսենը: Այլ գրառումներից էլ արդեն պարզվել է, որ կյանքի իմաստա-վորումը նա տեսնում է նման իմացություններին հասնելու համար մղած պայքարի մեջ, որի մեջ է նաև մարդու երջանկությունը: Հենց այստեղ է նաև մարդու բացառիկ համարվելու գաղտնիքը:

### ՀԱՅ ԴԱՏԻ ՀԵՆԱՍՅՈՒՆԸ

Հյուսիսային բևեռի սնձնուրաց հետազոտողի գիտական արշու-վանքները հաջորդում էին իրար, փառքն ինքն ընդառաջ Լր գալիս նրան, ու յուրաքանչյուր նոր հայտնագործություն ավելի էր մոտեցնում դափնի-ների բուրմունքը:

Սակայն նա իր կյանքի կես ճանապարհն անցնելուց հետո կանգ առավ՝ հասկանալով, որ դեպի դափնիները տանող ճանապարհը չի կա-րող անցնել՝ շրջանցելով այնտեղ անուժ ու անօգնական մարդկային խմ-բերին: Ծանոթ թե անծանոթ:

«Հայրս մեռավ հայ բառը շուրթերին, այնքան նա սիրում ու սքանչա-նում էր հայ ժողովրդով»,— հետագայում խոստովանում է Նանսենի դուստրը:

Փոքր ազգերի իրավունքների պաշտպան այս անձնավորությունը հոգու աչքերով էր ընկալում ողջ մոլորակը, և այն էլ՝ որպես մարդկային մի մեծ սիրտ, որի համաչափ տրոփյունը պայմանավորված էր նրա յու-րաքանչյուր բնակչի մարդավայել իրավունքով:

Շատ ավելի վաղ ծանոթանալով հայ ժողովրդի պատմական անց-յալին՝ մեծ մարդասերն իր առաքելությունը տեսավ նրա շահերի պաշտ-պանության մեջ, թողնելով իր կյանքի իմաստը համարվող գիտական գործունեությունը: Չէ՞ որ այստեղ մեծ տերությունների կամայականու-

թյանն ու քմահաճությանը զոհ էր գնում ոչ մեկ անհատի, այլ բիրևիական հնության մի ողջ ժողովրդի կյանքի իմաստը:

Նանսենի «Խաբված ժողովուրդ» աշխատությունը, որ ծնվում է կոտորածից մահապուրծ հայ գաղթականներին կյանքի կոչելու նրա ճիգերի ճանապարհին, հրատարակվում է 1927 թվին Նովեգիայում՝ «Հայաստանում» խորագրով: Այնուհետև նույնը՝ Հոլանդիայում: Հաջորդ տարի անգլերեն թարգմանությամբ այն հրատարակվում է Լոնդոնում և Նյու Յորքում, ֆրանսերեն՝ Փարիզում: 1928 թվին նույն գրքի գերմաներեն հրատարակությունը՝ Լայպցիգում՝ արդեն «Խաբված ժողովուրդ» վերնագրով:

Մինչև այսօր հայ ժողովուրդը չուներ իր դատի պաշտպանությանը զինվորագրված նորվեգացի մարդասերի այս գրքի հայերեն հրատարակությունը, որից թարգմանաբար միայն հատվածներ էին տպագրվել հայաստանյան մամուլում 90-ական թվականներին:

Այսօր արդեն Երևանի պետական համալսարանի հրատարակությամբ մեր սեղանին է գրքի հայերեն տարբերակը՝ Էվելինա Մակարյանի թարգմանությամբ՝ որպես մուտք ունենալով հեղինակի՝ Ֆրիտյոֆ Նանսենի գերմաներեն մակագրության արտատպությունը:

1928 թվի հունիսին իր համաչափ, հաստատուն ու գեղեցիկ ձեռագրով մակագրելով գերմաներեն հրատարակության վրա՝ հեղինակն այն նվիրում է համալսարանին: Այս մակագրությունը խոսում է այն մասին, որ Նանսենը քաջ գիտակցում էր, թե հայ ժողովուրդը չէր կարող պատկանել այն ժողովուրդների թվին, ում տեղը դարեր հետո անարգել սուլում է քամին, կամ խորշակն ստվերոտ տեղ չի կարողանում գտնել: Նա գիտեր, որ գիտական կաճառին պահ է տալիս այն գիրքը, որին ժամանակներ հետո գնահատանքով էն մոտենալու նրանք, ում մեջ նստած է ազգի ոգին, ում համար թանկ է հայ դատը:

Գրքի հայերեն հրատարակությունը ոչ միայն դափնու հոտավետ մի տերև է նանսենյան փառքի այն պսակին, որ հյուսել է երախտագետ հայ ժողովուրդը մեծ մարդասերի համար, այլև ճիշտ իր պահը գտած մի իրադարձություն, որն այսօր էլ ունի իր կարևոր իմաստը:

Ժամանակների հերթագայության մեջ ոչինչ այնքան գեղեցիկ ու խոսուն չէ, որքան ճիշտ իր տեղն ու պահը գտած իրադարձությունը: Մեծ թե փոքր:

«Մե՞ծ, թե՞ փոքր իրադարձություն է «Խաբված ժողովուրդ» գրքի հայերեն հրատարակությունը» հարցին, կարող ենք պատասխանել այն անցյալի ու ներկայի լայնամասշտաբ խաչուղիների ենթատեքստում ընթերցելուց հետո:

Ահավոր սպանդից փախած ժողովուրդը հայացքն ուղղել էր Ժնև՝ Ազգերի ընկերակցության խորհրդին, մի ծրագիր, ըստ որի՝ հնարավոր էր 50 000 մարդու համար կենսապայմանների սետդումը Սարդարապատում, որի համար անհրաժեշտ էր ձեռք բերել 20 մլն մարկ գումար: Ընկերության գլխավոր հանձնակատարը պայծառահիշատակ Նանսենն էր, որն էլ՝ գիտակցելով պատասխանատվության ծանրությունը, այնուամենայնիվ, համաձայնեց զբաղվել դրանով՝ հույսը դնելով աշխատանքային միջազգային կառույցների հետ գործակցության վրա:

Ինչևէ: Կազմվեց հանձնախումբ, որն ուղևորվեց Հայաստան, սկսեց իր աշխատանքները՝ տեղում կատարված ուսումնասիրություններն ու առաջարկությունները մանրամասն հաղորդագրություններով ուղարկելով Ժնև: Այդ ամենը հետագայում ի մի բերեց ու ամփոփեց Ժնևում քարտուղարության հրատարակած գրքուկում, որտեղ, իհարկե, զուտ փաստաթղթային ձևակերպումներ են:

Իսկ թե ինչ տպավորություններ ստացավ Ֆր. Նանսենը խաբված ժողովրդի հետ իր շփումների ընթացքում, նրանց կյանքի, վարք ու բարքի, ինչպես նաև երկրի մասին, ահա այս էլ դարձավ ներկայումս հրապարակի վրա դրված գրքի նյութը: Ժանրային խմաստով՝ ուղեգրություն, խոսքի պատկերավոր ու գեղեցիկ օգտագործման իմաստով՝ գեղարվեստական ստեղծագործության արժանիքներով օժտված ու պատմական անդրադարձներով փաստագրական աշխատություն:

Նանսենն ընդառաջ գնաց մոխիրների մեջ կյանքի ծիլեր հայտնաբերողների կանչին ու դարձավ այդ ծիլերի համար արևի տակ տեղ բացող առաքյալը: Ստանձնած աշխատանքը համարելով իր հոգու պարտքը՝ նա իրեն աջակցելու համար նրխատագիտության խոսքեր հայտնեց իր անխոնջ գործընկերներին՝ հանձնախմբի քարտուղար նորվեգ Քվիսլինգին, հիդրոտեխնիկայի ինժեներներ իտալացի Պիո Լո Մավիոյային, անգլիացի Դափյուսին, գյուղատնտեսության մասնագետ, ֆրանսիացի Ժ. Կարլին:

20-ական թվականների կեսերին հայոց երկրում աշխատող նորվեգացի մարդասերի հոգու ու մտքի կարողություններն արդյոք չթողի՞ իրենց արմատները հայ ժողովրդի ներուժի մեջ՝ նրա գալիք այսօրվա մեջ ևս դրանք օգտագործելու համար: Եթե ոչ, ուրեմն թող գրքի թարգմանության այս նախաձեռնությունը դառնա նանսենյան ոգին արմատավորելու սկիզբ: Եթե այո, ուրեմն թող որ այն դառնա հայոց հողի վրա մարդուն սիրող ու նրա համար կենսապայման ստեղծող նվիրյալների ոգեշնչման աղբյուրն ու օրհնությունը:

Ինքը՝ մեծ մարդասերը, համոզված էր. «...երկրում կբացահայտվեն զարգացման նոր հնարավորություններ, որոնք ի սպաս կդրվեն ժողովր-

դի ու նրա բազմաթիվ փախստականների լուսավոր գալիքի կերտման գործին»:

Ինչպես հատուկ է ուղեգրության ու հիշողությունների ժանրին, Նանսենը գրքում ամեն ինչ կոչել է իր անունով, պատմել իրականում գոյություն ունեցող մարդկանց մասին, պահպանելով նրանց կենսագրական, աշխատանքային մանրամասները: Խոսքի արժանավորությունն ավելի են ընդգծում լուսանկարները, դրանք պատմում են ոչ միայն տեղանքի ու կենցաղավարման մասին, այլև փորձում նրանով ընդգծել հայի տիպականությունը:

Դեռ 1914 թվին Քրիստիանիայի համալսարանում հանդես գալով «Փոքր ազգերի իրավունքների մասին» դասախոսությամբ՝ Նանսենն այժմ, երբ 1925-ին ձեռնամուխ էր լինում հայ գաղթականներին սատար լինելու հասարակական գործունեությանը, արդեն ուներ իր հաստատ համոզմունքները և հիասթափությունները եվրոպական քաղաքագետների վարած քաղաքականության մասին: Հայության իրավունքների պաշտպանության համար նա ինքը տարբեր միջոցների է դիմում, իսկ իրեն՝ ժողովրդին խորհուրդ էր տալիս հույսը դնել միայն սեփական կարողությունների վրա:

«Հայ Իստի հենասյուներից մեկը». միանգամայն իրավացիորեն այսպես է որակել «Խաբված ժողովուրդ» գրքի նրա բարգամանչուհին: Վերջինս, օրինակներ բերելով դարասկզբին գործող պանթոնիզմի՝ համաթուրքական կայսրություն ստեղծելու մեթոդային գաղափարներից, կարևորում է մարդկության մեծագույն զավակների այս հարցում ունեցած դիրքորոշումների բեռը, որոնցից մեկն էլ Նանսենն էր: Եվ եթե «Թյուրքիե»-ն մեր օրերում կարող է գրել՝ «Կովկասի մեջ հայերի թիվը, ինչպես այսօր Անատոլիայի մեջ, թանգարանային պիտի լինի» («Երկիր», 1993, 24 մայիսի), ապա չենք կարող չհամոզել, որ իսկապես հայ դատի պաշտպանության զինվորագրյալի «Խաբված ժողովուրդը» յուրաքանչյուր հայի առջև դրված հայելին պետք է լինի:

Դեռ Արագի հովտում իր գործունեությունն սկսելուց առաջ էր. Նանսենը Արարատյան հարթավայրի մասին բնագիտական ու աշխարհագրական խոր գիտելիքների տեր էր: Հակադրվելով ամերիկյան որոշ գիտնականների՝ նա հերքում է այն միտքը, թե ժողովրդի մեծ գաղթերի պատճառը պետք է բացատրել կլիմայական փոփոխություններով, կապված ջրի օգտագործման հնարավորության հետ: «Այս տեսակետը չի գործում Արագի հովտի վրա»,— հաստատում է Նանսենը: Նա գտնում է, որ չպետք է մոռացության տալ մարդու՝ հենց իր հնարավոր ազդեցությունը բնության վրա: Ըստ նրա՝ պետք է գնահատել սերունդների աշխատունակությունը: «Մենք վարժված ենք մշակույթի

արժեքը չափել գրքերի իմաստության մեծությամբ: Սակայն դեռ հարց է, թե նրանք, ազատ լինելով ամեն տեսակի ընթերցանությունից, գիր չունենալով, իրենց ժամանակը չէի՞նք օգտագործում այլ բաներում՝ անցնելով մեզանից»,— գրում է Նանսենը: Այս պարագայում «այլ բան» հասկացության տակ նա նկատի ունի աշխատանքը և վերջինիս միջոցով բարեկեցության ստեղծումը: Այս հարցին որպես ապացույց բերում է Արագի հովտի տիրակալներից մեկի սեպագիր արձանագրությունը մեծ ջրանցքի կառուցման մասին: Այստեղ երկիրն ամրացել, և ջրանցքն անհետացել է ռազմատենչ բանակների ասպատակությունների հետևանքով: Աշխարհի այս մասի համար Նանսենը բնորոշ է համարում տեղանքի փոփոխությունը մոնղոլների, թուրքերի և «մշակութապես անույ ցեղերի հորդանների հարձակումների հետևանքով»:

Սարդարապատի անապատում գաղթականության համար կենսապայմաններ ստեղծելու ծրագրի վրա աշխատելու ընթացքում Նանսենը զուգորդումներ է կատարում բնակլիմայական պայմանների, պատմական տեղեկությունների արհեստական ջրատարների հնարավոր գոյության և ժամանակի իրական պայմանների միջև՝ ցուցաբերելով զարմանալի իմացություն երկբազմի այս մասի անապատացման մասին:

Լուրջ հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում Նանսենի փաստագրական մեջբերումներն ու վիճակագրական աղբյուրները երկրի կլիմայի և երկրագործության վրա նրա ազդեցության մասին, խաղողագործության ու բանջարաբուծության հետագա զարգացման համար հնարավոր միջոցների օգտագործման մասին: Նանսենի աշխատությունը կլանում է քեզ էջ էջի ետևից: Եվ եթե քեզ համար հետաքրքիր է այն, թե 20-ական թվականների Արագի, Ալագյազի հովիտներում, Արփաչայի ավերին որտեղ էր բնությունը պահում ջրի պաշարները, ովքեր և ինչպես էին աշխատում այդ պաշարները դարձնել բնակավայրի ու շեն ընտանիքների հիմքը, ուրեմն քեզ շատ բան կարող է պատմել այս գիրքը:

Արշավախմբի առաքելությունը անջրդի երկրում ջրի եղած պաշարների օգտագործմանն օգնել, օժանդակել էր: Սակայն ուղեգրության ժանրը, որով սկսված է գիրքը իր առաջին նախադասությամբ, հնարավորություն է տալիս լիովին պատկերացում կազմելու երկրագնդի վրա մեզ բաժին հասած տարածքի, մեր նախնիների մշակույթի, շնորհքի ու ապրելակերպի մասին այնքանով, որ այն կարող է փոխարինել երկրագիտական, ազգագրական շատ տեղեկանքների:

Եվրոպական ճարտարապետությանը ծանոթ, աշխարհի շատ հնություններ իր աչքով զննած Նանսենը խոսում է երկնային գործերի բազմության անունով Չվարթնոց կոչված տաճարի մասին, ու քեզ

քվում է, թե նրա հետ կանգնած են ազգային ճարտարապետական մվաճումը հաստատող պատմական հիշարժան հողի վրա:

Նանսենի աշխատության մեջ մտացածին ոչինչ չկա: Այն, ինչ տեսել է, տեսել է: Այն, ինչ պատմել են, պատմողի մասին ևս գրված է: Այն, ինչ լսել է լսող ժողովրդից, ավանդություն է:

Այսօր մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում Նանսենի կողմից հայ ժողովրդին՝ որպես արտագաղթն արյան մեջ ունեցող ժողովրդի բնորոշումը:

Գրքի «Հայերը և համաշխարհային մշակույթը» բաժինը սկսվում է «Հայ ժողովրդի ողբերգությունը օտարին անմնացորդ մվիրումով ծառայելու մեջ է» նախադասությամբ: Այնուամենայնիվ, ըստ Նանսենի՝ հայերը մշտապես տոգորված են եղել հոգևոր միասնության գաղափարով, որը հնարավորություն է տվել համախմբելու իրենց եկեղեցու շուրջը: Սակայն դրա հետ եթե, ըստ Նանսենի, հայերն ունենային մակաբանության և քաղաքական միասնության հասնելու համառությունը, նրանց առջև կընկրկեին բոլոր տիպի գործոնները: Օտարերկրացի Ֆ. Նանսենի խոսքերով՝ «Հայ ժողովրդի հավաքական ուժի մվազման կարևոր պատճառ է բնակչության մեծ քանակով արտագաղթը, որի հետևանքով նա կորցնում է իր լավագույն ուժերը»:

Հայ ժողովրդի ծագման հետ կապված որոշ հարցերում, սակայն, անհիմնավորված փաստեր բերուի Նանսենը, այնուամենայնիվ, նշում է. «...հայ ժողովուրդն իր լեռնաշխարհի ներփակության մեջ ստեղծում էր ինքնատիպ ազգային մշակույթ և ամուր պահում իր ստեղծածը՝ հաճախ մինչև մոլեռանդության աստիճան: Դրա ապացույցներն են կրոնը և եկեղեցին, որոնք բոլոր ժամանակներում պիպանեցին իրենց անկախությունը: Վաղ շրջանում հայ ժողովուրդն առաջինն էր, որ քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն և իր սեփական սահմաններից դուրս ևս ծավալել եկեղեցական, մշակութային գործունեություն»:

Այս հարցերը, որոնք մտորելու առիթ են տվել նորվեգացի մեր բարեկամին, չեն կարող մտորելու առիթ չլինել նաև մեզ համար: Ուստի գիրքը հայերենով հրապարակ հանելը կրկին ու կրկին մեր ազգի դեմքն ու դիմագիծը ավելի ցայտուն դարձնելու համար է:

Իսկ այն, որ աշխարհառշակ մարդասերի սրտի սիրուց հային բաժին հասավ, դա մեծ երջանկություն է:

Հայոց մասին երկրագիտական կարևոր աղբյուր լինելուց գատ, գիրքը կարդալուց հետո պարզվում է նաև, որ Նանսենը ստեղծագործ հոգու և գեղեցիկ խոսք ունեցող գրչի տեր անձնավորություն է:

Առաջին օրը, երբ գաղթականների համար հավատի պաշարով բեռնավորված հանձնախումբը ճանապարհ ընկավ, Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակատարի գրիչը այսպես սահեց թղթի վրա.

«Դեպի հարավ: Ալպերի խրոխտ ժայռապատները, որ նախկինում հունական և հռոմեական աշխարհների սահմանն էր հյուսիսում, մնացել էր ետևում, մեր առջև Պոյի հովիտն էր՝ ամառային և արևոտ, խաղաղ, ինչպես կնոջ ժպտացող դեմքը... Այնուհետև ծով ավիով դեպի Վենետիկ, որն ինչպես նիրհող ծովային թռչուն՝ ջարդված թևերով օրորվելով մտորում էր Արևելքի մոռացված երազների մասին...»:

Նանսենը գնում էր մոռացված երազների երկիր՝ որպես լուսիս ու հավատի սերմնացան:

Երևանի համալսարանի կողմից «Խաբված ժողովուրդ» հրատարակության շապիկին մի խոսուն լուսանկար-վավերագիր կա, որը կարող ենք վերնագրել «Նպանդի միջով անցած հայ մայրը»:

Ճիշտ ժամանակին կատարված ներկա թարգմանության միջից Նանսենը հարցնում է մեզ՝ հայերիս. «Ինչպիսի՞ վերնագրով լուսանկար ունի հայոց պատմության այս օրը»:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մակիչ Արզունանյանն իր «Նանսենը և Հայաստանը» գրքում գրում է. «Ֆրիտյոֆ Նանսենը դարձել է մարդկության սիրելին: Երախտապարտ ժողովուրդները բարձր են գնահատում ու հավերժացնում նրա հիշատակը: Մեծ բեռնախույզի անունն են կրում Արկտիկայի ու Անտարկտիկայի մի շարք վայրեր՝ Շպիցբերգենի ու Գրենլանդիայի միջև ընկած ստորջրյա սահանքը, Ֆրանց-Իոսիֆի երկրի արշիպելագի կղզիներից ու իրվանդաններից մեկը, Կանադական արկտիկական արշիպելագում Գրանտի երկրի և Սվերդրուպի կղզու միջև ընկած նեղուցը, սովետական հետազոտողների կողմից հայտնաբերված վիթխարի գոգավորությունը Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում և այլն»:

Նանսենը մեծ ժողովրդականություն ունի սովետական երկրում, ուր նրա անունով կոչվում են բազմաթիվ օբյեկտներ, մասսայական տպաքանակով հրատարակվում են նրա երկերը, լույս ընծայվում գիտահետազոտական աշխատություններ ու հանրամատչելի գրքեր նրա մասին:

Փոքրաթիվ ժողովուրդներն ավելի կարիք ունեն մեծ բարեկամների: Հենց այդպիսին է Ֆրիտյոֆ Նանսենը հայ ժողովրդի համար: Նա միշտ հատուկ գորովանքով է հիշում առաջավոր մարդկության առաքյալին, որն աներևակայելի ջանքեր գործադրեց՝ օգնելու աշխարհի առավել տառապած ժողովուրդներից մեկին: Քանի կան ու կլինեն հայեր, այնքան

ժամանակ նրանք խոր ակնածանքով ու անհուն սիրով կհիշեն Նանսենի անունը:

Հայ հասարակական միտքը Նանսենով հետաքրքրվել է դեռ այն ժամանակ, երբ նա իր առաջին խոշոր քայլերն էր անում բևեռախուզության ասպարեզում: Հայկական մամուլում մասնավորապես հաղորդագրություններ տպագրվեցին նրա գրեմլանդական սխրանքի և ապա «Ֆրանս»-ի ճանապարհորդության մասին: Այսպես՝ «Մշակ» լրագիրը 1896 թվականի փետրվարի 15-ին հաղորդում է, որ Նանսենի արշավախումբը շարժվում է դեպի Հյուսիսային բևեռ, իսկ ռուս գիտնականները (Մենյոնով, Տոլլ և ուրիշներ) պատրաստվում են նրան ամեն կերպ աջակցել, մանավանդ վերադարձի ժամանակ (Նորսիբիրյան կղզիներում պարենի պաշարներ են ստեղծվել և այդ մասին հաղորդվել է Նանսենին): Ավելի ուշ՝ նույն թվականի օգոստոսի 6-ին, «Մշակ»-ը մանրամասն տվյալներ է հաղորդում արշավախմբի ուղերթի մասին և նշում, որ «Նանսենը ողջ և առողջ հասել է իր հայրենիքը. Նանսենի ուղևորության գիտական հետևանքները ահագին են...»<sup>1</sup>:

Հետագա տարիներին ավելի է մեծանում հայոց հետաքրքրությունը դեպի Նանսենն ու նրա գործը, իսկ սովետական իրավակարգում այն հասնում է կատարյալ բարձրության: Սովետահայ մամուլը հաղորդագրություններ է տպագրում Նանսենի մարդասիրական գործունեության մասին, ընդգծում հատկապես նրա մեծ դերը Պոլովոյեի սովյակներին օգնելու գործում: Ահա, օրինակ, «Խորհրդային Հայաստան» լրագրի 1922 թվականի մարտի 23-ի համարում գետնից հոգևածը՝ «Ֆրիտյոֆ Նանսենը և Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատը», ուր ցույց է տրվում, թե ինչպես մեծ մարդասերը, բուրժուական կառավարողների հակասովետական լուտանքի ծանր պայմաններում, օգնության ձեռք մեկնեց բանվորագյուղացիական պետության քաղցածներին. «Նանսենը առաջիններից էր, որ իր համարձակ խոսքով ծառայեց բուրժուական հասարակական կարծիքի դեմ, հանդես եկավ թե՛ մամուլում և թե՛ հասարակական հավաքույթներում ու պաշտպանեց պրոլետարական հեղափոխության արդարացի պահանջները... Ֆրիտյոֆ Նանսենի բերած օգնությունը բանվորագյուղացիական մասսաների համար անպայման շատ մեծ է: Հաջողություն Ֆրիտյոֆ Նանսենի այս ուղևորությամբ անելիք նորանոր քայլերին ու ձեռնարկներին»:

Նանսենի վերաբերյալ բազմաթիվ նյութեր տպագրվեցին, երբ 1925 թվականին նրա գլխավորած հանձնաժողովը ժամանեց Սովետական

Հայաստան և ապա հանդես եկավ Ազգերի լիգայում: Ընդգծենք, որ Նանսենի միսիայի հետ կապված դեպքերի ընթացքն արտացոլվում էր ինչպես սովետահայ մամուլում, այնպես էլ արտասահմանյան հայ լրագրերում ու ամսագրերում: Ավելին՝ դեպի Նանսենի գուժն ունեցած վերաբերմունքը ևս դարձավ յուրահատուկ ջրբաժան գիծ սփյուռքահայ առաջադիմական ու հետադիմական ուժերի միջև:

Սովետական երկրում լայն ծավալ ընդունեց Ֆ. Նանսենի երկերի հրատարակությունը: Այդ ուղղությամբ բավական աշխատանք է կատարվել նաև Հայաստանում, ուր մասսայական ընթերցողը մայրենի լեզվով կարդացել է մեծ գիտնականի ու բևեռախույզի աշխատությունները:

1927 թվականին հայերեն լույս տեսան Ֆ. Նանսենի «Գիշերվա խավարի և սառույցների մեջ» գրքի 1-ին ու 2-րդ հատորները (համառոտակի թարգմանությունը կատարվել էր ռուսերենից՝ Սկրտիչ Արմենի և Ռ. Դրամբյանի կողմից), որոնք պատկերում են «Ֆրամի» ճանապարհորդությունը: Հայ ընթերցողը ջերմությամբ ընդունեց դրանք: Այդ հրատարակության առթիվ տպագրվեցին դրական գրախոսականներ և շեշտվեց Ֆ. Նանսենի ոչ միայն գիտական խոր միտքը, այլև գեղարվեստական բարձր ընդունակությունները. «Նանսենը միաժամանակ լավ նկարագրող է. գիտե հուզել ընթերցողներին իր հոգեկան ապրումների գեղարվեստական վերարտադրությամբ... Նանսենի «Գիշերվա խավարի և սառույցների մեջ»-ը կարդացվում է մի շնչով, ինչպես Ռոբինզոնի արկածները»<sup>2</sup>:

1958-59 թվականներին Հայպետհրատը նորից հրատարակեց Ֆ. Նանսենի ««Ֆրանս»-ը բևեռային ծովում» գիրքը, բայց այս անգամ երկու ծավալուն հատորներով: Դրանով հայ ընթերցողը հնարավորություն ստացավ լայնահուն կերպով ծանոթանալու մեծ նորվեգացու բևեռային էպոպեային:

Ֆ. Նանսենի «Հայաստանում» գրքի հրատարակությունը նորվեգեբներն, ապա և մյուս լեզուներով լայն արձագանք գտավ՝ ընդհանրապես, Սովետական Հայաստանում ու սփյուռքահայության մեջ՝ մասնավորապես: Ամենից առաջ նշենք, որ հեղինակն իր անձնական օրինակներն ու դարկեց մի շարք պետական ու հասարակական գործիչների, գիտնականների ու արվեստագետների, ընդ որում՝ անպայմանորեն ջերմ մակագրությամբ: Բերենք մի քանի օրինակ: Նանսենը Լյուսակերից իր գրքի ֆրանսերեն հրատարակությունը առաքում է «Միստեր Լուկաշինին՝ հարգանքով»: Ար. Երզնկյանին ուղարկում է գերմաներեն հրատարակությունը՝ հետևյալ մակագրությամբ. «Ի նշան խոր երախտագիտու-

<sup>1</sup> «Մշակ», 1896 թ., դդ 19, 90:

<sup>2</sup> «Խորհրդային Հայաստան», 11.9.27:

բյան՝ Հայաստանում գտնված ժամանակ մեր նկատմամբ ցուցաբերած ողջ սիրալիրության և սրտառուչ շնորհակալությամբ՝ մեր աշխատանքում ցույց տված շատ արժեքավոր օգնության համար»:

Հայ գործիչներն ու գիտնականները խորին շնորհակալությամբ էին ընդունում Ֆ. Նանսենի գիրք-նվերը և երախտագիտական խոսք ասում: Պրոֆ. Հ. Բեդեյանը 1928 թվականի հունիսի 11-ին հեռագրել է. «Ամբողջ հոգով շնորհակալություն ազնվաբարո գրքի համար: Տպավորությունը խորն է: Հասարակայնությունը որոշել է անպայմանորեն այն թարգմանել հայերեն և ռուսերեն»: Պրոֆ. Աշ. Բալանթարը հատուկ նամակ է գրում «մեծարգո դոկտորին» և նշում. «Ինձ համար շատ հաճելի պարտականություն է իմ սրտագին շնորհակալությունը հայտնել Ձեր մեծագույն սիրալիրության առթիվ: Ձեր գիրքը մեր ժողովրդի մասին այժմ մեզ մոտ ամենուրեք կարդում են մեծ հետաքրքրությամբ»:

Անվանի գրականագետ և կուսակցական ու պետական գործիչ Պ. Մակինցյանը գերմաներեն հրատարակության առթիվ հանդես եկավ ծավալուն գրախոսականով («Նանսենի գործն ու գիրքը»), որը լույս տեսավ «Նոր ուղի» հանդեսում: Այնտեղ արժեքավորվում է Նանսենի հումանիստական գործունեությունը, որ տարածվեց նաև հայ ժողովրդի վրա: Ապա անդրադառնալով նրա աշխատությանը՝ Մակինցյանը գրում է. «Նանսենը տալիս է իր կենդանի տպավորությունները մեր երկրից, ժողովրդից, նա ուշիուշով դիտում է մեր քաղաքական կարգերը, հետաքրքրվում է երկրում առաջ տարվող տնտեսական ու կուլտուրական շինարարությամբ, ձգտում է ըմբռնել մեր ֆեդերացիայի իմաստն ու ներթափանցել ազգամիջյան հարաբերությանց մեջ: Գրքի այս կողմը մեզ համար թերևս ամենահետաքրքրաշարժն է»<sup>3</sup>: Այնուհետև Նանսենի աշխատությունից բերվում են այդ մտքերը հաստատող քաղվածքներ: Գրախոսը դրականորեն է գնահատում նաև հայ ժողովրդի պատմության նանսենյան ակնարկը, որը Վրաստանի համեմատությամբ «շատ ավելի լիակատար է», և ուր «մենք գտնում ենք շատ գնահատելի տեղեկություններ... Պետք է խոստովանել, որ հայ ընթերցողը, անգամ որակյալ մտավորականը Նանսենի կազմած վրաց և հայոց պատմության ակնարկներից կքաղի բազմաթիվ հետաքրքրաշարժ և թարմաշունչ տեղեկություններ»<sup>4</sup>: Միանգամայն խրախուսելի է նաև արևմտյան տերությունների քաղաքականության մերկացումը հայկական հարցում. «Իմպերիալիստական դիվանագետների քաղաքականության այս մերկացումն ու մեկնաբանումը Նանսենի գրքի վերջում կարիճի այն թունավոր քիստն է, որ խայթում է ոչ միայն իմպերիալիստական

դիվանագետներին, այլև նրանց բազմամյա խոնարհ ծառա դաշնակցականներին»<sup>5</sup>:

Նույն հանդեսի 1930 թվականի դ 4-ում լույս է տեսնում կարճ, բայց բարձր մակարդակով գրված խմբագրական հոդված՝ Ֆ. Նանսենի մահվան առթիվ: Այնտեղ հուզիչ ջերմությամբ է խոսվում մեծ գիտնականի ու հասարակական գործչի մասին. «Այդ երևելի մարդը այն գիտնականներից չէր, որոնք գրքերի պարիսպների ետևում, իրենց առանձնասենյակներում մտած՝ կտրվում են կյանքից և հասարակությունից: Ընդհակառակը, նա խորապես տարբերվում էր բուրժուական գիտության բազմաթիվ անհոգի քուրմերից: Թեև նրա հետազոտության բնագավառը սառցակույտերի և սառնամանիքի վայրն է եղել, Հյուսիսային բևեռը, բայց նրա կրծքի տակ բաբախել է մի բոցավառ սիրտ»<sup>6</sup>: Ահա թե ինչու նա ոչ միայն ճանաչված էր, այլև սիրված ամբողջ աշխարհում: Նանսենը վիթխարի մարդասիրական գործ կատարեց նաև Ռուսաստանում, կազմակերպեց փրկարար օգնություն սովյալներին և դա՝ հակառակ բուրժուական աշխարհի կառավարողների ցանկության ու կամքի. «Խորհրդային իշխանությունն ունի իրավունք պարծենալու, որ Նանսենի պես բարեկամ է ունեցել»,— նշվում է հանդեսում:

Հողվածում առանձին ուշադրություն է դարձվում Նանսենի հայանպաստ գործունեությանը, նրա ուղևորությանը Հայաստանում ու մարտական ելույթներին Ազգերի լիգայում, շեշտվում «նրա խիզախ բողոքն ու առնական ցասումը մեր թշնամիների դեմ»: Բացի դրանից, «նա գրել է մի գեղեցիկ գիրք մեր մասին, որ ցույց է տալիս, թե այդ համառ եվրոպացին կարողացել է յուրացրել է ահագին գրականություն եվրոպական լեզուներով Հայաստանի մասին: Այդ գրքում նա տալիս է հայոց պատմության մի ակնարկ, որ ավաղ մինչև օրս դրա նմանը չեն տվել անգամ մեր պատմագիրները: Սակայն Նանսենի գիրքը հայերի մասին առավելապես կարևոր է ոչ թե Հայաստանի անցյալի նկարագրությամբ, այլ արդի հրատապ խնդիրների քննարկությամբ... Նանսենը նկարագրում է խորհրդային իշխանության շինարար գործունեությունը Հայաստանում և մեղադրում Անտանտին, որը, դրժելով իր բոլոր խոստումները, չի կատարում իր պարտավորությունները հայ ժողովրդի նկատմամբ... Նանսենը, իր կենդանության ժամանակ իսկ, իր գրքով ընդմիջտ հավերժացրել է իր հիշատակը Խորհրդային Հայաստանում»<sup>7</sup>:

<sup>3</sup> «Նոր ուղի», 1929 թ., դ 1, էջ 344:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 347-348:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 349:

<sup>6</sup> «Նոր ուղի», 1930 թ., դ 4-5, էջ 46:

<sup>7</sup> «Նոր ուղի», 1930 թ., դ 4-5, էջ 48:



Հողվածը ավարտվում է այդ ամենը «մենք երբեք չենք մոռանա» երախտագիտական խոսքով: Եվ, իրոք, այդպես ու միայն այդպես...

Հանդեսի նույն համարում զետեղված են երկու հատված («Շիրկա-նալի բացումը», «Հայկական հարցն ու Անտանտան» -- վերնագրերը խմբագրությանն են) Նանսենի գրքից (գերմաներեն հրատարակությունից):

Ֆ. Նանսենի գրքի ֆրանսերեն թարգմանության առթիվ հատուկ հաղորդում արեց Լ. Բաշալյանը՝ Փարիզում հրատարակվող «Ապագա» թերթում: Նա ամենից առաջ նշեց, որ այդ գիրքը նորվեգերենից անմիջապես թարգմանվեց անգլերեն ու գերմաներեն, իսկ այժմ նաև ֆրանսերեն, ընդ որում, հեղինակը «որոշած է, որ գրքի վաճառումն գոյանալիք բոլոր հասույթը երթա որբերու և գաղթականներու համար»<sup>10</sup>: Այնուհետև նշվում է, որ Նանսենի գիրքը սեպտեմբերին ուղարկվել է ժնև՝ Ազգերի լիգայի բոլոր պատվիրակներին (ավելի քան 210 հոգու), ինչպես նաև պետական այլ գործիչների, բոլոր մեծ գրադարաններին, կարևոր լրագրերին ու հանդեսներին: Դրա նպատակն էր ցույց տալ ռեալ իրականությունը և ստեղծել միջազգային բարենպաստ հասարակական կարծիք հայ դատի ու գաղթականների վերաբերյալ, ազդել Արևմուտքի պետական մարդկանց «խղճի» վրա, բայց նրանք մնացին անդրդվելի:

Մխիթարյանների «Բազմավեպ»-ում տպագրվեց խմբագրական հոդված Նանսենի գրքի ֆրանսերեն թարգմանության առթիվ և ընդգծվեց դրա ճանաչողական կարևոր նշանակությունը. «Գրքին ամենահետաքրքրական մասը ուղևորության ներկայացումն է Հայ հանրապետության հողամասին մեջ: Նանսեն տնտեսական ու երկրագործական տեսակետեն զատ, ամբողջ երկիրը՝ ուր պտտած է, կքննե մարդաբանական, ազգագրական, գեղարվեստական դիտումով. տեղերու նկարագրությունը կընե, տիպարներ կնշմարե, բարքեր ու սովորույթներ վեր կհանե, կգբադի միանգամայն արվեստի հին գործերու նկարագրությամբ, կրթական հաստատությանց տեսությամբ: Օտարե մը ներկայացված նոր Հայաստանի արդար պատկերն է, որ անհրաժեշտ է տեսնել՝ ճիշտ գաղափար կազմելու համար մեր երկրին կացության»<sup>11</sup>:

Ֆ. Նանսենի Հայաստանին նվիրված գրքի նույն ֆրանսերեն հրատարակության առթիվ մատենախոսություն տպագրվեց նաև «Միոն» ամսագրում: Հեղինակը Բ. Ե.-ն (Բաբգեն Եպիսկոպոսը) բևեռախույզ Նանսենին անվանում է նաև «հայախույզ» և դրվատում նրա հայանպաստ գործունեությունը: Նա նշում է, որ Նանսենը հայ գաղթականների գործով մեկնեց Հայաստան, «ուր կառավարությունը ամեն ղյուրություն

ընծայեց իրեն առաջադրված հետազոտություններն ու ուսումնասիրություններն ընելու համար»<sup>10</sup>: Դրանց արդյունքները քննարկվեցին Ազգերի լիգայում: Նույն հեղինակի թարգմանությամբ (ֆրանսերենից) «Միոն» ամսագրի դ 5-ում լույս է տեսնում մի հատված Նանսենի գրքից («Հայ ազգին մարդաբանությունը և ծագումը»):

\* \* \*

Ֆ. Նանսենի մահվան լուրը ցնցեց ամբողջ աշխարհը: Եվ դա հասկանալի է, քանզի նա համարվում էր «աշխարհի քաղաքացի» ու «աշխարհի խիղճը»: Ռ. Ռոլանը Նանսենին բնութագրեց որպես «մեր ժամանակի միակ եվրոպական հերոս», իսկ Կ. Օստեցկին նրան անվանեց «մարդկության բարի հանճար»<sup>11</sup>, որին դիմում էին աշխարհի բոլոր ծայրերից և ամենաբազմապիսի հարցերով: Ահա դրանցից մեկը. մեծարգո պ. Նանսեն, խնդրում ենք ասել, թե ինչպես օգնել թոշուններին, երբ արդի պայմաններում մթնոլորտն անընդհատ ապականվում է... Իսկ այժմ այլևս չկա նա՝ անսահման սիրելի **մարդ-գիտնականն** ու **մարդ-գործիչը** բոլոր երկրների ու ժողովուրդների համար: Ժամանակակիցներից մեկը դիպուկ կերպով ասել է, որ «եթե Նանսենին ծնեց Նորվեգիան, ապա նրան կորցրեց ամբողջ աշխարհը»: Իհարկե, կորցրեց միայն ֆիզիկապես, քանզի նրա գործն անմահ է. չէ՞ որ **մեծերը գոյության մի տարեթիվ ունեն-ծննդյան**»:

<sup>10</sup> «Ապագա», 20.10.1928:

<sup>11</sup> «Բազմավեպ», 1928 թ., դ 9, էջ 320:

<sup>10</sup> «Միոն» (Երուսաղեմ), 1929 թ., դ 4, էջ 122:

<sup>11</sup> Տե՛ս Лив Хансен-Хейер, Книга об отце, стр. 327.

Կարլ Օստեցկի (1887-1938) -- գերմանացի հայտնի դեմոկրատ, որը 1936 թվականին արժանացավ Խաղաղության Նոբելյան մրցանակի և դարձավ ֆաշիստական հալածանքների զոհը: Հենրիխ Մաննը նրան անվանել է «եվրոպական խղճի կենդանի մարմնացում»:



Նանսենի հանձնախումբի և կառավարական հանձնաժողովի  
համատեղ նիստը

Memorandum

for the Armenian Government.

In the following I have tried to formulate the various points which were discussed during our meeting today and on which I understand that there is full agreement between the Armenian Government and our Commission.

The commission has examined the different schemes, proposed by the Armenian Government, for new irrigation and drainage in the Ararat Plain and has arrived at the conclusion that all these schemes are workable and on the whole expedient.

It is obvious that for a complete solution of the Armenian refugee problem it would be necessary to realize all these schemes.

Erivan, 1.7.1925.  
Fr. Hoffmann

Հայաստանի կառավարությանը Նանսենի ներկայացրած պլան-  
հուշագիրը





Նամանքի հանձնախումբը



Նամանքի հայկական գյուղում





Մարտիրոս Մարյանի գծանկարը

Photograph  
-héant, photo  
-accompagné

D 20 3179 - 2 -  
SIGNALEMENT

Taille : 1 m 65  
Cheveux : gris  
Sourcils : très fournis  
Front : large  
Yeux : gris  
Nose : nez  
Bouche : ak mouillée  
Barbe : ak mouillée  
Menton : fin  
Visage : ovale  
Teint : blanc  
Signes particuliers :

Accompagné de ... (nombre) - enfant

Nom	Prénoms	Date de naissance

- 1 -  
ANCE  
NANSEN  
N° 00067

Nom du titulaire : TCHOBANIAN  
Prénoms : ARCHAG  
Lieu de naissance : Constantinople  
Date de naissance : 12 Oct 1877  
et de : Constantinople  
Nationalité : Française  
Profession : Homme de lettres  
Domicile : 2 Rue de la Paix  
Domicile antérieur : Paris

Le détenteur du présent titre n'a pu, jusqu'à présent, obtenir un passeport français.

— OBSERVATIONS —



FRUIT OF NANSSEN

TELEGRAMMADRESSE: NANSSEN, LYSAKER

(LYSAKER DEN)

Makhatz-Kala

9th July 1925

Government of Armenia

Dear Mr. President,

Before leaving the region of Caucasus I wish to express to you and to your Government my most sincere thanks for the excellent hospitality and great kindness which you have shown my comrades and myself during our visit to your beautiful country. Through the great facilities you have given us, our stay in Armenia has been very pleasant indeed and interesting in every respect. We have had an excellent opportunity of seeing your country and of studying its great possibilities, and we leave it with the desire that we may have an opportunity of adding our little share towards its development, and thus help to create a happy and prosperous future for the Armenian people. Believe me, dear Mr. President,

Armenia and the Armenian people will always have a true friend in  
yours sincerely

Fridtjof Nansen

I also wish to use this opportunity to express my warm thanks for the beautiful souvenirs which I received on the train, and which will always remain dear remembrances of the visit to Armenia in June 1925. Fridtjof Nansen

Նանսենի շնորհակալական նամակը Հայաստանի կառավարությանը

An

Herrn Ereingian

in dankbarer Erinnerung  
aller Reichenswürdigkeit während  
unsers Aufenthalts in Armenien  
und mit herzlichstem Dank für  
seine wertvolle Hilfe in unserer  
Arbeit

Fridtjof Nansen

Lysaker  
Juni 1928

Նանսենի՝ Ա. Երզնկյանին նվիրված գրքի ընծայիչիրը

**ՖԵԼԻՔՍ ԲԱՆՉԻՆՅԱՆ**

**ՀԱՅ ԴԱՏԻ  
ՀԵՆԱՍՅՈՒՆԸ**

Հրատարակչության տնօրեն՝	Գագիկ Սուքիասյան
Խմբագիր՝	Էդուարդ Հովսեփյան
Գեղարվեստական խմբագիր՝	Սուրեն Մանուսաջյան
Համակարգչային ձևավորումը՝	Վահրամ Մանուսաջյան
Վերստուգող սրբագրիչ՝	Հասմիկ Շահինյան

«ԳԱՍՊՐԻՆՏ» հրատարակչություն  
375010 ք. Երևան, Փ. Բուզանդ 1/3  
Հեռ.՝ 54 12 87  
Ֆաքս՝ 54 12 89